ՀԱԶԱՐԱՄՅԱԿԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐ. ԱՌԱՋԸՆԹԱՑԻ ԱԶԳԱՅԻՆ ԶԵԿՈՒՅՑ

ՀԱՅԱՍՏԱՆ 2015

1 ԾԱՅՐԱՀԵՂ ԱՂՔԱՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՈՎԻ ՎԵՐՊՅՈՒՐ

2 ՀԱՄԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԱՐՐԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ

3 ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ՀԱՎԱՍԱՐՈՒԹՅԱՆ ԽԹԱՆՈՒՄ ԵՎ ԿՆՈՋՆԵՐԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆԴԼԱՅՆՈՒՄ

4 ԵՐԵԽԱՆԵՐԻ ՄԱՀԱՑՈՒԹՅԱՆ ՆՎԱԶԵՑՈՒՄ

5 ՄԱՅՐԱԿԱՆ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ

6 ՊԱՅՔԱՐ ՄԻՎ/ՁԻՎՀ-Ի, ՄԱԼԱՐԻԱՅԻ ԵՎ ԱՅԼ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԵՄ

7 ԷՐՑԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԿԱՅՈՒՆ ՊԱՀՊԱՆՈՒՄ

8 ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԶԵՎԱՎՈՐՈՒՄ

United Nations
ARMENIA

Երևան, Հայաստան | Հոկտեմբեր, 2015թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՁԱՐԱՄՅԱԿԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐ. ԱՌԱՁԸՆԹԱՑԻ ԱԶԳԱՅԻՆ ԶԵԿՈՒՅՑ

ՀԱՅԱՍՏԱՆ 2015

Երևան, Հայաստան | Հոկտեմբեր, 2015թ.

Հազարամյակի զարգացման նպատակների Առաջընթացի ազգային զեկույցը
պատրաստվել է «Ի-Վի Քոնսալթինգ» ընկերության կողմից՝ Հայաստանում
Միավորված ազգերի կազմակերպության գրասենյակի ուղղորդմամբ:

www.evconsulting.com
www.ev.am

ԱՌԱՋԱԲԱՆ

2015 թվականին Միավորված ազգերի կազմակերպության անդամ երկրներն ամփոփեցին Հազարամյակի զարգացման նպատակները, որոնք ուղղված են աշխարհում մարդկանց կյանքի որակի և կենսապահովման պայմանների բարելավմանը:

Չնայած 2009 թվականի համաշխարհային տնտեսական ճգնաժամին, որը զգալի ազդեցություն ունեցավ Հայաստանի տնտեսության վրա, ՀՀ կառավարությունն առկա սահմանափակ միջոցներով կարողացավ շոշափելի արդյունքների հասնել Հազարամյակի զարգացման նպատակների իրագործման առումով:

Հանրության ուշադրությանը ներկայացվող «Հազարամյակի զարգացման նպատակների առաջընթացի զեկույցը» ցույց է տալիս, որ միջազգայնորեն ընդունված չափորոշիչների համաձայն՝ որոշ նպատակների մասով՝ մանկական և մայրական մահացություն, կրթության մատչելիություն և մաքուր ջրի աղբյուրներին հասանելիություն, Հայաստանում արձանագրվել է էական առաջընթաց: ՀՀ կառավարությունը նաև մասնակիորեն իրագործել է մյուս նպատակները, այդ թվում՝ աղքատության կրճատումն ու բնապահպանության կայունությունը:

Ներկայացված արդյունքները խթանում են ՀՀ կառավարության ջանքերը, որոնք ուղղված են առկա միջոցների առավել արդյունավետ օգտագործմանը, այս անգամ արդեն՝ «Վերափոխենք մեր աշխարհը. օրակարգ 2030» ՄԱԿ-ի նոր օրակարգում ընդգրկված 17 նպատակների իրականացման գործում:

Մենք հետևողական քայլեր կձեռնարկենք նոր օրակարգի նպատակներն ազգայնացնելու և լիարժեքորեն իրականացնելու համար՝ դրանով իսկ մեր ներդրումը բերելով երկրագնդի և դրա բնակչության կայուն զարգացման համընդհանուր առաջընթացում:

Հովիկ Աբրահամյան

Հայաստանի Հանրապետության վարչապետ

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ

ԱԱԻ	Առողջապահության ազգային ինստիտուտ
ԱԵԿԱ	Արևելյան Եվրոպա և Կենտրոնական Ասիա
ԱՀԿ	Առողջապահության համաշխարհային կազմակերպություն
ԱՄՀ	Արժույթի միջազգային հիմնադրամ
ԱՄՆ դոլար	Ամերիկայի Միացյալ Նահանգների դոլար
ԱՊՀ	Անկախ պետությունների համագործակցություն
ԲԱՌԽ	Բնակչության առավել ռիսկային խմբեր
ԳՀ	Գնողունակության համարժեքություն
ԵՄ	Եվրոպական միություն
ԵՏՄ	Եվրասիական տնտեսական միություն
Էքյու	Եվրոպական արժութային միավոր
ԺԱՀ	Ժողովրդագրական և առողջապահության հարցերի հետազոտություն
ԿԶՆ	Կայուն զարգացման նպատակ
ԿԿԽ	Կարմրուկ, կարմրախտ, խոզուկ
ՀԱԲԴԲԹ	Հղիության արհեստական ընդհատման դեպքերի ընդհանուր թիվ
ՀԶՆ	Հազարամյակի զարգացման նպատակ
ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
ՀՀ ԱՆ	Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն
ՀՀ ԱՎԾ	Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայություն
ՀՀ դրամ	Հայաստանի Հանրապետության դրամ
ՀՀ կառավարություն	Հայաստանի Հանրապետության կառավարություն
ՀՄՄ	Հեռահաղորդակցության միջազգային միություն
ՀՆԱ	Համախառն ներքին արդյունք
ՁԻԱՀ	Ձեռքբերովի իմունային անբավարարության համախտանիշ
ՄԱԲՀ	ՄԱԿ-ի բնակչության հիմնադրամ
ՄԵՓԿ	Մորից երեխային փոխանցման կանխարգելում
ՄԻԱՎ	Մարդու իմունային անբավարարության վիրուս
ՇՄՊԳԱԾ	Շրջակա միջավայրի պահպանության գործողությունների ազգային ծրագիր
ՍՃՓՎ	Սեռական ճանապարհով փոխանցվող վարակ
ՍՎԱ	Սեռական և վերարտադրողական առողջություն
ՎԶԵԲ	Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկ
ՏԲ	Տուբերկուլոզ
ՏՀԶԿ	Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպություն
ՏՀՏ	Տեղեկատվության և հաղորդակցման տեխնոլոգիաները

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Ամփոփ ակնարկ 7
2. Տնտեսական համատեքստի ամփոփ բնութագիր 15
3. Հայաստանում ՀԶՆ-ների առաջընթացի մանրամասներ 18
Նպատակ 1. Ծայրահեղ աղքատության և սովի վերացում 19
Նպատակ 2. Համընդհանուր տարրական կրթության ապահովում 30
Նպատակ 3. Գենդերային հավասարության խթանում և կանանց լիազորությունների ընդլայնում 38
Նպատակ 4. Երեխաների մահացության նվազեցում 44
Նպատակ 5. Մայրական առողջության բարելավում 49
Նպատակ 6. Պայքար ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի, մալարիայի և այլ հիվանդությունների դեմ 54
Նպատակ 7. Շրջակա միջավայրի կայուն պահպանում 62
Նպատակ 8. Զարգացման նպատակով համաշխարհային համագործակցության ձևավորում 77
4. ԿԶՆ-ների առաջնահերթությունների սահմանում 83

Շնորհակալական խոսք

Հազարամյակի զարգացման նպատակների Առաջընթացի ազգային զեկույցը պատրաստվել է «Ի-Վի Քոնսալթինգ» ընկերության կողմից՝ Հայաստանում Միավորված ազգերի կազմակերպության գրասենյակի ուղղորդմամբ:

Սույն զեկույցը պատրաստած խորհրդատուների թիմում ընդգրկված են եղել փորձագետներ Գագիկ Գաբրիելյանը (տնտեսական հարցերով փորձագետ, թիմի ղեկավար), Սևակ Հովհաննիսյանը (տնտեսական հարցերով փորձագետ, ծրագրի համակարգող), Ալեն Ամիրխանյանը (շրջակա միջավայրի հարցերով փորձագետ, Հայաստանի ամերիկյան համալսարանի Հակոբեան բնապահպանական կենտրոնի տնօրեն), Հասմիկ Ղուկասյանը (սոցիալական հարցերով փորձագետ) և Լալա Մարգարյանցը (առողջապահության հարցերով փորձագետ):

«Ի-Վի Քոնսալթինգ» ընկերությունը և հեղինակների թիմն իրենց երախտագիտությունն են հայտնում Միավորված ազգերի կազմակերպության հայաստանյան թիմի անդամներին իրենց տրամադրված ուղղորդման, նյութերի, ինչպես նաև արժեքավոր մեկնաբանությունների ու առաջարկությունների համար, մասնավորապես՝ Վարյա Մերուժանյանին (Մշտական համակարգողի գրասենյակի պաշտոնակատար) և Գարիկ Հայրապետյանին (ՄԱԿ-ի բնակչության հիմնադրամի գործադիր ներկայացուցիչ):

«Ի-Վի Քոնսալթինգ» ընկերությունը և հեղինակների թիմը շնորհակալություն են հայտնում նաև բոլոր այն կազմակերպություններին և անհատներին, որոնք մեծ պատրաստակամությամբ տրամադրեցին իրենց ժամանակը, փորձն ու գիտելիքները՝ նշանակալի ներդրում ունենալով այս նախագծում, մասնավորապես՝ ՀՀ արտաքին գործերի նախարարությանը, ՀՀ ազգային վիճակագրական ծառայությանը, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը, ՀՀ առողջապահության նախարարությանը, Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոնին, Տուբերկուլոզի դեմ պայքարի ազգային կենտրոնին, ինչպես նաև Կայուն զարգացման ազգային խորհրդի քարտուղարությանը:

Նշում տվյալների մասին

Գիտակցելով Հազարամյակի զարգացման նպատակների (ՀԶՆ-ներ) կենսագործման համար հուսալի տվյալների կարևորությունը՝ Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայությունը (ՀՀ ԱՎԾ), Հայաստանի Հանրապետության կառավարության (ՀՀ կառավարություն) կողմից ՀԶՆ-ների շրջանակների և ՀԶՆ-ների ազգայնացման հաստատումից անմիջապես հետո, մեկնարկ տվեց ՀԶՆ-ների ցուցանիշների հավաքագրմանը՝ սկսած 2004 թվականից:

Այսպիսով, 2004 թվականից սկսած տվյալներն ամենից ոչ հակասական պաշտոնական տվյալներն են, որոնք կարող են օգտագործվել ՀԶՆ-ների կենսագործման առաջընթացը ու դրանց ներքո սահմանված թիրախների կատարումը ճշգրիտ կերպով արտացոլելու համար: ՀԶՆ-ների մի շարք ցուցանիշների՝ 1990-ից 2003 թվականներն ընկած ժամանակահատվածի պատմական տվյալները կարող են անհայտ լինել, կամ հնարավոր է, որ դրանք հավաքագրված կամ հաշվարկված լինեն այլ մեթոդաբանությամբ: Որոշ դեպքերում այս հանգամանքը կարող է անդրադառնալ մինչև 2004 թվականը և դրանից հետո հավաքագրված տվյալների համադրելիության վրա: Համալիր մոտեցում ցուցաբերելու նկատառումներով և այնքանով, որքանով դա հնարավոր է եղել առկա տվյալների պայմաններում՝ զեկույցում կատարվել է համեմատություն 2004 թվականին նախորդող տարիների հետ (տվյալների համադրելիության մասին համապատասխան նշումներով):

Հարկ է առանձին նշում կատարել աղքատության մակարդակի վերաբերյալ տվյալների առնչությամբ: Հայաստանում Տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջացված հետազոտությունների (ՏՏԿԱՀ) միջոցով աղքատության մակարդակը որոշելիս օգտագործվել է Համաշխարհային բանկի մեթոդաբանությունը: 1996 թվականից ի վեր կիրառվող մեթոդաբանությունը փոփոխության է ենթարկվել երեք անգամ՝ 1998/99, 2004 և 2009 թվականներին: Պատմական տվյալների համադրելիությունն ապահովելու համար ՀՀ ԱՎԾ-ն կրկին անցկացրեց աղքատության մակարդակի հետադարձ և առաջադարձ վերագնահատում՝ հիմնվելով այս մեթոդաբանությունների վրա: Այդուհանդերձ, վերագնահատումը չի եղել համընդգրկուն: 1998-1999 և 2004-2012 թվականների աղքատության մակարդակի տվյալներն ամփոփվել են 2004 թվականի մեթոդաբանությամբ, մինչդեռ 2009 թվականի մեթոդաբանությամբ ամփոփվել են միայն 2004-2013 թվականների տվյալները:

Սույն զեկույցում օգտագործվել են 2004 թվականի մեթոդաբանությամբ 1998-1999 և 2004-2012 թվականների համար ամփոփված տվյալներ, ինչպես նաև 2009 թվականի մեթոդաբանությամբ 2004-2013 թվականների համար ամփոփված տվյալներ:

1. ԱՄՓՈՓ ԱԿՆԱՐԿ

Վերջին տասնամյակում Հայաստանը նախաձեռնել է ինստիտուցիոնալ, տնտեսական և սոցիալական բարեփոխումների լայն շրջանակ, որն ուղղված է եղել Հազարամյակի զարգացման նպատակների (ՀԶՆ-ներ) կենսագործմանը: Ընդհանուր առմամբ ՀԶՆ-ների ներքո Հայաստանը սահմանել և ստանձնել է 16 ազգային թիրախ: ՀԶՆ-ների ազգայնացման գործընթացի շրջանակներում թիրախների կենսագործման կամ իրականացման ընթացքը չափագրելու նպատակով սահմանվել է 65 ցուցանիշ: Որոշ ազգային թիրախներ և ցուցանիշներ տարբերվում են համաշխարհային մակարդակով ընդունված թիրախներից և ցուցանիշներից, սակայն համապատասխանում են դրանց պահանջներին՝ միաժամանակ արտացոլելով երկրում ձևավորված իրողությունները:

Սահմանված 65 ցուցանիշից Հայաստանում արձանագրվել է 22 ցուցանիշի կատարում: Այդուհանդերձ, չկատարված ցուցանիշներից 10-ի ուղղությամբ արձանագրվել է դրական առաջընթաց: Ազգային ցուցանիշների գրեթե կեսը՝ 65 ցուցանիշից 30-ը, Հայաստանում չի կատարվել: Երեք ցուցանիշի ճշգրիտ չափումը դժվար է, քանի որ համապատասխան տվյալները կամ սահմանված հաշվելի չափանիշները բացակայում են:

Սույն բաժնի վերջում (էջ 14) մեկ էջի վրա բերված է ՀԶՆ-ների կատարման միավորների հաշվարկը, որտեղ ամփոփ ներկայացվում են ՀԶՆ-ների գծով Հայաստանի նվաճումները և համապատասխան ցուցանիշները:

Կարևոր է նշել, որ ստանձնած պարտականությունների, ինչպես նաև ՀԶՆ-ների իրականացման բնագավառում երկրի նվաճումների գնահատումը կատարվել է ոչ թե ընդհանրացված եղանակով, այլ՝ յուրաքանչյուր թիրախի ներքո Հայաստանի ստանձնած առանձին ազգային ցուցանիշների իրականացման տեսանկյունից:

Հայաստան, ՀԶՆ-ների արդյունքներ



ՀԶՆ 1. ԾԱՅՐԱՀԵՂ ԱՂՔԱՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՈՎԻ ՎԵՐԱՑՈՒՄ

Ծայրահեղ աղքատության և սովի վերացման ուղղությամբ Հայաստանը կատարել է 1-ին ՀԶՆ-ի ներքո սահմանված ցուցանիշների կեսը, մինչդեռ մյուս կեսը դեռևս ենթակա է կատարման:

Վերջին երկու տասնամյակներում արձանագրվել է ծայրահեղ աղքատության և սովի զգալի կրճատում, այդուհանդերձ, երկրում պահպանվում է աղքատության բարձր մակարդակ: 2004 թվականից ի վեր թերսնված (ծայրահեղ աղքատ) անձանց թիվը նվազել է 1,6 անգամ և 2013 թվականին կազմել է 2,7%: Բայց և այնպես, բնակչության գրեթե մեկ երրորդը շարունակում է մնալ աղքատ: Դրամական արժեքով հաշվարկված՝ 2013 թվականին աղքատների շարքին են դասվել օրական 3,2 ԱՄՆ դոլարից պակաս սպառում ունեցողները, իսկ ծայրահեղ աղքատ են համարվել օրական 1,9 ԱՄՆ դոլարից պակաս սպառում ունեցողները: Անհանգստացնող և ահազանգող նշան է դարձել այն իրողությունը, որ 2000 թվականից ի վեր արձանագրվել է թերսնված և թերաճ մինչև հինգ տարեկան երեխաների տոկոսի կայուն աճ: 2010 թվականին երեխաների գրեթե 5%-ի մոտ արձանագրվել է թերքաշություն, ընդ որում՝ երեխաների 19%-ը եղել է թերաճ: Աղքատության մակարդակը երեխաների շրջանում ավելի բարձր է և գերազանցում է ազգային միջին ցուցանիշը 5,3 տոկոսային կետով՝ 2008 թվականի համեմատ աճելով 25%-ով:

Բոլորի, այդ թվում՝ կանանց և երիտասարդների համար արդյունավետ զբաղվածության և պատշաճ աշխատանքի ապահովման գծով Հայաստանում արձանագրվել են տարբեր արդյունքներ:

2005-ից 2014 թվականներն ընկած ժամանակահատվածում ընդհանուր գործազրկության մակարդակը 31,2%-ից նվազել է մինչև 17,6%, սակայն երկրի աշխատանքային ռեսուրսների գրեթե 40%-ը շարունակում է մնալ տնտեսապես ոչ ակտիվ: Բացի այդ, 25-ից 29 տարեկան երիտասարդ կանանց և տղամարդկանց 40,4%-ը, իսկ 15-ից 24 տարեկանների 37,2%-ը չի սովորում դպրոցում կամ ուսումնական հաստատությունում և ոչ էլ աշխատանք ունի:[1] Ավելին, Հայաստանում զբաղված բնակչության ավելի քան մեկ քառորդը դեռևս աղքատ է, իսկ միջին խավին պատկանող՝ օրական 4 ԱՄՆ դոլարից ավելի սպառում ունեցող աշխատողների մասնաբաժինը կազմում է բնակչության միայն մեկ երրորդը, ինչը վկայում է այն մասին, որ տնտեսության արդյունավետությունը գտնվում է ցածր մակարդակի վրա:

Աղքատներ և ծայրահեղ աղքատներ/թերսնվածներ, %



Օրական 4,3 ԱՄՆ դոլարից ավելի եկամուտ ունեցողներ, %



Մինչև հինգ տարեկան թերքաշ երեխաներ, % (2 ՄԾ պակաս)



1 ՀՀ ԱՎԾ, Աշխատանքի շուկան Հայաստանի Հանրապետությունում, 2014թ. http://www.armstat.am/am/?nid=82&id=1625: ՀՀ ԱՎԾ-ի մեթոդաբանության համաձայն՝ բնակչության աշխատանքային ռեսուրսները կազմում են 15-ից 75 տարեկան անձինք:

ՀԶՆ 2. ՀԱՄԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԱՐՐԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ

Համընդհանուր տարրական կրթության ապահովման գծով Հայաստանը կատարել է սահմանված հինգ ցուցանիշներից մեկը: Ընդհանուր առմամբ, Հայաստանում կրթական համակարգում ընդգրկվածության մասնաբաժինը բարձր է, ընդ որում՝ գրեթե ամբողջ բնակչությունը գրագետ է և ստացել է որոշակի մակարդակի կրթություն: Կրթությունը հավասարապես հասանելի է ինչպես տղաների, այնպես էլ աղջիկների համար, թեև ավագ դպրոցում և բուհերում սովորող աղջիկների տոկոսն ավելի բարձր է: Վերջին տասնամյակում նվազել է բուհերում համախառն ընդգրկվածության ցուցանիշի տարբերությունն աղքատների և ոչ աղքատների միջև: 2005-ից 2013 թվականներն ընկած ժամանակահատվածում աղքատների ընդգրկվածությունը՝ արտահայտված որպես ոչ աղքատ բնակչության տոկոս, 26%-ից աճել է մինչև 51%:

Բայց և այնպես, Հայաստանին չհաջողվեց կատարել ՀԶՆ-ի ներքո ստանձնած բարձր թիրախները, մասնավորապես՝ տարրական և ավագ դպրոցներում ընդգրկվածության մասնաբաժնի և պետական բյուջեից համապատասխան հատկացումների մասով: 2014 թվականին պետական ֆինանսավորման մակարդակը՝ արտահայտված որպես ՀՆԱ-ի մասնաբաժին, կազմեց 2,4%, որը զգալիորեն զիջում է 2000 թվականին արձանագրված ցուցանիշին: Որպես մտահոգիչ միտում կարելի է արձանագրել դպրոցներում և հատկապես ավագ դպրոցներում ընդգրկվածության նվազումը և դուրս մնացած աշակերտների տոկոսի աճը: 2010-2013 թվականներին ավագ դպրոցներում ընդգրկվածության մակարդակը 84,4%-ից իջել է մինչև 72,4%:

Համախառն ընդգրկվածություն դպրոցներում%



Գենդերային հավասարություն՝ աղջիկների համախառն ընդգրկվածություն տղաների համեմատ, 2014թ.



ՀԶՆ 3. ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ՀԱՎԱՍԱՐՈՒԹՅԱՆ ԽԹԱՆՈՒՄ ԵՎ ԿԱՆԱՆՑ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆԴԼԱՅՆՈՒՄ

Գենդերային հավասարության խթանման և կանանց լիազորությունների ընդլայնման գծով Հայաստանն իր առջև դրված թիրախները չի կատարել: Թեև տղամարդիկ և կանայք ունեն կրթություն ստանալու հավասար հնարավորություններ (ընդ որում՝ բարձրագույն կրթության ոլորտում ընդգրկված կանանց թիվն ավելի բարձր է), կանայք դժվարությունների են բախվում բարձր վարձատրվող աշխատատեղեր գտնելու հարցում, հատկապես՝ ոչ գյուղատնտեսական ոլորտում: 2013 թվականին կանանց զբաղվածության մակարդակը կազմել է 46%, իսկ տղամարդկանցը՝ 62%:

Ինչպես վկայում են տվյալները, Հայաստանում կանայք շատ ավելի քիչ են ներգրավված որոշումների կայացում ենթադրող պաշտոններում՝ երկրի տնտեսական, գործարար և քաղաքական կյանքում: Թեև կին խորհրդարանականների թիվը եռապատկվել է, այն դեռևս գտնվում է շատ ցածր մակարդակի վրա (խորհրդարանական տեղերի 11%), ընդ որում՝ կանանց ընդգրկվածությունը տեղական ինքնակառավարման մարմիններում սահմանափակ է (2,1%), իսկ քաղաքային համայնքների և տարածաշրջանային կառավարման մարմիններում կանանց ընդգրկվածությունը գործնականում բացակայում է:

Ոչ գյուղատնտեսական հատվածում վարձու աշխատանք ունեցող կանանց մասնաբաժին, %



Ազգային ժողովում կանանց զբաղեցրած տեղերի մասնաբաժին, %



ՀԶՆ 4. ԵՐԵԽԱՆԵՐԻ ՄԱՀԱՑՈՒԹՅԱՆ ՆՎԱԶԵՑՈՒՄ

Երեխաների մահացության նվազեցման գծով Հայաստանը մոտենում է իր առջև դրված թիրախների կատարմանը (թիրախներից մեկը կատարվել է, իսկ մյուս երկու թիրախով արձանագրվել է զգալի առաջընթաց): Պատվաստումների և մանկական առողջապահության ազգային ծրագրերը նպաստել են երեխաների և մանկական մահացության նվազեցմանը: 2010 թվականից Հայաստանում երեխաների՝ ԿԿԽ պատվաստումների մասնաբաժինը կազմել է 97% և պահպանվել նույն մակարդակի վրա:

Մանկական մահացություն, 1000 կենդանի ծնվածի հաշվով



ԿԿԽ պատվաստումների ընդգրկում, %



ՀԶՆ 5. ՄԱՅՐԱԿԱՆ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ

Մայրական առողջության բարելավման մասով Հայաստանը կատարել է սահմանված վեց ցուցանիշից չորսը: Այս ուղղությամբ արձանագրվել են լավ արդյունքներ այն իմաստով, որ համապատասխան որակավորում ունեցող բուժանձնակազմի կողմից ընդունված ծնունդների մասնաբաժինը կազմել է 100%, ինչպես նաև բարելավվել է նախածննդյան բուժօգնության տրամադրումը:

2004-ից 2014 թվականներն ընկած ժամանակահատվածում արձանագրվել է 100.000 կենդանածնի հաշվով մայրական մահացության ցուցանիշի նվազեցում՝ 26,7-ից մինչև 18,6 դեպք, բայց և այնպես, նշված ցուցանիշը դեռևս չորս անգամ գերազանցում է Եվրոպական Միության միջին ցուցանիշը:

Ընտանիքի պլանավորման ոլորտում դեռևս պահանջվում են զգալի բարելավումներ: Հղիության արհեստական ընդհատման դեպքերի հաճախականությունը նվազել է, սակայն դեռևս շարունակում է մնալ բարձր, ինչը բացասաբար է անդրադառնում պտղաբերության ցուցանիշի վրա:

Մայրական մահացություն 1.000 կենդանածնի հաշվով, 3 տարվա միջին ցուցանիշ



ՀՋՆ 6. ՊԱՅՔԱՐ ՄԻԱՎ/ՁԻԱՀ-Ի, ՄԱԼԱՐԻԱՅԻ ԵՎ ԱՅԼ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԵՄ

ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի, մալարիայի և այլ հիվանդությունների դեմ պայքարի գծով Հայաստանը կատարել է սահմանված վեց ցուցանիշից երեքը, իսկ մնացած ցուցանիշների մասով գրանցվել է առաջընթաց: Այս ուղղությամբ ձեռնարկված գործողություններն արդյունավետ են եղել այն իմաստով, որ 2007 թվականից ի վեր բոլոր գրանցված ՄԻԱՎ վարակակիրներն անհրաժեշտության դեպքում հնարավորություն են ունեցել օգտագործել հակառետրովիրուսային դեղեր, իսկ տուբերկուլոզի հայտնաբերված բոլոր դեպքերը բուժվել են անմիջական հսկողությամբ իրականացվող կարճատև բուժման կուրսի շրջանակներում: Առողջապահության համաշխարհային կազմակերպության կողմից Հայաստանը հավաստագրվել է որպես մալարիայից զերծ տարածք, ընդ որում՝ 2006 թվականից ի վեր տեղական մակարդակով չի արձանագրվել մալարիայի ոչ մի նոր դեպք:

Բայց և այնպես, տուբերկուլոզի դեպքերի մասով համապատասխան թիրախը չի կատարվել: Բացի այդ, անհանգստության տեղիք է տալիս ՄԻԱՎ վարակակիրների թվի կայուն աճը, ինչպես նաև այն հանգամանքը, որ 15-ից 24 տարեկան տարիքային խումբը ներկայացնող բնակչության շրջանում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի վերաբերյալ գիտելիքների մակարդակը ցածր է: 2014 թվականին նման գիտելիքներ ուներ բնակչության ընդամենը 22,4%-ը:

ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի գրանցված դեպքեր 100.000 բնակչի հաշվով



Տուբերկուլոզի տարածում 100.000 բնակչի հաշվով



ՀՋՆ 7. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԿԱՅՈՒՆ ՊԱՀՊԱՆՈՒՄ

Շրջակա միջավայրի կայուն պահպանման գծով Հայաստանը կատարել է սահմանված տասնվեց ցուցանիշից յոթը, իսկ ևս երկու ցուցանիշի մասով գրանցվել է առաջընթաց: Այս ուղղությամբ ձեռնարկված միջոցառումները լավ արդյունքներ են տվել հետևյալ ոլորտներում՝ (i) հատուկ պահպանվող տարածքների մակերեսի աճ (մինչև ընդհանուր տարածքի 13%-ը), (ii) Սևանա լճի մակարդակի բարձրացում ավելի քան չորս մետրով և լճի ջրային ռեսուրսների մաքրության բարելավում, (iii) կեղտաջրերի մաքրման կայանների կառուցում. 2012-2015 թվականներին կառուցվել է վեց կայան, (iv) քաղաքային և գյուղական շրջանների բնակչության ջրամատակարարման բարելավում. 17-ժամյա ջրամատակարարում Երևանից դուրս գտնվող քաղաքային և գյուղական շրջանների տնային տնտեսությունների համար (2005 թվականին այդ ցուցանիշը կազմել է 7,4 ժամ):

Անտառածածկ տարածքներ, % 2015 թ. թիրախ >11 %



Կոշտ վառելիք օգտագործող բնակչության մասնաբաժին, %



Սևանա լճի մակարդակ, մետր



Այդուհանդերձ, 2005-ից 2013 թվականներն ընկած ժամանակահատվածում, այն է՝ ընդամենը 8 տարում, Հայաստանի անտառային ծածկույթը նվազել է՝ երկրի մակերեսի 11,2%-ից հասնելով 9,7%-ի: Այս միտումն անհանգստության տեղիք է տալիս, իսկ դրա հակադարձման համար պահանջվում են արագ և վճռական քայլեր: Թեև կոշտ վառելիք (աղբ և աթար) օգտագործող բնակչության տոկոսը 2013 թվականին կազմել է 1996 թվականի ցուցանիշի մոտավորապես կեսը, բայց և այնպես, այն հեռու է ՀԶՆ-ների ազգային գործընթացի շրջանակներում համապատասխան թիրախի ներքո սահմանված 5%-ից: Ավելին, 2007 թվականից ի վեր գրանցվել է այդ թվի աճ: Վթարային կացարաններում ապրող քաղաքաբնակ տնային տնտեսությունների նվազեցման, ինչպես նաև կոյուղու ծառայությունների հասանելիության բարելավման գծով սահմանված թիրախները նույնպես չեն կատարվել: Վերջին տասնամյակում արձանագրվել է կոյուղու հասանելիության չափավոր աճ. բնակչության 32%-ը դեռևս չունի բարեկարգված կոյուղուց օգտվելու հնարավորություն:

ՀԶՆ 8. ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՎՈՐՈՒՄ

Համաշխարհային համագործակցության ձևավորման գծով Հայաստանը կատարել է սահմանված տասներկու ցուցանիշից երկուսը, իսկ ևս երկու ցուցանիշի մասով գրանցվել է զգալի առաջընթաց: Հայաստանը կատարել է իր առջև դրված թիրախները՝ ապահովելով տեղեկատվության և հաղորդակցման տեխնոլոգիաների հասանելիությունը համակարգիչների օգտագործման, բջջային հեռախոսների ծառայություններին բաժանորդագրության և համացանցի օգտագործման մասով:

ՏՀՏ օգտագործում, 100 բնակչի հաշվով



Այդուհանդերձ, Հայաստանին չի հաջողվել կատարել իր առջև դրված ցուցանիշներից ութը, որոնք վերաբերում են մամուլի ազատությանը, կառավարության արդյունավետությանն ու հաշվետվողականությանը, կարգավորման որակին և օրենքի գերակայությանը, կոռուպցիայի վերահսկողությանն ու ընկալմանը: Բոլոր նշված ցուցանիշներով գրանցվել է դանդաղ առաջընթաց, չնայած այն ինստիտուցիոնալ և իրավական բարեփոխումներին, որոնք Կառավարությունը ձեռնարկել է վերջին տասնամյակում, և որոնք ուղղված են եղել կառավարման, քաղաքական իրավունքների և պատասխանատվության, ինչպես նաև մարդու իրավունքների այնպիսի մակարդակի ապահովմանը, որը կնպաստի երկրի կայուն զարգացմանը:

ՀԱԶԱՐԱՄՅԱԿԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԻՑ ԴԵՊԻ ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐ

2015 թվականը Հազարամյակի զարգացման օրակարգի եզրափակիչ տարին է: Նպատակ ունենալով խթանել ՀԶՆ-ների իրականացումը և ապահովել զարգացման ուղղությամբ ամբողջ աշխարհում ձեռնարկվող ջանքերի շարունակականությունն ու կայունությունը՝ Միավորված ազգերի կազմակերպության անդամ պետությունները 2015 թվականի սեպտեմբերի 25-ից 27-ը Նյու Յորքի ՄԱԿ-ի գլխավոր գրասենյակում ընդունեցին հռչակագիր, որով սահմանվեց նոր օրակարգ՝ Կայուն զարգացման 2030 թվականի օրակարգը: Հռչակագրում ամրագրված է տասնյոթ Կայուն զարգացման նպատակ (ԿԶՆ), որոնք կոչված են փոխարինել ութ ՀԶՆ-ներին և հանդես գալ որպես վերջիններիս շարունակություն:

«Հետ-2015» զարգացման օրակարգի ձևավորման համատեքստում 2013 թվականին ՄԱԿ-ի հայաստանյան թիմը, համագործակցելով ՀՀ կառավարության հետ, ձևավորեց «Հետ-2015» զարգացման հարցերով հանձնախումբ, որի համանախագահներ նշանակվեցին ՀՀ տարածքային կառավարման առաջին փոխնախարարը և ՄԱԲՀ-ի ներկայացուցչի տեղակալը: Հանձնախումբը նպատակ ուներ սահմանել առաջիկա համաշխարհային կայուն զարգացման օրակարգի առաջնահերթությունները: Առաջնահերթությունների սահմանման համար օգտագործվող մասնակցային գործընթացը, որը ենթադրում է հանրային քննարկումների անցկացում, էական նշանակություն ունի ԿԶՆ-ների և դրանց կենսագործման մեխանիզմների վերաբերյալ բոլոր շահառուների տեսանկյունն արտացոլելու և հասարակության մեջ համընդհանուր համաձայնության գալու առումով: Բացի այդ, Կայուն զարգացման ազգային խորհուրդը, համագործակցելով միջազգային և ազգային կազմակերպությունների հետ, պատրաստել է «Ռիո+20» Ազգային գնահատման զեկույցը (2012թ.) և «Ռիո+20» Ռազմավարական ծրագիրը (2015թ.), որոնցում առաջարկվում են հայեցակարգեր և միջոցառումների ծրագրեր կայուն զարգացման հիմնական ուղղություններով: Նման մասնակցային գործընթացի միջոցով վեր հանված մարտահրավերներից շատերը համապատասխանում են ՀՀ կառավարության 2014-2025 թվականների համար նախատեսված Հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագրին:

Սույն զեկույցում ներկայացվում են նախնական առաջարկություններ ԿԶՆ-ների առաջնահերթությունների սահմանման վերաբերյալ՝ հիմք ընդունելով շահառուների քննարկումները, ՀԶՆ-ների մասով արձանագրված առաջընթացի վերլուծությունը, ՀՀ կառավարության ռազմավարական փաստաթղթերում սահմանված առաջնահերթությունները, ինչպես նաև Հայաստանում տիրող սոցիալական և տնտեսական իրականությունը:

Ներկայացված առաջարկությունների մշակման համար սույն զեկույցում օգտագործվում է հետևյալ մոտեցումը. (i) հրատապ սոցիալական, բնապահպանական և այլ հարցերին անդրադառնալուն զուգահեռ՝ խիստ կարևոր է պայքարել նման խնդիրների բուն պատճառների դեմ, (ii) երկրի կարողություններն ամրապնդելու և դրված նպատակների իրագործմանը նպաստելու համար խիստ կարևոր է ի հայտ բերել առանցքային խոչընդոտները և հաղթահարել դրանք: Հայաստանի համար առանցքային խոչընդոտներ են հանդիսանում տնտեսական և սոցիալական ծրագրերի համար հատկացվող ֆինանսավորման մակարդակը, կառավարման արդյունավետությունն ու կարողությունները, մարդկային կապիտալի կարողությունը, ինչպես նաև բնակչության շրջանում տնտեսական և սոցիալական գաղափարների և նախաձեռնությունների կենսագործման համար անհրաժեշտ գիտելիքներն ու հմտությունները: Տնտեսական և սոցիալական ծրագրերի համար ֆինանսական միջոցների ապահովման հարցում էական նշանակություն ունի հզոր տնտեսության առկայությունը: Կառավարության և լայն հանրության առջև ծառացած մարտահրավերն է կառուցել հզոր և դիմակայուն տնտեսություն՝ միաժամանակ շարունակելով քաղաքական և ինստիտուցիոնալ այն բարեփոխումները, որոնք անհրաժեշտ են վերականգնման և երկարաժամկետ զարգացման համար:

Առաջարկվող առաջնահերթ ոլորտներից են՝

1. աճող տնտեսության ապահովումը կամ աճի միտված տնտեսության ապահովումը,
2. մարդկային կապիտալի զարգացումը,
3. կառավարման բարելավումը (կառավարման համակարգի ինստիտուցիոնալ արդիականացում),
4. գենդերային հավասարությունը,
5. առողջապահությունը,
6. կայուն զարգացումը (շրջակա միջավայրի ավելի լավ պաշտպանություն):

ՀԶՆ-ՆԵՐԻ ԱՌԱՋԸՆԹԱՑԻ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՀԱՇՎԱՐԿ

(վանդակները ցույց են տալիս ցուցանիշների թիվը՝ 1 վանդակ = մեկ ցուցանիշ)



ՊԱՅՄ. ՆՇԱՆ	Կատարված թիրախ	Լավ առաջխաղացում, այն է՝ թիրախը չի իրականացվել, սակայն դրա գծով արձանագրվել է լավ առաջխաղացում, և այն իրատեսաբար կարելի է կատարել 1-ից 2 տարում	Չկատարված թիրախ	? տվյալները բացակայում են կամ հետևողական չեն, կամ էլ համապատասխան ցուցանիշը չի սահմանվել

2. ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏԻ ԱՄՓՈՓ ԲՆՈՒԹԱԳԻՐ

Վերջին տասնամյակում Հայաստանի տնտեսական և սոցիալական կյանքի վրա մեծ ազդեցություն են գործել երեք արտաքին գործոններ և իրադարձություններ. դրանք են՝

- 2008 թվականի համաշխարհային ֆինանսական ճգնաժամը,
- Հայաստանի հիմնական առևտրային գործընկեր և արտագնա աշխատանքի հիմնական ուղղություն հանդիսացող Ռուսաստանի դեմ տնտեսական պատժամիջոցները և դրանց հաջորդած տնտեսական անկումը,
- Հայաստանի անդամակցումը Եվրասիական տնտեսական միությանը (ԵՏՄ), որը կոչված է նոր հեռանկարներ ստեղծել առևտրային և տնտեսական զարգացման համար:

2008 թվականի համաշխարհային ֆինանսական ճգնաժամը զգալի հետևանքներ թողեց Հայաստանի տնտեսական և սոցիալական կյանքի վրա: Ճգնաժամից առաջ յոթ տարի անընդմեջ արձանագրված երկնիշ տնտեսական աճին հաջորդեց 2008 թվականի 6,9% տնտեսական աճը և 2009 թվականի տնտեսական անկումը, որը կազմեց 14,1%: Երկիրը հայտնվեց միաժամանակ վրա հասած երեք ցնցող հարվածների տակ՝ արտահանման պահանջարկի կրճատում, արտահանվող ապրանքների գների անկում, տրանսֆերտների և կապիտալի մասնավոր հոսքերի կտրուկ նվազում:

Արտահանման ու տնտեսական աճի անկումը սկսվեց 2008 թվականի վերջին եռամսյակում: 2009 թվականին գրանցվեց ՀՆԱ-ի կրճատում 14%-ով, ինչը տնտեսությունում առաջացրեց զգալի անկում: Արդյունքում, 2009 թվականին կրճատվեցին բյուջետային եկամուտները, իսկ աղքատությունն ու սոցիալական խոցելիությունը կտրուկ աճեցին: Արտագնա աշխատողների (հիմնականում Ռուսաստանից) մասնավոր տրանսֆերտները, որոնք կարևոր դեր են խաղում Հայաստանի տնտեսության համար, հանդես գալով որպես եկամտի խոշոր աղբյուր և սպառման խթան, 2009 թվականին կրճատվեցին շուրջ 25%-ով: Ֆինանսական ճգնաժամը մեծապես անդրադարձավ գյուղական և քաղաքային շրջաններում գրանցված աղքատության մակարդակի վրա:

2013 և 2014 թվականներին արձանագրված 3,3% և 3,5% աճի բավականին համեստ ցուցանիշներից հետո 2015 թվականին ակնկալվում է հետագա, թեպետև չափավոր, աճ՝ հաշվի առնելով շինարարության ոլորտում վերջին 6 տարիներին արձանագրված անկումը (2015 թվականի առաջին կիսամյակի վիճակագրական տվյալներով շինարարության ոլորտում դիտվում է կայունացման միտում), լայն սպառման ապրանքների գների նվազումը և Ռուսաստանում տնտեսական աճի դանդաղեցումը: Պետական բյուջեի ձևավորման շրջանակներում Կառավարության՝ 2015 թվականի տնտեսական աճի կանխատեսումը կազմում է 4,1%,[2] թեև միջազգային կազմակերպությունների կանխատեսումներն ավելի զուսպ են: Ըստ Համաշխարհային բանկի կանխատեսումների՝ 2015 թվականին տնտեսական աճը Հայաստանում կկազմի 0,8%,[3] Արժույթի միջազգային հիմնադրամի կանխատեսումներով՝ գրանցվելու է կա՛մ զրոյական, կա՛մ շատ չափավոր[4] աճ, մինչդեռ «Economist Intelligence Unit» կազմակերպության կանխատեսումներով՝ աճը կազմելու է 1,5%:[5]

2013 թվականին առևտրային շրջանառությունը Հայաստանի և իր առաջատար առևտրային և տնտեսական գործընկեր Ռուսաստանի միջև ընդհանուր առմամբ հասավ 1 միլիարդ 445,3 միլիոն ԱՄՆ դոլարի, ինչը կազմում էր 8,1% աճ: Հայաստանի արտահանումը Ռուսաստան աճեց 20%-ով: 2014 և 2015 թվականներին հայ-ռուսական առևտրային և տնտեսական հարաբերությունները զարգանում էին Ռուսաստանի դեմ ուղղված պատժամիջոցների, ինչպես նաև ռուսական ռուբլու արժեզրկման պայմաններում: Այդուհանդերձ, Եվրասիական տնտեսական միությունը, որը սկսեց գործել 2015 թվականի հունվարից (ԵՏՄ-ի պայմանագրի համաձայն) կոչված է վերացնել արգելքները՝ նպաստելով անդամ պետությունների միջև փոխշահավետ տնտեսական համագործակցությանը, այդ թվում՝ հայ-ռուսական առևտրային և տնտե-

2 Աղբյուր՝ ՀՀ կառավարության 2015թ. բյուջետային ուղերձ, այստեղ՝ http://www.minfin.am/index.php?cat=72&lang=1
3 http://www.worldbank.org/en/publication/global-economic-prospects/regional-outlooks/Global-Economic-Prospects-June-2015-Europe-and-Central-Asia-analysis#2
4 Հայաստան կատարած այցելության ավարտին ԱՄՀ-ի տնօրեն Մասուդ Ահմեդի հայտարարությունը, հունիսի 30, 2015թ.: http://www.imf.org/external/np/sec/pr/2015/pr15311.htm
5 http://country.eiu.com/armenia

սական հարաբերությունների մասով:

Այսպիսով, 2015 թվականի հունվար և հուլիս ամիսներին արտաքին առևտրի ծավալները կրճատվեցին 19,9%-ով, իսկ ներմուծման կրճատման պատճառով առևտրային հաշվեկշիռը բարելավվեց 26,7%-ով, ընդ որում՝ արտահանման մակարդակը 2014 թվականի համեմատ մնաց անփոփոխ, ինչի հիմքում ընկած էր Ռուսաստանում և Եվրոպական միությունում պահանջարկի նվազման հանգամանքը: Եվրոպական միություն արտահանման մակարդակը նվազեց 3,2%-ով, իսկ այնտեղից ներմուծման մակարդակը կրճատվեց 35,4%-ով:[6] Տնտեսական աճի դանդաղող ընթացքը և Ռուսաստանից դրամական փոխանցումների նվազեցումը սահմանափակեցին ներմուծվող ապրանքների նկատմամբ պահանջարկը: 2015 թվականի հունվարից հունիս ամիսներն ընկած ժամանակահատվածում Ռուսաստանի հետ առևտրաշրջանառությունը նվազեց մոտ 15%-ով, ինչը պայմանավորված էր 35%-ով արտահանման և 12,6%-ով ներմուծման կրճատմամբ: 2015 թվականի առաջին կիսամյակում 35,7%-ով նվազեց զուտ մասնավոր տրանսֆերտների ծավալը (տարեկան կտրվածքով), ինչը պայմանավորված էր Ռուսաստանից դրամական փոխանցումների կրճատմամբ:

Այսպիսի տնտեսական համատեքստում Կառավարությունն իրականացրել է հասարակության բարեկեցությանն ու շրջակա միջավայրի բարելավմանն ուղղված լայնածավալ համալիր սոցիալական և բնապահպանական ծրագրեր: Հայաստանի սոցիալական և բնապահպանական կյանքի տարբեր բնագավառները քննարկվում են 3-րդ բաժնում՝ ներառելով հետևյալ հիմնական ոլորտները՝

- սոցիալական ապահովության ցանցի զարգացումը,
- պայքարն աղքատության դեմ,
- առողջապահությունը (այդ թվում՝ մոր և մանկան առողջություն, ինչպես նաև պայքար ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի, տուբերկուլոզի և այլ հիվանդությունների դեմ),
- կրթությունը (այդ թվում՝ եռաստիճան 12-ամյա հանրակրթական համակարգը, ինչպես նաև մասնակցությունը Բոլոնյան գործընթացին),
- շրջակա միջավայրի պաշտպանությունը (այդ թվում՝ Սևանա լճի պաշտպանությունը, պահպանված տարածքների ընդլայնումը),
- կենսապայմանների բարելավումը և այնպիսի կոմունալ ծառայությունների հասանելիությունը, ինչպիսիք են՝ ջրամատակարարումը, կոյուղին և գազամատակարարումը,
- գենդերային հավասարության խթանումը,
- մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանությունը:

2008 և 2014 թվականների տնտեսական անկումը մեծապես անդրադարձել է երկրի սոցիալական կյանքի, ինչպես նաև սոցիալական ծրագրերի համար հատկացվող միջոցների ծավալների վրա: Օրինակ՝ աղքատության մակարդակը, որը կայուն կերպով նվազում էր ճգնաժամից առաջ, 2008 թվականից հետո վատթարացավ, իսկ 2013-ին աճեց 28%-ից մինչև 32%: Նմանապես, գործազրկության մակարդակը, որը կայուն նվազում էր, 2008 թվականից ի վեր սկսել է տատանվել՝ մերթ բարձրանալով, մերթ նվազելով: 2014 թվականին գրանցվել է գործազրկության ավելի բարձր մակարդակ, քան 2008 թվականին (17,6%՝ 16,4%-ի փոխարեն):

Միջնաժամկետ հեռանկարում Կառավարության առջև ծառացած հիմնական մարտահրավերը տնտեսության ամրապնդումն է, արտաքին ցնցումների նկատմամբ դրա դիմակայունության բարձրացումը, ինչպես նաև զարգացման նոր հնարավորությունների ստեղծումը: Հզոր տնտեսություն կառուցելու համար խիստ կարևոր է, որ տնտեսական քաղաքականությունն ու ծրագրերն ուղեկցվեն այնպիսի բարեփոխումներով, որոնք կոչված կլինեն ապահովել՝ շուկայում արդար մրցակցություն, գործարար հնարավորությունների ձևավորման և բիզնեսի զարգացման խթաններ, սոցիալական և տնտեսական իրավունքների պաշտպանություն, մարդկային կապիտալի զարգացում, քաղաքացիական հասարակության ամրապնդում, կարգավորման որակի բարելավում, ինչպես նաև օրենքի գերակայություն և կոռուպցիայի նվազեցում:

6 ՀՀ ԱՎԾ, Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը, հունվար-հուլիս 2015թ., http://www.armstat.am/file/article/sv_07_15a_411.pdf

Տնտեսական արդյունքներ, 2000-2014 թթ.



ՀՆԱ մեկ շնչի հաշվով, ընթացիկ միջազգային ԳՀ, ԱՄՆ դոլար



Գործազրկություն, իրական աշխատավարձեր և մասնավոր տրանսֆերտներ



Աղբյուրներ՝ Համաշխարհային զարգացման ցուցանիշներ, Համաշխարհային բանկ և ՀՀ ԱՎԾ, Տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջացված հետազոտություն 2008-2013 թթ., Աշխատուժի հետազոտություն 2014թ.:

3. ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՀԱՋԱՐԱՄՅԱԿԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ԱՌԱՋԸՆԹԱՑԻ ՄԱՆՐԱՄԱՍՆԵՐ

Սույն բաժնում ներկայացված է Հայաստանում ՀԶՆ-ների իրագործման ուղղությամբ արձանագրված առաջընթացի մանրամասն քննարկումը: Ուսումնասիրված և գնահատված է ազգային թիրախների և համապատասխան ցուցանիշների կատարողականը: Ներկայացված են ՀԶՆ-ները, յուրաքանչյուր ՀԶՆ-ի ներքո սահմանված թիրախները և համապատասխան ցուցանիշները՝ ինչպես համաշխարհային, այնպես էլ ազգային մակարդակով: Յուրաքանչյուր ցուցանիշի կատարման համար միավորների հաշվարկման հետ մեկտեղ՝ բաժնում ընդգրկված է կարճ քննարկում ՀԶՆ-ների կենսագործման վրա անդրադարձող հիմնական գործոնների, ինչպես նաև այն մարտահրավերների վերաբերյալ, որոնց անհրաժեշտ կլինի անդրադառնալ ապագայում:

1

ՃԱՅՐԱՀԵՂ ԱՂՔԱՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՈՎԻ ՎԵՐԱՑՈՒՄ

ՆՊԱՏԱԿ 1. ԾԱՅՐԱՀԵՂ ԱՂՔԱՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՈՎԻ ՎԵՐԱՑՈՒՄ

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԹԻՐԱԽՆԵՐ	ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ
Թիրախ 1.Ա. 1990-ից 2015 թվականներն ընկած ժամանակահատվածում կիսով չափ նվազեցնել օրական 1 ԱՄՆ դոլարից պակաս եկամուտ ունեցող մարդկանց թվաքանակը	1.1 Օրական 1 ԱՄՆ դոլարից (գնողունակության համարժեքությամբ) պակաս եկամուտ ունեցող բնակչության մասնաբաժինը 1.2 Աղքատության խորության գործակից 1.3 Բնակչության ամենաաղքատ քվինտիլային խմբի մասնաբաժինն ազգային սպառման մեջ
Թիրախ 1.Բ. Բոլորի, այդ թվում՝ կանանց և երիտասարդների համար ապահովել լիարժեք ու արդյունավետ զբաղվածություն և պատշաճ աշխատանք	1.4 ՀՆԱ-ի աճի մակարդակը մեկ աշխատողի հաշվով 1.5 Բնակչության զբաղվածության մակարդակը 1.6 Օրական 1 ԱՄՆ դոլարից (գնողունակության համարժեքությամբ) պակաս եկամուտ ունեցող զբաղված անձանց մասնաբաժինը 1.7 Զբաղված անձանց ընդհանուր թվաքանակում ինքնազբաղվածների և սեփական տնտեսությունում աշխատող ընտանիքի անդամների մասնաբաժինը
Թիրախ 1.Գ. 1990-ից 2015 թվականներն ընկած ժամանակահատվածում կիսով չափ պակասեցնել սովից տառապող անձանց մասնաբաժինը	1.8 Թերքաշ երեխաների մասնաբաժինը մինչև հինգ տարեկան երեխաների թվաքանակում 1.9 Կենսաապահովման նվազագույն էներգետիկ արժեքից ցածր սպառում ունեցող բնակչության մասնաբաժինը

ԱԶԳԱՅԻՆ ԹԻՐԱԽՆԵՐ	ԱԶԳԱՅԻՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ
Թիրախ 1. Մինչև 2015 թվականը նվազեցնել աղքատության մակարդակը՝ իջեցնելով այն 1990 թվականին արձանագրվածից ցածր մակարդակի	1. Օրական 4,30 ԱՄՆ դոլարից պակաս (ճշգրտված գնողունակության համարժեքությամբ) եկամուտ ունեցող բնակչության մասնաբաժինը,% 2. Բնակչության մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ի մակարդակը՝ Եվրոպական Միության երկրների մեկ շնչի հաշվով միջին ՀՆԱ-ի համեմատ,% 3. Ընտանեկան նպաստների գծով բյուջետային ծախսերի հարաբերակցությունն աղքատության խորության գործակցին,% 4. Ամենաաղքատ քվինտիլային խմբի դրամական եկամուտների հարաբերակցությունն ամենահարուստ քվինտիլային խմբի եկամուտներին 5. Մայրաքաղաքից դուրս աղքատության մակարդակի հարաբերակցությունը մայրաքաղաքում աղքատության մակարդակին
Թիրախ 2. 1990-ից 2015 թվականներն ընկած ժամանակահատվածում կիսով չափ պակասեցնել սովից տառապող մարդկանց մասնաբաժինը	1. Թերքաշ երեխաների մասնաբաժինը մինչև հինգ տարեկան երեխաների թվաքանակում,% 2. Կենսաապահովման նվազագույն էներգետիկ արժեքից ցածր սպառում ունեցող բնակչության մասնաբաժինը,%
Թիրախ 2.Ա. Բոլորի, այդ թվում՝ կանանց և երիտասարդների համար ապահովել լիարժեք ու արդյունավետ զբաղվածություն և պատշաճ աշխատանք	1. ՀՆԱ-ն մեկ աշխատողի հաշվով, 2005թ. 1.000 ԱՄՆ դոլար, հաստատուն, գնողունակության համարժեքությամբ 2. Զբաղված բնակչության մասնաբաժինը 15 տարեկանից բարձր անձանց թվաքանակում (ընդամենը, տղամարդիկ և կանայք),% 3. Աղքատության պայմաններում ապրող զբաղված բնակչության մասնաբաժինը (աղքատության ազգային շեմի նկատմամբ),% 4. Ոչ գյուղատնտեսական ոլորտում զբաղվածների ընդհանուր թվաքանակում ոչ ֆորմալ զբաղվածություն ունեցողների մասնաբաժինը,%

ՀԶՆ 1. Միավորների հաշվարկ

ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ	1999	2005	2008	2010	2012	2013	2015 թիրախ	
ԹԻՐԱԽ 1. ՄԻՆՉԵՎ 2015 ԹՎԱԿԱՆԸ ՆՎԱԶԵՑՆԵԼ ԱՂՔԱՏՈՒԹՅԱՆ ՄԱԿԱՐԴԱԿԸ՝ ԻՋԵՑՆԵԼՈՎ ԱՅՆ 1990 ԹՎԱԿԱՆԻՆ ԱՐՁԱՆԱԳՐՎԱԾԻՑ ՑԱԾՐ ՄԱԿԱՐԴԱԿԻ								
1. Օրական 4,30 ԱՄՆ դոլարից պակաս (ճշգրտված գնողունակության համարժեքությամբ) եկամուտ ստացող բնակչության մասնաբաժինը,%	80,0	62,6	67,2	76,6	63,3	63,6	<20	Չկատարված թիրախ
2. Բնակչության մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ի մակարդակը Եվրոպական միության երկրների մեկ շնչի հաշվով միջին ՀՆԱ-ի համեմատ,%	...	14,7	21,0	16,9	19,9	21,6	>30	Չկատարված թիրախ
3. Ընտանեկան նպաստների գծով բյուջետային ծախսերի հարաբերակցությունն աղքատության խորության գործակցին,%	33,0	24,5	41,2	29,3	49,3	41,2	>50	Լավ առաջընթաց
4. Ամենաաղքատ քվինտիլային խմբի դրամական եկամուտների հարաբերակցությունն ամենահարուստ քվինտիլային խմբի եկամուտներին	0,03	0,41	0,48	0,36	0,37	0,37	>0,2	Կատարված թիրախ
5. Մայրաքաղաքից դուրս աղքատության մակարդակի հարաբերակցությունը մայրաքաղաքում աղքատության մակարդակին	1,1	1,6	1,8	1,7	1,6	1,5	<1,2	Չկատարված թիրախ
ԹԻՐԱԽ 2. 1990-ԻՑ 2015 ԹՎԱԿԱՆՆԵՐՆ ԸՆԿԱԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ ԿԻՍՈՎ ՉԱՓ ԿՐՃԱՏԵԼ ՍՈՎԻՑ ՏԱՌԱՊՈՂ ԱՆՁԱՆՑ ՄԱՄՆԱԲԱԺԻՆԸ								
1. Թերքաշ երեխաների մասնաբաժինը մինչև հինգ տարեկան երեխաների թվաքանակում,%	2,6 (2000 թ.)	4		4,7			<1,4	Չկատարված թիրախ
2. Կենսաապահովման նվազագույն էներգետիկ արժեքից ցածր սպառում ունեցող բնակչության մասնաբաժինը,%	21	4,6	1,6	3,0	2,8	2,7	<2	Չկատարված թիրախ
ԹԻՐԱԽ 2.Ա. ԲՈԼՈՐԻ, ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ ԿԱՆԱՆՑ ԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊԱՀՈՎԵԼ ԼԻԱՐԺԵՔ ՈՒ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ԶԲԱՂՎԱԾՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՊԱՏՇԱՃ ԱՇԽԱՏԱՆՔ								
1. ՀՆԱ մեկ աշխատողի հաշվով, 2005թ. 1.000 ԱՄՆ դոլար, հաստատուն, գնողունակության համարժեքությամբ	5,21	11,4	16,4	16,7	19,6	20,9	>31	Չկատարված թիրախ
2. Զբաղված բնակչության մասնաբաժինը 15 տարեկանից բարձր անձանց թվաքանակում,%	51,5	44,2	42	49,6	51,9	53,2	>50	Կատարված թիրախ
2.ա. Զբաղված բնակչության մասնաբաժինը, կանայք,%	45	39,5	39,2	41,1	45,2	45,8	>45	Կատարված թիրախ
2.բ. Զբաղված բնակչության մասնաբաժինը, տղամարդիկ,%	59,4	46,1	45,6	59,9	60,2	62,3	>56	Կատարված թիրախ

ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ	1999	2005	2008	2010	2012	2013	2015 թիրախ	
2.գ. Երիտասարդների (15-24 տարեկան) գործազրկության մակարդակ,%	65,6 (2001 թ.)	54,6	53,4	38,9	35,4	36,1	<30	Չկատարված թիրախ
3. Աղքատության պայմաններում ապրող զբաղված բնակչության մասնաբաժինը (աղքատության ազգային շեմի նկատմամբ),%	48,6	30,1	22,2	29,6	26,1	25,6	<5	Չկատարված թիրախ
4. Ոչ գյուղատնտեսական ոլորտում զբաղվածների ընդհանուր թվաքանակում ոչ ֆորմալ զբաղվածություն ունեցողների մասնաբաժինը,%	26,7 (2002 թ.)	22,9	22,6	20,7	19,3	19,6	<16	Լավ առաջընթաց

Աղբյուրները բերված են ստորև՝ ցուցանիշների քննարկմանը նվիրված մասում:
**Մինչև 2008 թվականն աղքատության թվերը հիմնված են Համաշխարհային բանկի 2004 թվականի մեթոդաբանության վրա, իսկ 2008 թվականից ի վեր՝ Համաշխարհային բանկի 2009 թվականի նոր մեթոդաբանության վրա (ներառյալ՝ 2008 թվականը):*

Համատեքստ

Ընդհանուր առմամբ, վերջին երկու տասնամյակներում աղքատության կրճատման ուղղությամբ Հայաստանում արձանագրվել է զգալի առաջընթաց: Աղքատության կրճատման գործընթացի հիմնական շարժիչ ուժը տնտեսական զարգացումն էր: Մինչև 2008 թվականը մեկ տասնամյակից ավելի տևած շարունակական տնտեսական աճի պայմաններում ձևավորվել էին նպաստավոր պայմաններ աշխատատեղերի ստեղծման և եկամուտների գոյացման համար, ինչն էլ իր հերթին նպաստեց աղքատության նվազեցմանը: Սոցիալական պաշտպանության և սոցիալական աջակցության մեխանիզմները, այդ թվում՝ կենսաթոշակներն ու ընտանեկան նպաստները մեծապես անդրադարձել են աղքատության կրճատման վրա, հատկապես՝ թերսնված կամ ծայրահեղ աղքատ (կենսապահովման նվազագույնից ցածր սպառում ունեցող) անձանց թիվը նվազեցնելու առումով: Այնուամենայնիվ, ընդհանուր աղքատության դեմ պայքարում Հայաստանն իրեն պակաս արդյունավետ է դրսևորել: 2013 թվականին բնակչության 2,7%-ը թերսնված էր, իսկ երկրի բնակչության մեկ երրորդն ապրում էր աղքատության պայմաններում:

Երկու արտաքին գործոն վտանգում են Հայաստանի ապագա վերականգնումը՝ դրանով իսկ լուրջ բացասական հետևանքներ թողնելով աղքատության կրճատման ուղղությամբ արձանագրված առաջընթացի վրա: Սա հատկապես վերաբերում է 2008 թվականի համաշխարհային ֆինանսական ճգնաժամին, ինչպես նաև Հայաստանի խոշոր տնտեսական և առևտրային գործընկեր հանդիսացող Ռուսաստանի դեմ ուղղված տնտեսական պատժամիջոցներին և դրանց հաջորդած տնտեսական անկմանը: Ինչպես երևում է գծապատկեր 1-ից՝ 2008-2013 թվականներին աճել է աղքատների և ծայրահեղ աղքատների մասնաբաժինը:



Գծապատկեր 1. Աղբյուր՝ ՀՀ ԱՎԾ Տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջացված հետազոտություն (1999թ.) և ՀՀ ԱՎԾ ՀԶՆ տվյալների շրջանակներ

Տարածաշրջանում ներգաղթած փախստականների ներհոսքի աճը, որը պայմանավորված է եղել տարածաշրջանում վատթարացող աշխարհաքաղաքական իրավիճակով, ևս մեկ կարևոր գործոն էր, որն անդրադարձավ Հայաստանի սոցիալական վիճակի վրա: Աղքատության կրճատման ուղղությամբ ձեռնարկվող միջոցառումների տեսանկյունից՝ լրացուցիչ մարտահրավեր է դարձել Սիրիայում ընթացող հակամարտության հետևանքով տեղահանված և Հայաստանում պաշտպանություն հայցող 17.000 անձանց ներհոսքը, ինչպես նաև ավելի փոքրաթիվ ներհոսքն Ուկրաինայից, ընդ որում՝ ժամանածներից շատերը գտնվում են խիստ անապահով վիճակում:

«Ծայրահեղ աղքատության և սովի վերացում» 1-ին ՀԶՆ-ի ներքո ստացված արդյունքները քննարկելիս հարկ է նկատի առնել «աղքատության» սահմանման համար Հայաստանում և միջազգայնորեն կիրառվող մոտեցումների տարբերությունը: Հայաստանում տրված սահմանմամբ բնակչության կենսամակարդակը գնահատելու համար տարանջատվում է երկու խումբ՝ աղքատներ և ծայրահեղ աղքատներ. այդ եզրույթների համար կիրառվող շեմը տարբերվում է միջազգայնորեն կիրառվող շեմից: Սահմանվում է աղքատության երկու հիմնական մակարդակ.

- **«Աղքատ»** են գնահատվում այն անձինք, ում օրական **սպառումը** 3,2 ԱՄՆ դոլարից պակաս է, այսինքն՝ նրանք, ովքեր գտնվում են աղքատության ազգային շեմից ներքև: ՀՀ ԱՎԾ-ի կողմից իրականացվող Տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջացված հետազոտությունների (ՏՏԿԱՀ) միջոցով աղքատության ազգային ընդհանուր շեմը սահմանվում է որպես երկրում կենսապահովման համար անհրաժեշտ նվազագույն մակարդակ: Այն ընդգրկում է հիմնական կարիքների բավարարման համար անհրաժեշտ պարենային և ոչ պարենային ապրանքատեսակների արժեքը: 2013 թվականի դրությամբ՝ յուրաքանչյուր չափահաս անձի հաշվով ընդհանուր աղքատության շեմը սահմանվել է ամսական 39.193 ՀՀ դրամ: 2013 թվականին ՀՀ դրամի միջին տարեկան փոխարժեքը կազմել է 409,6 ՀՀ դրամ մեկ ԱՄՆ դոլարի համար: Նման փոխարժեքը ենթադրում է օրական 3,2 ԱՄՆ դոլար (39.193/409,6)/30,3 օր):
- **«Ծայրահեղ աղքատ»** են գնահատվում այն անձինք, ում օրական **սպառումը** կազմում է 1,9 ԱՄՆ դոլարից պակաս գումար: Նրանք փաստորեն **թերսնված անձինք** են, քանի որ նրանց սպառումը ցածր է կենսապահովման նվազագույն պարենային զամբյուղից: 2013 թվականին կենսապահովման նվազագույն պարենային զամբյուղը դրամական արտահայտմամբ կազմել է 22,993 ՀՀ դրամ կամ 1,9 ԱՄՆ դոլար: Կարևոր է նշել, որ կենսապահովման նվազագույն զամբյուղը՝ դրամական արտահայտմամբ, գերազանցում է օրական 1,25 ԱՄՆ դոլարի շեմը, որը ՀԶՆ-ների շրջանակներում ընդունված է ամբողջ աշխարհում: Հետևաբար, սովից տառապող անձանց մասնաբաժնի նվազեցումը տարբերվում է՝ կախված գնահատման համար օգտագործվող շեմից:

1999 թվականի համեմատ՝ թերսնված անձանց թիվը կրճատվել է ավելի քան յոթ անգամ:[7]

7 Տե՛ս տվյալների համադրելիության վերաբերյալ 6-րդ էջում բերված նշումը: 1999 և 2004 թթ. պարագայում աղքատության մակարդակը որոշվել է 2004թ. մեթոդաբանությամբ, իսկ 2008, 2010 և 2013 թթ. պարագայում կիրառվել է 2009թ. մեթոդաբանությունը: Տվյալների համադրելիությունը տուժում է նման մեթոդաբանական փոփոխություններից, թեև ՀՀ ԱՎԾ-ն նախատեսել է որոշակի շտկումներ տվյալների հետևողականությունն ու համադրելիությունն ապահովելու նկատառումով: Այդուհանդերձ, սույն զեկույցում նշված թվերը ներկայացվում են հնարավորինս լայն ժամանակահատվածում (ՀԶՆ-ների տեսանկյունից) դիտվող միտումներն արտացոլելու նպատակով:

Թիրախ 1. Մինչև 2015 թվականը նվազեցնել աղքատության մակարդակը՝ իջեցնելով այն 1990 թվականին արձանագրվածից ցածր մակարդակի

Ծայրահեղ աղքատության մակարդակի փոփոխություն, %



Գծապատկեր 2. Աղբյուր՝ ՀՀ ԱՎԾ, ՀԶՆ տվյալների շտեմարան

Օրական ավելի քան 4,3 ԱՄՆ դոլար եկամուտ ունեցողներ, %



*Գծապատկեր 3. Աղբյուր՝ ՀՀ ԱՎԾ * 2008 թվականին համաշխարհային շեմը 4,3 ԱՄՆ դոլարից փոխվեց 5 ԱՄՆ դոլարի: Այս փոփոխությունների հետևանքները մեղմելու նպատակով 2008 թվականի համար հեղինակներն օգտագործել են ըստ երկու շեմերի հաշվարկված թվերի միջինը:*

Աղքատության ազգային շեմից ցածր ապրող անձինք: Աղքատության ազգային շեմից ցածր ապրող, այն է՝ 3,2 ԱՄՆ դոլարից պակաս օրական սպառում ունեցող բնակչության մասնաբաժինը 1999-ից 2013 թվականներն ընկած ժամանակահատվածում 56,1%-ից կրճատվեց մինչև 32%: Այդուհանդերձ, Հայաստանի բնակչության գրեթե մեկ երրորդը (այն է՝ 967 հազար բնակիչ) 2013 թվականի դրությամբ դեռևս համարվում էր աղքատ: Ավելին, 2013 թվականին գրանցված ծայրահեղ աղքատության մակարդակը 1,7 անգամ ավելի բարձր էր, քան 2008 թվականի ցուցանիշը:

Օրական 4,3 ԱՄՆ դոլարից պակաս եկամուտ ունեցողներ: Նմանատիպ միտում է դիտվել միջին աշխատող խավի զարգացման առնչությամբ, ընդ որում՝ ըստ ՀԶՆ-ների սահմանման՝ դրան են պատկանում օրական 4,3 ԱՄՆ դոլարից (իսկ սկսած 2008 թվականից՝ 5 ԱՄՆ դոլարից) ավելի եկամուտ ունեցողները: 2010-ից 2013 թվականներն ընկած ժամանակահատվածում տնտեսության վերականգնումը նպաստեց օրական ավելի քան 4 ԱՄՆ դոլար եկամուտ ստացող անձանց մասնաբաժնի մինչև 36% աճին:

Բայց և այնպես, այս ցուցանիշով Հայաստանում արձանագրված արդյունքները հետ են մնում համաշխարհային մակարդակով գրանցված արդյունքներից: 1991-ից 2015 թվականներն ընկած ժամանակահատվածում աշխարհում միջին աշխատող խավին պատկանող՝ օրական ավելի քան 4 ԱՄՆ դոլարով ապրող անձանց թիվը գրեթե եռապատկվել է:

Աղքատությունը մայրաքաղաքում և դրանից դուրս: Ծայրահեղ աղքատ (թերսնված) անձանց մեծամասնությունը բնակվում է Երևանից դուրս գտնվող փոքր քաղաքային բնակավայրերում: ՏՏԿԱՀ-ի տվյալներով՝ 2008-2013 թվականներին աղքատության մակարդակը քաղաքային համայնքներում աճել է ավելի շատ, քան գյուղական համայնքներում (4,6 տոկոսային կետ՝ 4,2 տոկոսային կետի համեմատ), մինչդեռ աղքատության մակարդակը Երևանում աճել է ավելի շատ, քան այլ քաղաքային բնակավայրերում (5,4 տոկոսային կետ՝ 3,5 տոկոսային կետի համեմատ):

Աղքատության խորություն և ամենաաղքատ քվինտիլային խումբ: Աղքատության խորության գործակիցը դեռևս շատ բարձր է, թեպետ 2010-2013 թվականների ընթացքում այն նվազել է: Սոցիալական աջակցության համար հատկացվող միջոցները բավարար չեն աղքատության խորությունը հաղթահարելու համար: Ըստ գնահատականների՝ 2013 թվականին աղքատության խորության հաղթահարման համար անհրաժեշտ լրացուցիչ ռեսուրսները հավասար են ՀՆԱ-ի 2%-ին՝ այն պայմանով, որ նման ռե-

սուրսները կատարելապես հասցեագրված բաշխվեն: Միջազգային փորձը վկայում է, որ արդյունավետ հասցեականություն ապահովելը բավականին դժվար է, ինչը ենթադրում է, որ աղքատության խորության հաղթահարման համար կպահանջվեն զգալիորեն ավելի մեծ ռեսուրսներ:

Հայաստանում ստեղծված իրավիճակի կարևոր հատկանիշ է այն հանգամանքը, որ եկամտի հիման վրա (ըստ պաշտոնական տվյալների) հաշվարկված ծայրահեղ աղքատությունը չորս անգամ ավելի բարձր է, քան սպառման հիման վրա հաշվարկված ծայրահեղ աղքատությունը: Նման իրողության համար գոյություն ունեն տարբեր պատճառներ, այդ թվում՝

- եկամուտների ավելի մեծ անհավասարություն՝ սպառման բաշխման համեմատ,
- եկամուտների ոչ լիարժեք հայտարարագրում, ինչպես նաև եկամտի մասին ճշգրիտ տվյալների բացակայություն,
- տնտեսությունում ոչ ֆորմալ աշխատատեղերի բարձր մասնաբաժին,
- որպես եկամտի աղբյուր մասնավոր տրանսֆերտների բարձր մասնաբաժին (2014 թվականին մասնավոր տրանսֆերտները կազմել են ՀՆԱ-ի մոտ 20%-ը):



Գծապատկեր 4. Աղբյուր՝ ՀՀ ԱՎԾ

Ամենաաղքատ քվինտիլային խմբի մասնաբաժինն ազգային սպառման մեջ նույնպես զգալիորեն նվազել է 2008-ից 2013 թվականներն ընկած ժամանակահատվածում, ինչը վկայում է բնակչության տարբեր խմբերի միջև տնտեսական աճի անհավասար բաշխվածության մասին:

Թիրախ 2. 1990-ից 2015 թվականներն ընկած ժամանակահատվածում կիսով չափ պակասեցնել սովից տառապող անձանց թիվը

Թերսնվածներ: Ինչպես վերը նշվեց, ծայրահեղ աղքատության կամ թերսվածների մասնաբաժնի գնահատման համար կիրառվող ազգային շեմը՝ դրամական արտահայտությամբ (օրական մեկ շնչի հաշվով 1.9 ԱՄՆ դոլար), ավելի բարձր է քան ՀԶՆ-երի շրջանակում միջազգայնորեն կիրառվող օրական մեկ շնչի հաշվով 1.25 ԱՄՆ դոլարի շեմը:

Ընդհանուր առմամբ, դիտարկվող ժամանակահատվածում գրանցվել է թերսնվածների տեսակարար կշռի զգալի նվազում:

2004 թվականից ի վեր 28%-ով նվազել է 2,5 ԱՄՆ դոլարից պակաս եկամուտ ունեցող բնակչության մասնաբաժինը: 2013 թվականին 2,5 ԱՄՆ դոլարից պակաս եկամուտ ստացող անձանց մասնաբաժինը կազմել է 12,6%: ՀԶՆ-ների շրջանակներում 2,5 ԱՄՆ դոլարի շեմն օգտագործվել է որպես աղքատության համաշխարհային շեմ:

1,25 ԱՄՆ դոլարից պակաս եկամուտ ունեցողների մասնաբաժինը Հայաստանում կազմել է երկրի ընդհանուր բնակչության ընդամենը 0,4%-ը: 2013 թվականին այս գործակիցը կազմել է

0,3%,[8] այսինքն՝ 2004 թվականի համեմատ արձանագրվել է նվազեցում 25%-ով:

Նյութական աղքատության առումով առավել խոցելի է զրոյից հինգ տարեկան տարիքային խումբը: Բացի այդ, Հայաստանում աղքատությունն ավելի մեծ չափով սպառնում է երեք կամ ավելի երեխա ունեցող տնային տնտեսություններին: Չնայած աղքատության ընդհանուր մակարդակի կրճատմանը՝ 2012 թվականի համեմատ 2013 թվականին աճել է մանկական աղքատության մակարդակը:[9]

Այս ուղղությամբ 2000 թվականից ի վեր գրանցվել է անհապաղ ուշադրություն և հրատապ գործողություններ պահանջող մտահոգիչ միտում, այն է՝ մինչև հինգ տարեկան թերքաշ երեխաների մասնաբաժնի կայուն աճ, ինչի մասին վկայում են ժողովրդագրության և առողջության հարցերի հետազոտությունները: Ավելին՝ ըստ վերոնշյալ հետազոտությունների՝ Հայաստանում բնակվող երեխաների սնուցումը վատթարացել է 2005-ից 2010 թվականներն ընկած ժամանակահատվածում: Մանդի հետ կապված հիմնական խնդիրը թերաճն ու քրոնիկ թերսնումն է: 2005 թվականին Հայաստանում բնակվող երեխաների 13%-ը թերաճ էր, իսկ 2010 թվականին այս ցուցանիշն աճեց մինչև 18%: Սնուցման իրավիճակի վատթարացման հիմքում ընկած հնարավոր պատճառներից են՝ հավելյալ սննդի ոչ ժամանակին տրամադրումը երեխաներին և սննդամթերքի բազմազանության բացակայությունը, սնուցման վերաբերյալ ծնողների անբավարար գիտելիքները, ինչպես նաև բուժծառայություններ մատուցողների կողմից տրված խորհրդատվության ցածր որակը: Չնայած գոյություն ունեն որոշակի սահմանված ընթացակարգեր, ոչ բոլոր առաջնային բուժծառայություններ մատուցող հաստատություններն են ըստ հարկի ստուգում երեխաների քաշն ու հասակը պարբերական այցելությունների ժամանակ, ընդ որում՝ համապատասխան տվյալները չեն գրանցվում աճի ժամկետացանկերում:[10]

2,5 և 1,25 ԱՄՆ դոլարից քիչ եկամուտ ստացող մարդկանց մասնաբաժին, %



Գծապատկեր 5. Աղբյուր՝ ՀՀ ԱՎԾ, ՀԶՆ տվյալների շտեմարան

Մինչև հինգ տարեկան թերքաշ երեխաներ, % (2 ՍԾ պակաս)



Գծապատկեր 6. Աղբյուր՝ Հայաստանի ժողովրդագրության և առողջության հարցերի հետազոտություն

Թիրախ 2.Ա. Բոլորի, այդ թվում՝ կանանց և երիտասարդների համար ապահովել լիարժեք ու արդյունավետ զբաղվածություն և պատշաճ աշխատանք

Զբաղվածության հնարավորություններ: 2001 թվականին արձանագրված 38% ցուցանիշից գործազրկության մակարդակը զգալիորեն կրճատվել է՝ 2014 թվականին հասնելով շուրջ 18%-ի: Այդուհանդերձ, բոլորի, այդ թվում՝ կանանց և երիտասարդների համար լիարժեք ու արդյունավետ զբաղվածություն և պատշաճ աշխատանք ապահովելու Հայաստանի կարողությունը դեռևս բավականին թույլ է:

8 ՀՀ ԱՎԾ, ՀԶՆ տվյալների շտեմարան

9 2013թ.՝ նախորդ տարվա համեմատ, 1,1 տոկոսային կետով աճեց մանկական աղքատության մակարդակը, իսկ երեխաների շրջանում ծայրահեղ աղքատության մակարդակը մնաց անփոփոխ՝ կազմելով 3,3%: Միաժամանակ՝ երկրում աղքատության ընդհանուր մակարդակը նվազեց՝ 0,4, իսկ ծայրահեղ աղքատության մակարդակը 0,1 տոկոսային կետով:

10 ՄԱԿ-ի մանկական հիմնադրամ, Տարեկան զեկույց Հայաստանի վերաբերյալ, ԱՊՀ և Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի տարածաշրջանի երկրներ:

Իրականում, 2008-2014 թվականներին գործազրկության մակարդակը չի բարելավվել, այլ տատանվել է 16,5-19%-ի սահմաններում:

Հայաստանը կատարել է ՀԶՆ-ների ներքո սահմանված թիրախը, այն է՝ աշխատանքային տարիքի բնակչության ավելի քան կեսի համար ապահովել է զբաղվածություն: Բայց և այնպես, աշխատանքային տարիքի անձանց և հատկապես երիտասարդների հետ կապված իրավիճակը մտահոգիչ է: 2013 թվականին երկրի բոլոր աշխատանքային ռեսուրսների մոտ 40%-ը եղել է տնտեսապես ոչ ակտիվ (54%՝ աշխատանքային տարիքի անձինք, 19%՝ ուսանողներ, իսկ 25%՝ կենսաթոշակառուներ): Երիտասարդների շրջանում՝ 25-ից 29 տարեկան երիտասարդ կանանց և տղամարդկանց 40,4%-ը, ինչպես նաև 15-ից 24 տարեկանների 37,2%-ը դպրոցում կամ համալսարանում չի սովորում և որևէ աշխատանք չունի[11]:

Հայաստանը չի կատարել իր առջև դրված թիրախը երիտասարդների 70%-ի համար աշխատատեղեր ապահովելու մասով: Երիտասարդների շրջանում գործազրկության մակարդակն ավելի քան երկու անգամ գերազանցում է ընդհանուր գործազրկության մակարդակը (36%՝ 17,6%-ի համեմատ):

Ոչ ֆորմալ զբաղվածություն: Հայաստանը չի կատարել իր առջև դրված թիրախը ոչ ֆորմալ զբաղվածության մակարդակի կրճատման ուղղությամբ, մասնավորապես՝ տնտեսության ոչ գյուղատնտեսական ոլորտներում: Վերջին տասնամյակում ոչ գյուղատնտեսական ոլորտներում արձանագրվել է ոչ ֆորմալ զբաղվածության շատ փոքր նվազեցում (2005-ից 2013 թվականներն ընկած ժամանակահատվածում նվազեցումը կազմել է 14%)[12]:

Ոչ ֆորմալ զբաղվածության բարձր գործակիցը ենթադրում է՝ (ա) պակաս հստակություն և ապահովություն աշխատակիցների համար, ինչպես նաև (բ) պետական բյուջեի համար չստացված հարկային եկամուտներ: Ոչ ֆորմալ զբաղվածությունն աղճատում և աղավաղում է բնակչության եկամուտների և, հետևաբար, երկրում աղքատության իրական պատկերը:

Գործազրկություն, իրական աշխատավարձեր և մասնավոր տրանսֆերտներ



Գծապատկեր 7. Աղբյուր՝ ՀՀ ԱՎԾ, Հայաստանի սոցիալական պատկերը

Զբաղվածություն և աղքատություն: Հայաստանը չի կատարել իր առջև դրված թիրախը զբաղված աղքատների թիվը մինչև 5% նվազեցնելու մասով: Հայաստանի աշխատաշուկայում և երկրում աշխատանքի արտադրողականության գծով դիտվող մտահոգիչ նշաններից է այն փաստը, որ զբաղված անձանց ավելի քան մեկ քառորդը դեռևս աղքատ է, չնայած այն հանգամանքին, որ վերջին տասնամյակում՝ 2004 թվականից ի վեր, իրական աշխատավարձերն աճել են ավելի քան հինգ անգամ (տե՛ս գծապատկեր 7): Օրական 4 ԱՄՆ դոլար եկամուտ ունեցող միջին խավի մասնաբաժինը կազմում է բնակչության միայն մեկ երրորդը:

11 ՀՀ ԱՎԾ, Աշխատանքի շուկան Հայաստանի Հանրապետությունում, 2014թ., http://www.armstat.am/am/?nid=82&id=1625: ՀՀ ԱՎԾ մեթոդաբանության համաձայն՝ աշխատանքային ռեսուրսների թվաքանակը նույնական է 15-75 տարեկան բնակչության թվաքանակին:

12 Հայաստանի գյուղատնտեսության ոլորտում զբաղվածությունը մեծամասամբ չի համապատասխանում ֆորմալ զբաղվածության սահմանմանը և հիմնական բնութագրերին:

Աշխատուժի արտադրողականություն: Աշխատուժի արտադրողականությունն՝ արտահայտված որպես 1 աշխատողի հաշվով ՀՆԱ, գրեթե կրկնապատկվել է վերջին տասնամյակում (2004-2014 թթ.), սակայն դեռևս բավականին հեռու է 31.000 ԱՄՆ դոլարի չափով սահմանված թիրախից: Հայաստանն ի վիճակի չի լինի կատարել այս թիրախը:



Գծապատկեր 8. Աղբյուր՝ ՀՀ ԱՎԾ, ՀԶՆ տվյալների շտեմարան

Մարտահրավերներ և հեռանկարներ

Արտաքին ցնցումների մարտահրավեր: Հայաստանում աղքատության դեմ պայքարը մեծապես տուժել է արտաքին տնտեսական ցնցումներից: Կառավարության առջև ծառացած հիմնական միջնաժամկետ մարտահրավերն արտաքին ցնցումների՝ համաշխարհային տնտեսական ճգնաժամի և Ռուսաստանում տնտեսական անկման, տնտեսական և սոցիալական հետևանքները մեղմելն է՝ միաժամանակ շարունակելով քաղաքական և ինստիտուցիոնալ այն բարեփոխումները, որոնք անհրաժեշտ են վերականգնման և երկարաժամկետ զարգացման համար: Այս իմաստով կարևոր առաջնահերթություններից են արտաքին ցնցումների նկատմամբ տնտեսության դիմակայունության բարձրացումը և զարգացման նոր հնարավորությունների ստեղծումը:

Աղքատների շահերին ծառայող տնտեսական աճի մարտահրավեր: Անցյալ տասնամյակի տնտեսական աճը 2009-ից 2013 թվականներն ընկած ժամանակահատվածում չի ծառայել աղքատների շահերին.

- երկրի բնակչության ավելի քան մեկ երրորդը դեռևս աղքատ է:
- ՏՏԿԱՀ-ի փորձով հաստատված (էմպիրիկ) տվյալներից կարել է ենթադրել, որ, չնայած այն հանգամանքին, որ բնակչության ընդհանուր սպառումն աճել է 0,9%-ով, աղքատների սպառումը նվազել է 0,5%-ով:
- Զբաղվածության մակարդակն ավելի ցածր է աղքատների շրջանում:
- 2008-ից 2013 թվականն ընկած ժամանակահատվածում զգալիորեն նվազել է նաև բնակչության ամենաաղքատ քվինտիլային խմբի մասնաբաժինն ազգային սպառման մեջ, ինչը վկայում է բնակչության խմբերի միջև տնտեսական աճի անհավասար բաշխման մասին:
- Տնտեսական դժվարությունների պատճառով կրթական համակարգում աղքատների ընդգրկվածության մակարդակն ավելի ցածր է:

Սոցիալական ծրագրերը զգալիորեն նպաստել են աղքատության և հատկապես ծայրահեղ աղքատության դեմ ուղղված պայքարին, սակայն դրանք բավարար չեն եղել աղքատության կրճատման կայուն ընթացքն ապահովելու համար: Ապագայի մարտահրավերն է ապահովել այնպիսի տնտեսական աճ, որը կծառայի աղքատների շահերին:

Թերսնված և թերաճ երեխաների մարտահրավեր: Անհանգստացնող և ահազանգող նշան է դարձել այն իրողությունը, որ 2000 թվականից ի վեր արձանագրվել է թերսնված և թերաճ մինչև հինգ տարեկան երեխաների մասնաբաժնի աճ: Մինչև հինգ տարեկան երեխաները կազմում են հասարակության առավել անապահով և խոցելի խմբերից մեկը, իսկ նրանց հետ կապված խնդիրները պետք է առաջնահերթություն ստանան աղքատության կրճատմանն ուղղված պայքարում: Բացի այդ, կարևոր է, որ Հայաստանում առաջնահերթությունը տրվի պարենային ապահովությանը և ապահովվի բոլորի համար սննդի հասանելիությունը:

Աշխատատեղերի ստեղծման և տնտեսության արտադրողականության մարտահրավեր: Հայաստանի համար աշխատատեղերի ստեղծումը եղել է և կլինի մարտահրավեր: Երկրի աշխատանքային ռեսուրսների գրեթե 40%-ը տնտեսապես ոչ ակտիվ է, իսկ երիտասարդ տղամարդկանց և կանանց մեկ երրորդը չի սովորում և որևէ աշխատանք չունի: Ավելին՝ Հայաստանը ստիպված կլինի անդրադառնալ տնտեսության արտադրողականության բարձրացման մարտահրավերին, որպեսզի զբաղված անձանց զերծ պահի աղքատությունից և նրանց հնարավորություն ընձեռի պատշաճ ապրուստ վաստակել: Նման մարտահրավերը կարելի է արդյունավետ կերպով հաղթահարել միայն պետական և մասնավոր հատվածների երկխոսության և համագործակցության միջոցով:

Ֆինանսավորման մարտահրավեր: Սոցիալական բնույթի, այդ թվում՝ աղքատության կրճատման, կրթության, առողջապահության, ինչպես նաև գենդերային և սոցիալական հավասարության ոլորտներում իրագործվող բոլոր ծրագրերի համար բավարար ֆինանսավորման ապահովումը միշտ առանցքային գործոն է եղել ձեռք բերված արդյունքների արդյունավետ կենսագործման և պահպանման համար: Այս իրողությունը եղել է և մշտապես մարտահրավեր կլինի ցանկացած երկրի համար:

Ինչպես երևում է ՀԶՆ-ների իրականացման գործընթացից, տնտեսական ցուցանիշների անկումը բերել է պետական եկամուտների նվազեցմանը և, հետևաբար, սոցիալական ծրագրերի համար նախատեսված հանրային միջոցների կրճատմանը: Այս իրողությունն իր հերթին անդրադառնում է արդյունքների վրա ոչ միայն աղքատության ցուցանիշի, այլև գրեթե բոլոր սոցիալական ցուցանիշների մասով: Հանրային ֆինանսավորման ոլորտում առանցքային և բոլոր ոլորտների վրա տարածվող այս մարտահրավերը հնարավոր է հաղթահարել տնտեսական աճի և զարգացման համար լրացուցիչ հնարավորությունների ստեղծմամբ:

Այս մարտահրավերը հավասարապես տարածվում է ստորև քննարկված մյուս նպատակների վրա:

2
ՀԱՄԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԱՐՐԱԿԱՆ
ԿՐԹՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ

ՆՊԱՏԱԿ 2. ՀԱՄԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԱՐՐԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ

*Ազգայնացված նպատակ՝ «Համընդհանուր բարձրորակ միջնակարգ կրթության ապահովում»

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԹԻՐԱԽՆԵՐ	ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ
Թիրախ 2.Ա. Մինչև 2015 թվականն ամենուրեք ապահովել բոլոր երեխաների՝ հավասարապես տղաների և աղջիկների համար լիարժեք տարրական ընդհանուր կրթություն	2.1. Զուտ ընդգրկվածություն տարրական դպրոցում 2.2. 1-ին դասարան ընդունված աշակերտների հարաբերակցությունը տարրական դպրոցի վերջին դասարան հասած աշակերտներին 2.3. 15-ից 24 տարեկանների գրագիտություն, կանայք և տղամարդիկ

ԱԶԳԱՅԻՆ ԹԻՐԱԽՆԵՐ	ԱԶԳԱՅԻՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ
Թիրախ 3. Ապահովել, որ մինչև 2015 թվականը յուրաքանչյուր երեխա հնարավորություն ունենա ստանալ լիարժեք որակյալ միջնակարգ կրթություն	1. Համախառն ընդգրկվածություն տարրական դպրոցում,% 2. Համախառն ընդգրկվածություն միջնակարգ դպրոցի բարձր դասարաններում,% 3. Կրթության գծով պետական բյուջեի տարեկան ծախսերը ՀՆԱ-ի նկատմամբ,% 4. Կրթության որակի գնահատման ազգային և միջազգային համակարգերով սահմանված չափորոշիչներին համապատասխան գիտելիքներ ունեցող աշակերտների և ուսանողների մասնաբաժինը,% 5. Աղքատ բնակչության համախառն ընդգրկվածության հարաբերակցությունը մասնագիտական կրթության ծրագրերում ընդգրկված ոչ աղքատ բնակչությանը

ՀԶՆ 2. Միավորների հաշվարկ

ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ	1999	2005	2008	2010	2012	2013	2014	2015 թիրախ	
ԱՊԱՀՈՎԵԼ, ՈՐ ՄԻՆՉԵՎ 2015 ԹՎԱԿԱՆԸ ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐ ԵՐԵԽԱ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՆԱ ՍՏԱՆԱԼ ԼԻԱՐԺԵՔ ՈՐԱԿՅԱԼ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ									
1. Համախառն ընդգրկվածություն տարրական դպրոցում,%	92,8	93,6	93,5	91,6	94,8	92,6	92,0	>99	Չկատարված թիրախ
2. Համախառն ընդգրկվածություն միջնակարգ դպրոցի բարձր դասարաններում,%	80,0	80,0	81,9	84,4	74,1	74,0	72,4	>95	Չկատարված թիրախ
3. Կրթության գծով պետական բյուջեի տարեկան ծախսերը ՀՆԱ-ի նկատմամբ,%	2,2 (2000 թ.)	2.7*	2,9	2,8	2,4**	2,3**	2,4**	>4,5	Չկատարված թիրախ
4. Կրթության որակի գնահատման ազգային և միջազգային համակարգերով սահմանված չափորոշիչներին համապատասխան գիտելիքներ ունեցող աշակերտների և ուսանողների մասնաբաժինը,%	...	...	...	...	...	...	...	...	Չկան թիրախներ
5. Աղքատ բնակչության համախառն ընդգրկվածության հարաբերակցությունը մասնագիտական կրթության ծրագրերում ընդգրկված ոչ աղքատ բնակչությանը		0,26			0,57	0,51		>0,3	Կատարված թիրախ

Աղբյուր՝ ՀՀ ԱՎԾ, Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը, ՀՀ ԱՎԾ, 2014թ.

** Կրթություն և գիտություն*

*** 2012-2013 թթ. ՀՆԱ-ն վերանայվել է՝ ըստ Ազգային հաշիվների համակարգի 2008թ. միջազգային չափանիշի:*

Համատեքստ

«Համընդհանուր տարրական կրթության ապահովում» 2-րդ ՀԶՆ-ի ներքո սահմանված միջազգային թիրախները չեն վերաբերել Հայաստանին, քանի որ տարրական դպրոցներում համախառն ընդգրկվածությունը՝ ինչպես տղաների, այնպես էլ աղջիկների պարագայում, կազմել է գրեթե 99%: Դրա պատճառով ազգայնացված 2-րդ ՀԶՆ-ի ներքո սահմանվել են համընդհանուր տարրական կրթություն ապահովելու, կրթության գծով հանրային ծախսերը մեծացնելու, մասնագիտական կրթության ոլորտում աղքատների մասնակցությունը բարձրացնելու և կրթության որակը չափող թիրախներ:

Հայաստանը պարտավորվել է իրականացնել բարեփոխումներ կրթական համակարգում՝ հասցնելով այն միջազգային ընդունված չափանիշներին: ՀՀ կառավարությունը ձեռնարկել է մի շարք լայնամասշտաբ բարեփոխումներ, որոնք ուղղված են եղել կրթության որակի և կրթության հասանելիության բարձրացմանը: Ստորև հակիրճ ներկայացվում են այն հիմնական զարգացումները և բարեփոխումների ուղղությամբ գործադրված ջանքերը, որոնք ձևավորել են ներկայիս իրավիճակը և զգալիորեն նպաստել են կրթական համակարգի բարելավմանը.

- անդամակցումը Բոլոնյան գործընթացին,[13] ինչի շնորհիվ ավելի լայն նախապայմաններ ստեղծվեցին բարձրագույն կրթության որակի և Եվրոպական կրթական համակարգում դրա ճանաչման համար: 2005 թվականին Հայաստանը դարձավ Բոլոնյան գործընթացի լիիրավ անդամ:
- 2011 թվականին 10-ամյա կրթական ծրագրի փոխարեն ներմուծվեց 12-ամյա եռաստիճան միջնակարգ դպրոցական համակարգը: Հիմնական կրթությունը սահմանվեց որպես պարտադիր և մնաց անվճար: 2017 թվականի հունիսից ընդհանուր լրիվ միջնակարգ կրթության ողջ համակարգը դառնում է պարտադիր և անվճար:[14]
- Հատուկ կրթական համակարգի վերակազմավորում և ներառական կրթության ընդլայնում (ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի և այլ նվիրատու կազմակերպությունների աջակցությամբ), այն է՝ ներառական կրթության ընդգրկում հանրակրթական համակարգում 2005 թվականից:[15]
- Հասարակության և տնտեսության կարիքների արդյունավետ բավարարման նպատակով՝ (ա) հատուկ մասնագիտական կրթության և ուսուցման համակարգի խթանում, ինչպես նաև դրա համապատասխանեցում եվրոպական չափանիշներին՝ Եվրոպական միության և ՄԱԶԾ-ի աջակցության ծրագրերի շրջանակներում, (բ) համալսարանների և ձեռնարկությունների միջև համագործակցության խթանում:
- Ուսանողների աջակցության հիմնադրամների ստեղծում կարիքավոր ուսանողներին ֆինանսական աջակցություն տրամադրելու համար:
- Հանրակրթական դպրոցներում, մասնագիտական կրթության կենտրոններում և բուհերում տեղեկատվական և հաղորդակցության տեխնոլոգիաների ավելի լայն օգտագործում կրթության և կառավարման համակարգերի համար:
- Նախատեսված բարեփոխումների իրագործման համար անհրաժեշտ ինստիտուցիոնալ զարգացում, այդ թվում՝ այնպիսի կառույցների հիմնում և գործարկում, ինչպիսիք են Գնահատման և թեստավորման ազգային կենտրոնը, Մասնագիտական կրթության և ուսուցման զարգացման ազգային կենտրոնը, Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոնը, Ակադեմիական փոխճանաչման և շարժունության ազգային տեղեկատվական կենտրոնը, Բժշկահոգեբանամանկավարժական գնահատման կենտրոնը, Ուսուցման ազգային հիմնադրամը, ինչպես նաև տարբեր այլ կրթական աջակցության կենտրոններ, որոնք կոչված են ապահովել և պաշտպանել որակյալ կրթություն ստանալու Հայաստանի Հանրապետության քաղաքացիների իրավունքը:
- Համաշխարհային բանկի կողմից ֆինանսավորվող «Կրթության որակ և համապատասխանություն» ծրագիրը, որը մեծ աջակցություն տրամադրեց ՀՀ կառավարությանն ուսուցիչների

13 Բոլոնյան գործընթացն իրենից ներկայացնում է 1999թ. մեկնարկած նախարարական հանդիպումների և եվրոպական երկրների միջև կնքված համաձայնագրերի շարք, որը կոչված է ապահովել բարձրագույն կրթության որակավորման և համակարգերի համադրելիությունը, համատեղելիությունը և հետևողականությունը: Բոլոնյան գործընթացի շնորհիվ 2010թ. ստեղծվեց Բարձրագույն կրթության եվրոպական տարածքը (ԲԿԵՏ): 2005 թվականին Հայաստանը դարձավ Բոլոնյան գործընթացի լիիրավ անդամ: http://www.ehea.info/country-details.aspx?countryId=4

14 Մինչև 2011թ. միջնակարգ կրթությունը ներառում էր տարրական դպրոց՝ 1-3-րդ դասարաններ, հիմնական դպրոց՝ 1-8-րդ դասարաններ և ընդհանուր միջնակարգ դպրոց՝ 9-10-րդ դասարաններ: 2011թ. կրթական բարեփոխումներից հետո դպրոցական աստիճանները սահմանվեցին հետևյալ կերպ՝ տարրական դպրոց՝ 1-4-րդ դասարաններ, հիմնական դպրոց՝ 1-9-րդ դասարաններ և ավագ դպրոց՝ 10-12 դասարաններ:

15 Բարեփոխումների հիմնական սկզբունքներն ամրագրված էին 2005թ. «Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց կրթության մասին» ՀՀ օրենքում: Բացի այդ 2014թ. դեկտեմբերին ընդունված «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին օրենքի համաձայն՝ հատուկ դպրոցները վերածվում են տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնների:

հմտությունների և ատեստավորման կանոնների կատարելագործման, ավագ դպրոցների կահավորման և տեխնիկական հագեցման, ինչպես նաև նախադպրոցական կրթության խթանման նպատակով, որոնք դիտարկվում են որպես տարրական դպրոցի մակարդակով կրթության որակի բարելավման և բոլոր երեխաների համար հավասար մեկնարկային պայմանների ապահովման նախապայման: Ծրագիրը նպաստել է նաև ուսումնական ծրագրերի վերանայմանը, ինչպես նաև խոցելի ընտանիքներից երեխաներին անվճար բաժանվող նոր դասագրքերի մշակմանն ու տպագրմանը:[16]

- Մի շարք մասնավոր նախաձեռնություններ, որոնց աջակցում է ՀՀ կառավարությունը, ինչպիսիք են՝ ԹՈՒՄՈ ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոնը, «ԱՅԲ» դպրոցը, «Աշխարհի միացյալ քոլեջներ» ցանցի մաս կազմող Դիլիջանի միջազգային դպրոցը:

Այս բարեփոխումներից շատերը դեռևս ընթացքում են, իսկ դրանցից ակնկալվող հիմնական բարելավումներն ու արդյունքները դեռևս իրականություն չեն դարձել: Կրթության որակը կարիք ունի լուրջ բարելավումների: Մի շարք (ՀԶՆ-ների հետ կապված) ցուցանիշներ, ինչպիսիք են՝ հանրակրթական դպրոցներից դուրս մնացած աշակերտների թվաքանակի աճը, ինչպես նաև բարձրագույն կրթության համակարգում աղքատների ընդգրկվածության ցածր մակարդակը, վկայում են համակարգի թերությունների մասին: Բացի այդ, կրթության գծով հատկացվող հանրային ֆինանսավորման նվազեցումը վերջին չորս տարիներին կարող է վտանգել բարեփոխումների իրականացումը:

Համախառն ընդգրկվածություն դպրոցներում, %



5-րդ դասարան հասած աշակերտների մասնաբաժինը 1-ին դասարան ընդունվածների թվաքանակի նկատմամբ, %



Գծապատկեր 9. Աղբյուր՝ ՀՀ ԱՎԾ, Հայաստանի սոցիալական վիճակը, 2015թ.

Ընդգրկվածություն տարրական դպրոցում և միջնակարգ դպրոցի բարձր դասարաններում: Ընդհանուր առմամբ, ընդգրկվածության համախառն գործակիցը Հայաստանում բարձր է՝ աղջիկների և տղաների գրեթե հավասար հարաբերակցությամբ: Հայաստանի գրեթե ողջ բնակչությունը գրագետ է. բնակչության ընդամենը 0,3%-ը որևէ կրթություն չի ստացել: Այդուհանդերձ, միջին և ավագ դպրոցներում համախառն ընդգրկվածության բարձր ազգային թիրախները դեռևս չեն կատարվել, իսկ ներկայիս միտումների պահպանման դեպքում հնարավոր է, որ համապատասխանաբար 99%-ի և 95%-ի չափով սահմանված թիրախները չկատարվեն:

Տարրական դպրոցն ավարտած (հինգերորդ դասարան հասած) աշակերտների թվաքանակը շարունակաբար աճել է 2000-2014 թվականներին: Բայց և այնպես, 2005 թվականից ի վեր գրանցվել է հակառակ միտում, իսկ Հայաստանում տարրական դպրոցից դուրս մնացածների 6% կազմող ցուցանիշն անհանգստության տեղիք է տալիս:[17]

Հայաստանում հիմնական կրթությունը (1-9 դասարաններ) պարտադիր է: Հիմնական կրթությունն

16 Երեխաներ՝ ըստ ունեցած միջոցների ընտանեկան նպաստի ծրագրում ընդգրկված ընտանիքներից:
17 ՀՀ ԱՎԾ, ՀԶՆ տվյալների շտեմարան

ավարտելուց հետո 15-ից 17 տարեկանների շուրջ 14%-ը[18] չի շարունակում կրթությունը[19]: Ավագ դպրոցում ընդգրկվածության և ուսումնական առաջընթացի ապահովման գործընթացը եղել է անկայուն և պակաս արդյունավետ: Մինչև 2010 թվականը գրանցվել էր զգալի առաջընթաց, երբ միջնակարգ դպրոցի ավագ դասարաններում ընդգրկվածությունը կազմում էր 84,4%, սակայն իրավիճակը վատթարացավ, և 2013 թվականին այդ ցուցանիշն իջավ մինչև 72,4%:

Դուրս մնացածների նման թիվը մտահոգիչ է, քանի որ միջնաժամկետ և երկարաժամկետ հեռանկարում այս իրողությունը կարող է թուլացնել երկրի կրթական մակարդակը՝ դրանից բխող հետագա սոցիալական և տնտեսական հետևանքներով: Ավագ դպրոցից դուրս մնացածների թվի նման աճի հնարավոր պատճառներից են՝

- դժվարությունները՝ կապված այն հանգամանքի հետ, որ 12-ամյա նոր հանրակրթական համակարգին անցնելուց հետո (2010-2011 թվականներ), ավագ դպրոցները պարտադիր չեն համարվում, իսկ որոշ դեպքերում գոյություն ունեն դպրոցների հասանելիության հետ կապված բարդություններ. 2017 թվականից 12-ամյա կրթությունը դառնում է պարտադիր և անվճար: Այս փոփոխությունը կարող է անդրադառնալ ավագ դպրոցներում ընդգրկվածության վրա, այսինքն՝ կարող է նպաստել հանրակրթությունից դուրս մնացածների թվի նվազեցմանը.
- գյուղաբնակ աղքատների մոտ ավագ դպրոցում կրթությունը շարունակելու շահագրգռվածության ցածր ցուցանիշը՝ պայմանավորված աշխատանքի հնարավորությունների սահմանափակությամբ.
- հաշվարկային հիմքում կարող են տեղ գտնել որոշ շեղումներ, քանի որ այս տարիքային խմբում դիտվում է չարձանագրված արտագաղթ, իսկ հաշվարկները սովորաբար հիմնված են մշտական, այլ ոչ թե փաստացի բնակչության թվի վրա, և (կամ) որոշ աշակերտներ դուրս են մնում արհեստագործական կամ մասնագիտական դպրոցում, այլ ոչ թե ավագ դպրոցում ընդգրկվելու նպատակով.
- աղքատ ընտանիքների երեխաները կրթությունը շարունակելու առումով գտնվում են ոչ նպաստավոր դիրքում և փորձում են վաղ տարիքից աշխատանք գտնել և գումար վաստակել:

Կրթության ոլորտի կարևոր թերություններից է ուսումնական հաստատություններում բնակչության աղքատ խմբերի ընդգրկվածության ցածր մակարդակը: 2013 թվականին հիմնական կրթության համակարգում երեխաների ընդգրկվածության գործակիցը կազմում էր ոչ աղքատ տնային տնտեսություններում 93%, աղքատ (բացառությամբ ծայրահեղ աղքատ) տնային տնտեսություններում՝ 89%, իսկ ծայրահեղ աղքատ տնային տնտեսություններում՝ 87%:[20] Դպրոցից դուրս մնացածների թիվը կազմում էր աշակերտների ընդհանուր թվի 0,1%-ը, ընդ որում՝ դուրս մնացածների շուրջ կեսը որպես պատճառ բերում էր ընտանիքի վատ կենսապայմանները:

Գենդերային հավասարություն՝ աղջիկների համախառն ընդգրկվածություն տղաների համեմատ, 2014 թ,



Գծապատկեր 10. Աղբյուր՝ ՀՀ ԱՎԾ, Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը, 2014թ.

18 Համաձայն ՀՀ կրթության և գիտության նախարարության գնահատականների՝ հիմնական կրթության շրջանավարտների 4%-ը չի շարունակում կրթությունը: Սակայն, զեկույցում օգտագործվել է պաշտոնական վիճակագրությունը՝ 14%: Այս անհամապատասխանությունը ցույց է տալիս, որ հնարավոր է՝ կարիք լինի վերանայելու կրթական ընդգրկվածության տվյալները կազմելու և վերլուծելու մեթոդաբանական մոտեցումները և ընթացակարգերը:

19 Համաձայն 2013թ. Տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջացված հետազոտության՝ հարցվածների միայն 1,5%-ն է նշել, որ չի ցանկանում շարունակել ուսումը, 1,7%-ը վատ առողջական վիճակը նշել է որպես կրթությունը չշարունակելու պատճառ, 1,7%-ը նշել է , որ ուսումը շարունակելու համար կրթական ծառայությունները շատ թանկ են:

20 Հանրակրթական դպրոցում համախառն ընդգրկվածությունն բնակչության ամենաաղքատ քվինտիլային խմբում կազմում էր՝ 86%, իսկ ամենահարուստ քվինտիլային խմբում՝ 91%: Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը, 2014թ.

Գենդերային հավասարությունը կրթության ոլորտում: Հանրակրթությունը հավասարապես հասանելի է ինչպես տղաների, այնպես էլ աղջիկների համար՝ անհավասարության աննշան դրսևորումներով (գծապատկեր 10):

Ավագ դպրոցի մակարդակով դիտվում է աղջիկների ընդգրկվածության զգալիորեն բարձր ցուցանիշ: Այս իրողության հնարավոր պատճառներից կարող են լինել հետևյալ հանգամանքները.

- տղաները սկսում են ընտանիքի համար եկամուտ վաստակել,
- տղաների շրջանում դիտվում է կրթությունը շարունակելու ցածր շահագրգռվածություն,
- վաղ արտագաղթ տղաների շրջանում:

Աշակերտների և ուսանողների գիտելիքների մակարդակ: Կրթության որակի գնահատման ազգային և միջազգային համակարգերով սահմանված չափորոշիչներին համապատասխանող գիտելիքներ ունեցող աշակերտների և ուսանողների մասնաբաժինը չի չափվում, քանի որ չի սահմանվել որևէ թիրախ, իսկ համապատասխան տեղեկություններ չեն հավաքագրվում:

Ըստ ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի տվյալների՝[21] **երկտարեցի աշակերտների մասնաբաժինը ցածր է. հիմնական դպրոցում այն կազմում է 0,3% (որից 59%-ն աղջիկներ են), իսկ տարրական դպրոցում՝ 0,2%:**[22]



Գծապատկեր 11. Աղբյուր՝ Փոխակերպային մշտադիտարկում հավասարության խթանման համար (TransMonEE), 2015թ. տվյալների շտեմարան, ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի՝ ԱՊՀ -ի և Կենտրոնական ու Արևելյան Եվրոպայի տարածաշրջանի երկրների գրասենյակ (թողարկվել է 2015թ. հունիսին)



Գծապատկեր 12. Աղբյուր՝ ՀՀ ԱՎԾ, ՀՀ սոցիալական վիճակը

21 «Երկտարեցի» են համարվում այն աշակերտներն ու ուսանողները, ովքեր վատ առաջադիմության պատճառով երկու տարի մնում են նույն դասարանում:

22 Փոխակերպային մշտադիտարկում հավասարության խթանման համար (TransMonEE), 2015թ. տվյալների շտեմարան, ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի՝ ԱՊՀ-ի և Կենտրոնական ու Արևելյան Եվրոպայի տարածաշրջանի երկրների գրասենյակ (թողարկվել է՝ 2015թ. հունիսին):

Աղքատ բնակչության համախառն ընդգրկվածություն բարձրագույն կրթության համակարգում: Ընդհանուր առմամբ, 2010 թվականից հետո մասնագիտական և բարձրագույն կրթության համակարգում ընդգրկվածության աստիճանը բարձրացել է, ինչն արտացոլում է այս հատվածում գրանցված դրական միտումները: 2004-2014 թվականներին բուհական ուսումնական ծրագրերում ընդգրկվածությունն աճել է գրեթե 4 անգամ:[23]

Արձանագրվել է աղքատության լուրջ ազդեցություն կրթական համակարգում ընդգրկվածության վրա: Բնակչության ամենահարուստ քվինտիլային խմբում բարձրագույն կրթության համակարգում ընդգրկվածության ցուցանիշը երեք անգամ գերազանցում է նույն ցուցանիշն ամենաաղքատ քվինտիլային խմբում:[24]

Վերջին տասնամյակում նվազել է տարբերությունը բուհերում աղքատների և ոչ աղքատների ընդգրկվածության համախառն մասնաբաժիններում: 2005-ից 2013 թվականներն ընկած ժամանակահատվածում աղքատների ընդգրկվածության հարաբերակցությունը ոչ աղքատների ընդգրկվածությանը բարելավվել է 26%-ից կազմելով 51%: Այսպիսով, համապատասխան ՀԶՆ-ի ներքո սահմանված 30% թիրախը կատարվել է:

Կրթության գծով պետական ծախսեր: Կրթության հասանելիության և որակի բարձրացման համար երկրի նախաճգնաժամային զարգացման ծրագրերով նախատեսվում էր կրթությանը հատկացվող պետական ծախսերի աճ: Ակնկալվում էր, որ կրթության ոլորտին պետական հատկացումների մասնաբաժինը կկայունանա ՀՆԱ-ի աճի պայմաններում՝ մինչև 2015 թվականը հասնելով 4,5% հենանիշին: Այդուհանդերձ, տնտեսական անկումը թելադրեց սոցիալական գծով պետական ծախսերի կրճատում, մասնավորապես՝ կրթության ոլորտում, ինչն իր հերթին խոչընդոտեց բարեփոխումների պատշաճ իրագործումը և թիրախների կատարումը: Չնայած պետական ծախսերի անվանական աճին՝ 2008-2014 թվականներին նվազել է դրանց հարաբերակցությունը ՀՆԱ-ին:

Եվրոպական միության և Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության անդամ պետությունների համեմատ՝ կրթության գծով պետական ծախսերը շարունակում են մնալ ցածր մակարդակի վրա. 2013 թվականի դրությամբ ծախսերը 1,7 անգամ զիջել են Կենտրոնական Ասիայի և Արևելյան Եվրոպայի ցուցանիշներին և գրեթե 2 անգամ պակաս են եղել Եվրոպական միության երկրներից:[25]

Կրթության գծով պետական ծախսերի առավելագույն մասնաբաժինը կազմել են հատկացումները միջնակարգ կրթության գծով: Տարրական կրթության հետ մեկտեղ՝ դրանք կազմել են կրթության գծով պետական հատկացումների գրեթե 65%-ը: Մասնագիտական կրթությունը՝ արհեստագործական ուսուցումը և բարձրագույն կրթությունը միասին՝ գրեթե հավասար մասնաբաժիններով, կազմել է հատկացումների ընդամենը 18%-ը:



Գծապատկեր 13. Աղբյուր՝ ՀՀ ֆինանսների նախարարություն, Պետական բյուջե

23 Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը, 2014թ.
24 Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը, 2014թ.
25 Հայաստանի Հանրապետության հեռանկարային զարգացման ծրագիր, 2014-2025 թթ.

Աղյուսակ 1. Պետական բյուջեի հոդվածներ՝ ըստ գործառնական դասակարգման, 2013-2015 թթ.[26]

	2013, փաստացի	2014, փաստացի	2015, պլանա-վորված	2013	2014	2015
Կրթության գծով, ընդամենը միլիարդ ՀՀ դրամ	103,1	115,8	125,5	100,0%	100,0%	100,0%
Նախադպրոցական	0,276	0,481	0,596	0,3%	0,4%	0,5%
Տարրական դպրոց	23,4	23,6	27,5	22,8%	20,4%	21,9%
Ընդհանուր միջնակարգ կրթություն	48,2	53,0	54,2	46,8%	45,8%	43,2%
Հիմնական դպրոց	30,6	30,5	36,3	29,7%	26,3%	28,9%
Ավագ դպրոց	17,6	22,5	17,9	17,1%	19,4%	14,2%
ՄԿՈՒ	6,2	7,5	11,4	6,0%	6,5%	9,1%
Բարձրագույն կրթություն	7,9	8,7	11,4	7,7%	7,5%	9,1%
Հետբուհական կրթություն	0,687	0,8	0,841	0,7%	0,7%	0,7%
Արտադպրոցական կրթություն	2,8	3,6	4,7	2,7%	3,1%	3,8%

Մարտահրավերներ և հեռանկարներ[27]

Ընդգրկվածության մարտահրավեր: Ինչպես հիմնական, այնպես էլ ավագ դպրոցներից դուրս մնացածների թվի աճն անհանգստության տեղիք է տալիս:

Այս մարտահրավերի հաղթահարման համար հիմնական առաջնահերթություններից մեկը պետք է լինի բավարար ֆինանսավորումը և 12-ամյա հանրակրթական համակարգի անցնելու հետ կապված ռիսկերի արդյունավետ չեզոքացումը, հատկապես՝ բոլորի համար ավագ դպրոցի հասանելիության ապահովումը:

Կրթության որակի մարտահրավեր: Միջնակարգ դպրոցներում կրթության ցածր որակի պատճառով աշակերտների մեծ մասը բուհական ընդունելության քննությունները հանձնելու համար բավարար գիտելիքներ ստանալու նպատակով դիմում է կրկնուսույցների ծառայությանը: Նման իրավիճակն ունի մի շարք բացասական հետևանքներ՝

- այն զրկում է աշակերտներին դպրոց հաճախելու շարժառիթներից, քանի որ դպրոց հաճախելու փոխարեն աշակերտները նախընտրում են պարապել կրկնուսույցների մոտ.
- կրթության ոլորտում աճում է անհավասարությունը, քանի որ աղքատ ընտանիքները չեն կարող իրենց թույլ տալ վճարել կրկնուսույցների ծառայությունների համար, իսկ աղքատ ընտանիքներից երեխաները հայտնվում են ոչ նպաստավոր դիրքում և պակաս մրցունակ են կրթության բարձր մակարդակներում, որովհետև նրանց հասանելի են միայն դպրոցական համեմատաբար ցածրորակ դասերը:

Անհավասարության մարտահրավեր: Մասնագիտական, այդ թվում՝ արհեստագործական և բարձրագույն կրթության համակարգում աղքատ և ոչ աղքատ բնակչության խմբերի ընդգրկվածության հարցում ներկայումս դիտվում է անհավասարություն: Բնակչության ամենահարուստ քվինտիլային խմբի ընդգրկվածության ցուցանիշը երեք անգամ գերազանցում է նույն ցուցանիշն ամենաաղքատ քվինտիլային խմբում: Դիտվում է նաև դպրոցներից դուրս մնացածների թվի աճ, հատկապես՝ աղքատների շրջանում: Բացի աղքատության կրճատումից հարկավոր է մշակել և իրականացնել թիրախային հանրային միջոցառումներ, որոնք ուղղված կլինեն կրթական համակարգի բոլոր մակարդակներում բոլորի ընդգրկվածության խրախուսմանն ու խթանմանը: Օրինակ՝ մասնակի լուծում կարող է դառնալ պետական սուբսիդավորումը՝ խոցելի խմբերից ուսանողներին կրթաթոշակների, ուսանողական վարկերի և դրամաշնորհների հատկացման տեսքով:

Կարելի է դիտարկել 12-ամյա հանրակրթությունը պարտադիր դարձնելու հնարավորությունը, ընդ որում՝ նման պարագայում հարկ է հատուկ ուշադրություն դարձնել գյուղական շրջաններում դպրոցների հասանելիության ապահովման խնդրին:

26 ՀՀ ֆինանսների նախարարություն, Պետական բյուջե 2013-2015 թթ.

27 Բոլոր ոլորտների վրա տարածվող պետական ֆինանսավորման մարտահրավերները քննարկվում են ՀԶՆ 1-ի հետ կապված դժվարություններին նվիրված բաժնում:

3

ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ՀԱՎԱՍԱՐՈՒԹՅԱՆ ԽԹԱՆՈՒՄ ԵՎ ԿԱՆԱՆՑ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆԴԼԱՅՆՈՒՄ

ՆՊԱՏԱԿ 3. ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ՀԱՎԱՍԱՐՈՒԹՅԱՆ ԽԹԱՆՈՒՄ ԵՎ ԿԱՆԱՆՑ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆԴԼԱՅՆՈՒՄ

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԹԻՐԱԽՆԵՐ	ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ
Թիրախ 3.Ա. Մինչև 2005 թվականը վերացնել գենդերային անհավասարությունը տարրական և միջնակարգ կրթության մակարդակներում, իսկ մինչև 2015 թվականը՝ կրթության բոլոր մակարդակներում	3.1 Աղջիկների և տղաների թվաքանակների հարաբերակցությունը տարրական, միջնակարգ և բարձրագույն կրթության համակարգերում 3.2 Վարձու աշխատանքով զբաղված կանանց մասնաբաժինը ոչ գյուղատնտեսական հատվածում 3.3 Կանանց մասնաբաժինը ՀՀ Ազգային ժողովի պատգամավորների թվաքանակում

ԱԶԳԱՅԻՆ ԹԻՐԱԽՆԵՐ	ԱԶԳԱՅԻՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ
Թիրախ 4. Մինչև 2015 թվականը բարձրացնել քաղաքական որոշումների կայացման գործընթացում կանանց մասնակցությունը	1. Կանանց մասնաբաժինն Ազգային ժողովի պատգամավորների, նախարարների, մարզպետների և փոխնախարարների թվաքանակում,% 2. Կանանց մասնաբաժինը համայնքների ղեկավարների ընդհանուր թվաքանակում,% 3. Կանանց շրջանում գործազրկության մակարդակի հարաբերակցությունը տղամարդկանց շրջանում գործազրկության մակարդակին

ՀԶՆ 3. Միավորների հաշվարկ

ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ	1999/2000	2005	2008	2010	2012	2013	2014	2015 թիրախ	
ԹԻՐԱԽ 4. ՄԻՆՉԵՎ 2015 ԹՎԱԿԱՆԸ ԲԱՐՁՐԱՑՆԵԼ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԿԱՅԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ ԿԱՆԱՆՑ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ									
1. Կանանց մասնաբաժինն Ազգային ժողովի պատգամավորների, նախարարների, մարզպետների և փոխնախարարների թվաքանակում,% Աղբյուր՝ Կանայք և տղամարդիկ Հայաստանում			6,7	9	11	11	10,7	>25	Չկատարված թիրախ
2. Կանանց մասնաբաժինը համայնքների ղեկավարների ընդհանուր թվաքանակում,% Աղբյուր՝ Կանայք և տղամարդիկ Հայաստանում				2,6		2,1		>10	Չկատարված թիրախ
3. Կանանց շրջանում գործազրկության մակարդակի հարաբերակցությունը տղամարդկանց շրջանում գործազրկության մակարդակին Աղբյուր՝ Աշխատանքի շուկան Հայաստանում	1,09	1,44	0,77	1,25	1,10	1,26	1,23	<1,3	Կատարված թիրախ

Համատեքստ

ՀՀ Սահմանադրությունը երաշխավորում է մարդու հիմնարար իրավունքները:[28] «Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման մասին» ՀՀ օրենքով, որն ընդունվել է 2013 թվականի մայիսի 20-ին ամրագրվում են երաշխիքներ և կարգավորվում են կանանց և տղամարդկանց հավասար հնարավորություններն ու իրավունքները քաղաքական, սոցիալական, տնտեսական, մշակութային և հանրային կյանքի այլ ոլորտներում: 1993 թվականին Հայաստանը վավերացրեց Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին կոնվենցիան (ԿՆԽՎԿ): Հայաստանը վավերացրել է ավելի քան 50 կոնվենցիաներ և այլ միջազգային փաստաթղթեր, որոնք կոչված են վերացնել խտրականությունը (այդ թվում՝ կանանց նկատմամբ) և հասնել ժողովրդավարական կառավարման, գենդերային հավասարության և մարդու իրավունքների ավելի բարձր մակարդակի:

Քաղաքականությունների մակարդակով ՀՀ կառավարությունը 2004-2010 և 2011-2015 թվականներին իրականացրել է գենդերային հավասարության խթանմանն ուղղված Ազգային միջոցառումների ծրագրեր, 2010 թվականին ընդունել է Գենդերային քաղաքականության հայեցակարգը, իսկ 2013 թվականին՝ «Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման մասին» ՀՀ օրենքը:

Հայաստանն առաջընթաց է արձանագրել կրթական և հատկապես բարձրագույն կրթության համակարգում, ինչպես նաև որոշումների կայացում ենթադրող պաշտոններում կանանց մասնակցության աճի ուղղությամբ: Այդուհանդերձ, գենդերային անհավասարությունը շարունակում է լուրջ մարտահրավեր ներկայացնել: Կանայք ի վիճակի չեն իրացնել օրենքով երաշխավորված հնարավորությունները, քանի որ աշխատատեղերը և հատկապես քաղաքական և ղեկավար պաշտոնները դեռևս սահմանափակ են կանանց համար, ինչը մեծացնում է գործազրկության և աղքատության վտանգը:

Մի շարք ուսումնասիրություններ հաստատում են այն հանգամանքը, որ անհավասարությունը շարունակում է մարտահրավեր լինել հայաստանյան հասարակությունում: «Գենդերային բարոմետր» հետազոտության շրջանակներում հարցվածների գրեթե երկու երրորդը համաձայն է, որ հայաստանյան հասարակությունում տղամարդկանց և կանանց միջև առկա է անհավասարություն, ընդ որում՝ նման պնդման հետ համամիտ չէ հարցվածների միայն 8%-ը:[29] Բացի այդ, հարցվածների մեծամասնությունը համարում է, որ կանանց իրավունքները խախտվում են բոլոր ոլորտներում՝ ընտանիքում, քաղաքականությունում, աշխատավայրում և այլուր: Բարձրաստիճան ղեկավարների շրջանում ավելի մեծ թիվ են կազմում տղամարդիկ, մինչդեռ կանայք ավելի հաճախ զբաղեցնում են ցածրաստիճան պաշտոններ: Կանայք ավելի հաճախ են զբաղվում այնպիսի աշխատանքով, որը քիչ է համապատասխանում նրանց մասնագիտական որակավորումներին և գիտելիքներին: Տղամարդկանց համեմատ կանայք նաև պակաս բավարարված են իրենց աշխատավարձով և մասնագիտական զարգացման հնարավորություններով: Գենդերային հիմքով բռնությունը նաև պայմանավորված է հասարակությունում կանանց զբաղեցրած ցածր դիրքով, ինչպես նաև նրանց տնտեսական կախվածությամբ:[30]

Նորածինների սեռերի միջև անհավասարակշռության մակարդակին նվիրված ՄԱԿ-ի բնակչության հիմնադրամի վերջերս իրականացված հետազոտության տվյալները վկայում են, որ անկախությունից ի վեր Հայաստանում աճել է նորածինների սեռերի անհավասարությունը, որն ըստ գնահատականների 2011 թվականին կազմում է ծնված 100 աղջկա հաշվով 114 տղայի ծնունդ:[31]

Կարծիք կա, որ Հայաստանում գենդերային անհավասարության հիմնական պատճառներն արմատացած են մշակույթում[32] և պայմանավորված են կանանց և տղամարդկանց ավանդականորեն վերագրվող դերերի ընկալմամբ և ընդունմամբ ընտանիքում, աշխատավայրում, ազգականների նեղ համայնքում կամ հանրության լայն շրջանակներում:

28 Հոդված 14.1 «Բոլոր մարդիկ հավասար են օրենքի առջև: Խտրականությունը, կախված սեռից, ռասայից, մաշկի գույնից, էթնիկական կամ սոցիալական ծագումից, գենետիկական հատկանիշներից, լեզվից, կրոնից, աշխարհայացքից, քաղաքական կամ այլ հայացքներից, ազգային փոքրամասնությանը պատկանելությունից, գույքային վիճակից, ծնունդից, հաշմանդամությունից, տարիքից կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներից, արգելվում է»:

29 «Գենդերային բարոմետր» հետազոտություն, որն իրականացվել է Գենդերային հետազոտությունների և առաջնորդության ԵՊՀ կենտրոնի կողմից ԱՄՆ ՄԶԳ-ի ֆինանսավորմամբ 2014 թվականի դեկտեմբերին:

30 Հայաստանում ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամի «Ընդդեմ գենդերային բռնության Հարավային Կովկասում» ծրագիր (ՄԱԲՀ ԸԳԲ), 2011 թ, http://unfpa.am/sites/default/files/DV_survey_eng.pdf:

31 «Նորածինների սեռերի անհամամասնությունը Հայաստանում. ժողովրդագրական տվյալներ և վերլուծություն», 2013թ.http://unfpa.am/sites/default/files/Sex_Imbalance_report_Eng_final-with%20cover-final.pdf

32 Աղասի Թադևոսյան, «Գենդերային անհավասարություն և առօրյա պրակտիկաներ. հիմնախնդիրներ և մարտահրավերներ», Գենդերային հետազոտությունների և առաջնորդության կենտրոն, 2015թ.

Թիրախ 4. Մինչև 2015 թվականը բարձրացնել քաղաքական որոշումների կայացման գործընթացում կանանց մասնակցությունը

Կրթություն: Կրթության համակարգում ընդգրկվածության առումով դիտվում է գենդերային հավասարություն: Կրթությունը հասանելի է բոլորի համար՝ անկախ գենդերային պատկանելությունից: Ավելին, որքան ավելի բարձր է ակադեմիական մակարդակը, այնքան ավելի բարձր է աղջիկների թվաքանակը տղաների համեմատ:

Որքան ավելի բարձր է կրթական մակարդակը, այնքան ավելի բարձր է աշխատանք գտնելու հավանականությունը: Բայց և այնպես, նույնիսկ լավ կրթությամբ կանայք բախվում են դժվարությունների լավ վարձատրվող աշխատանք գտնելու կամ որոշումների կայացման հետ կապված բարձրաստիճան ղեկավար պաշտոններ զբաղեցնելու հարցում ինչպես մասնավոր, այնպես էլ պետական հատվածում:

Մասնագիտացված և մասնագիտական կրթության համակարգում աղջիկների հարաբերակցությունը տղաներին



Գծապատկեր 14. Աղբյուր՝ ՀՀ ԱՎԾ

Կանանց շրջանում գործազրկության մակարդակի հարաբերակցությունը տղամարդկանց շրջանում գործազրկության մակարդակին



Գծապատկեր 15. Աղբյուր՝ ՀՀ ԱՎԾ

Զբաղվածություն: Կանանց տնտեսական ակտիվության ցուցանիշը տղամարդկանց համեմատ ավելի ցածր է և կազմում է 55%՝ 72%-ի համեմատ, ընդ որում այս գործակիցը վերջին տասնամյակում մնացել է գրեթե անփոփոխ: Իրական գործազրկության մակարդակը երիտասարդության շրջանում եղել է հատկապես բարձր. այն գերազանցում է գործազրկության միջին ազգային ցուցանիշը շուրջ 2,5 անգամ (35%՝ 16%-ի համեմատ): Գնալով աճում է տղաների համեմատ այն աղջիկների թիվը, ովքեր չեն սովորում և չունեն աշխատանք: 2013 թվականին, ինչպես և անցած տասնամյակի ողջ ընթացքում, 15-ից 24 տարեկանների գրեթե 37%-ը, իսկ 25-ից 29 տարեկանների 40%-ը չէր սովորում, չուներ որևէ աշխատանք: Նույն ցուցանիշները երիտասարդ աղջիկների պարագայում կազմում էին համապատասխանաբար 40% և 59%: Բարձրագույն կրթություն ունեցող կանանց շրջանում դիտվում է գործազրկության ավելի բարձր մակարդակ, քան նույնանման կրթական մակարդակ ունեցող տղամարդկանց պարագայում (2013 թվականին՝ համապատասխանաբար 20% և 13%):[33]

Միաժամանակ հարկ է նշել, որ կանանց մասնակցությունը պետության ֆինանսավորմամբ իրականացվող աշխատաշուկայի ակտիվ ծրագրերում երկու անգամ ավելի բարձր է տղամարդկանց մասնակցությունից:

Կնոջ գլխավորությամբ տնային տնտեսություններն ավելի մեծ հավանականություն ունեն հայտնվելու աղքատության մեջ, քան տղամարդու: 2013 թվականի ՏՏԿԱՀ-ի տվյալների համաձայն՝ կնոջ գլխավորությամբ տնային տնտեսությունների 36,4%-ն ապրում էր աղքատության մեջ, ընդ որում՝ աղքատություն մակարդակը նրանց շրջանում 2008 թվականի համեմատ աճել էր 6 տոկոսային կետով: Կանանց կողմից ղեկավարվող և երեխաներ ունեցող տնային տնտեսություններում աղքատ լինելու հավանականությունը 14 տոկոսային կետով ավելի բարձր է: Միաժամանակ կանանց և տղամարդկանց միջև աղքատության մակարդակի մասով տարբերություններ չեն դիտվում:

33 2014 թվականին գործազրկության նպաստների վերացումից հետո ՀՀ կառավարությունն իր 2014 թվականի որոշմամբ նախաձեռնել է զբաղվածությունը և աշխատաշուկայում մրցունակությունը խթանող 12 տեսակի ծրագրեր:

Կանանց միջին աշխատավարձի հարաբերակցությունը տղամարդկանց միջին աշխատավարձին



Գծապատկեր 16. Աղբյուր՝ ՀՀ ԱՎԾ

Չնայած 2000 թվականից ի վեր արձանագրվել է աշխատավարձերի անհավասարության զգալի նվազեցում, 2013 թվականի դրությամբ կանայք, ընդհանուր առմամբ, վաստակում էին շուրջ 34%-ով ավելի քիչ, քան՝ տղամարդիկ: Աշխատավարձերի անհավասարությունը հասել է առավելագույն մակարդակի հանքարդյունաբերական ոլորտում և կազմել է 50%,[34] իսկ արվեստի, ժամանցի, հանգստի, հանրային սննդի, հյուրանոցային և գյուղատնտեսական ոլորտներում աշխատավարձերի տարբերությունն ամենափոքրն է: Աշխատավարձերի տարբերությունն արտադրության, ֆինանսների և ապահովագրության ոլորտներում կազմել է 40%, մինչդեռ հանրային կառավարման, պաշտպանության և առողջապահության ոլորտներում՝ 30%:

Կանայք քաղաքական և կառավարական պաշտոններում: Վերջին տասնամյակում արձանագրվել է պետական և մասնավոր հատվածում կանանց զբաղեցրած բարձր վարձատրվող ղեկավար պաշտոնների մասնաբաժնի աճ, սակայն դրանց թիվը դեռևս շատ փոքր է (Աղյուսակ 2): Գենդերային հավասարության ուղղությամբ սահմանված թիրախի գծով՝ Հայաստանը հետ է մնում իր ցուցանիշների կատարումից: Ամենաթույլ արդյունքները գրանցվել են հենց այս ցուցանիշի ուղղությամբ:

Աղյուսակ 2. Քաղաքական և կառավարական պաշտոններ զբաղեցնող կանանց մասնաբաժին (%)

	2004	2008	2010	2012	2014
ՀՀ Ազգային ժողովի պատգամավորներ	4	6,7	9	11	10,7
Նախարարներ և փոխնախարարներ			10	11	11
Նախագահի աշխատակազմ			39,2	36,6	37,6
Կառավարության աշխատակազմ			39	46	46,1
Համայնքների ղեկավարներ	1.8	2,7	2,6	2,2	2,1
Դատավորներ և իրավաբաններ		22	35	38	34

Աղբյուր՝ ՀՀ ԱՎԾ, Կանայք և տղամարդիկ Հայաստանում, 2014թ.

34 Հարկ է նշել, որ աշխատավարձերի տարբերությունները հիմնականում պայմանավորված են հանքարդյունաբերության հատվածի առանձնահատկություններով, որոնք օբյեկտիվորեն և ավանդաբար եղել են տղամարդկանց, այլ ոչ թե կանանց բնորոշ ոլորտներ:

Քաղաքական և կառավարական պաշտոններում կանանց մասնակցությունը շարունակում է լինել շատ ցածր: Կանանց մասնակցությունն աճել է Երևանի քաղաքապետարանում, ՀՀ կառավարության աշխատակազմում, ինչպես նաև խորհրդարանում, սակայն մասնակցությունը շատ ցածր է տարածքային կառավարման մարմինների և համայնքների ղեկավարների մակարդակով: Հայաստանի տնտեսության ոլորտում, գործարար աշխարհում, ինչպես նաև քաղաքական կյանքում կանայք զրկված են որոշումների կայացման հետ կապված պաշտոններում ներգրավված լինելու լայն հնարավորությունից: Թեև կին խորհրդարանականների թիվը եռապատկվել է, այն դեռևս շատ փոքր է (խորհրդարանական տեղերի 11%): Կանայք ունեն համայնքային կառավարմանը մասնակցելու սահմանակ հնարավորություններ (կանայք կազմում են համայնքների ղեկավարների ընդամենը 2,1%-ը), ընդ որում՝ կանայք գործնականում ներգրավված չեն տարածքային կառավարման մարմինների և քաղաքապետարանների ղեկավար աշխատանքում:

Ասվածը վկայում է այն մասին, որ չնայած կանանց իրավունքների և հնարավորությունների խթանման ուղղությամբ արձանագրված զգալի դրական փոփոխություններին և առաջընթացին՝ Հայաստանը դեռևս հետ է մնում քաղաքական և կառավարական պաշտոններում գենդերային հավասարության ապահովման գծով իր ստանձնած պարտավորությունների կատարումից:

Մարտահրավերներ և հեռանկարներ[35]

Գենդերային հավասարություն: Գենդերային հավասարությունը տնտեսական և սոցիալական կյանքի բոլոր ոլորտներում երաշխավորվում է ՀՀ Սահմանադրությամբ և օրենսդրությամբ: Այդուհանդերձ, կանայք Հայաստանում դեռևս չեն օգտվում հավասար հնարավորություններից և գտնվում են ոչ նպաստավոր դիրքում: Երկրի քաղաքական, տնտեսական և գործարար ոլորտում կանանց ընձեռված են որոշումներ կայացնելու սահմանափակ հնարավորություններ:

Հայաստանում գենդերային անհավասարությունը շարունակում է լուրջ մարտահրավեր լինել ապագայի համար:

Հարկ է նշել, որ այս իրավիճակն ունի պատմական և խորապես արմատացած մշակութային պատճառներ, ուստի դրա փոփոխության համար կպահանջվի ժամանակ, ինչպես նաև Կառավարության, քաղաքական կուսակցությունների, քաղաքացիական հասարակության կազմակերպությունների, կրթական հաստատությունների և լայն հանրության հետևողական ջանքերն ու համագործակցությունը:

ՀԶՆ-ների ցուցանիշներում արտացոլված չեն գենդերային հավասարության հետ կապված մի շարք այլ մարտահրավերներ, որոնք, սակայն, շատ կարևոր են և պահանջում են առանձնակի ուշադրություն: Դրանց թվում են՝

- նորածինների շրջանում սեռերի մեծ անհամամասնությունը. «Հայաստանում նորածինների սեռերի անհավասարության աճ է գրանցվել անկախության ձեռքբերումից ի վեր և, ըստ առկա գնահատումների, 2011 թվականին կազմում էր 114 տղա նորածին՝ յուրաքանչյուր 100 աղջիկ նորածնի հաշվով: Հայաստանում ակներև է նախածննդյան փուլում սեռի ընտրության հետևյալ երեք նախապայմանների առկայությունը՝ հայաստանյան հասարակության հայրիշխանական կառուցվածքը, որը միտված է տղաներին գերադասելու աղջիկներից, նախածննդյան տեխնոլոգիաների հասանելիությունը, որը հղիության արհեստական ընդհատման հնարավորության հետ միասին ապագա ծնողներին թույլ է տալիս խուսափել ոչ ցանկալի աղջիկ ունենալուց և ծնելիության ցածր մակարդակով պայմանավորված՝ զույգերի վերարտադրողական նպատակների փոփոխումը»:[36]
- Գենդերային հիմքով բռնությունը նաև պայմանավորված է հասարակությունում կանանց զբաղեցրած ցածր դիրքով, ինչպես նաև նրանց տնտեսական կախվածությամբ: Հայաստանում ֆիզիկական և հոգեբանական բռնության, վերահսկողական վարքի և հավանաբար նաև սեռական բռնության ամենամեծ մասը բաժին է ընկնում ինտիմ զուգընկերոջը:[37]

35 Բոլոր ոլորտների վրա տարածվող պետական ֆինանսավորման մարտահրավերները քննարկվում են ՀԶՆ 1-ի հետ կապված դժվարություններին նվիրված բաժնում:

36 «Նորածինների սեռերի անհամամասնությունը Հայաստանում. ժողովրդագրական տվյալներ և վերլուծություն», 2013թ.http://unfpa.am/sites/default/files/Sex_Imbalance_report_Eng_final-with%20cover-final.pdf

37 Հայաստանում ՄԱԿ-ի բնակչության հիմնադրամի «Ընդդեմ գենդերային բռնության Հարավային Կովկասում» ծրագիր(ՄԱԲՀ ԸԳԲ), 2011թ. http://unfpa.am/sites/default/files/DV_survey_eng.pdf

4

ԵՐԵԽԱՆԵՐԻ ՄԱՀԱՑՈՒԹՅԱՆ ՆՎԱԶԵՑՈՒՄ

ՆՊԱՏԱԿ 4. ԵՐԵԽԱՆԵՐԻ ՄԱՀԱՑՈՒԹՅԱՆ ՆՎԱԶԵՑՈՒՄ

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԹԻՐԱԽՆԵՐ	ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ
Թիրախ 4.Ա. 1990-2015 թվականներն ընկած ժամանակահատվածում երկու երրորդով կրճատել մինչև հինգ տարեկան երեխաների մահացությունը	4.1 Մինչև հինգ տարեկան երեխաների մահացություն 4.2 Մանկական մահացություն 4.3 Կարմրուկի դեմ պատվաստված մինչև մեկ տարեկան երեխաների մասնաբաժինը

ԱԶԳԱՅԻՆ ԹԻՐԱԽՆԵՐ	ԱԶԳԱՅԻՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ
Թիրախ 5.[38] 1990-ից 2015 թվականներն ընկած ժամանակահատվածում երկու երրորդով կրճատել մինչև հինգ տարեկան երեխաների մահացությունը	1. Մինչև հինգ տարեկան երեխաների մահացություն, 1.000 կենդանի ծնվածի հաշվով 2. Մանկական մահացություն, 1.000 կենդանի ծնվածի հաշվով 3. Կարմրուկի դեմ պատվաստված մինչև երկու տարեկան երեխաների մասնաբաժինը

ՀԶՆ 4. Միավորների հաշվարկ

	1990	1999	2004	2007	2008	2009	2010	2011	2012	2013	2014	2015 թիրախ	
ԹԻՐԱԽ 5. 1990-ԻՑ 2015 ԹՎԱԿԱՆՆԵՐՆ ԸՆԿԱԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ ԵՐԿՈՒ ԵՐՐՈՐԴՈՎ ԿՐՃԱՏԵԼ ՄԻՆՉԵՎ ՀԻՆԳ ՏԱՐԵԿԱՆ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՄԱՀԱՑՈՒԹՅՈՒՆԸ													
1. Մինչև հինգ տարեկանների մահացություն, 1.000 կենդանի ծնվածի հաշվով	23,8	19,3	13,0	12,3	12,1	11,9	13,4	13,7	12,1	11	10,3	<10	Լավ առաջընթաց
2. Մանկական մահացություն, 1.000 կենդանի ծնվածի հաշվով	18,5	15,4	11,6	10,9	10,8	10,4	11,4	11,6	10,8	9,7	8,8	<8	Լավ առաջընթաց
3. Կարմրուկի դեմ պատվաստված մինչև երկու տարեկան երեխաների մասնաբաժինը (ԿԿԽ1)	95,2	91,1	91,5	92,0	94,5	95	97	97	97	97	97	>96	Կատարված թիրախ

Համատեքստ

Հայաստանը դասվում է երեխաների մահացության միջին մակարդակ ունեցող երկրների շարքին և, ըստ Առողջապահության համաշխարհային կազմակերպության դասակարգման, գրանցվել է զգալիորեն ավելի ցածր մահացության ցուցանիշ, քան ԱՊՀ-ի և Կենտրոնական ու Արևելյան Եվրոպայի տարածաշրջանի երկրների միջին մակարդակը, սակայն զգալիորեն ավելի բարձր մահացության ցուցանիշ,

38 5-րդ թիրախը (ՀԶՆ-ների ցուցանիշների համաշխարհային ցանկում համապատասխանում է 4.Ա թիրախին) վերաբերում է Հայաստանին, հետևաբար այն փոփոխության չի ենթարկվել ազգայնացման գործընթացի շրջանակներում: Միակ փոփոխությունը վերաբերում է պատվաստումների մակարդակի ցուցանիշին, որը փոփոխության է ենթարկվել կարմրուկից բացի այլ հիմնական հիվանդություններն ընդգրկելու համար (նշվում է ՀԶՆ-ների ցուցանիշների համաշխարհային ցանկում):

քան Եվրոպական միությունը:[39]

Ըստ պաշտոնական վիճակագրական տվյալների՝ 1990-ից 2014 թվականներն ընկած ժամանակահատվածում դիտվել է մանկական մահացության նվազեցման կայուն միտում՝ ինչպես մինչև հինգ տարեկան երեխաների, այնպես էլ մանկական մահացության գծով: Վերջին տասնամյակում ՀՀ կառավարության կողմից մանկական առողջության բարելավման ուղղությամբ իրականացվող ազգային ծրագրերը շատ կարևոր դեր են խաղացել երկրում երեխաների մահացության կրճատման գործում:[40] Ասվածը, մասնավորապես, վերաբերում է այնպիսի ընդհանուր ծրագրերին և ռազմավարություններին, ինչպիսիք են.

- Մոր և մանկան առողջության պահպանման 2003-2015 թվականների ռազմավարություն (շարունակելի է 2016-2020 թվականներին),
- Երեխաների և դեռահասների առողջության ու զարգացման 2010-2015 թվականների ազգային ռազմավարության ծրագիրը (շարունակելի է 2016-2020 թվականներին)՝ համապատասխան գործողությունների ծրագրով, և
- 2010-2015 թվականների Իմունականխարգելման ազգային ծրագիրը (շարունակելի է 2016-2020 թվականներին):

Այս ծրագրերի իրագործմանը նպաստել են մի շարք այլ բարեփոխումներ, ինչպիսիք են՝ բացառապես կրծքով կերակրելու խրախուսումը, Մանկական հիվանդությունների ինտեգրացված վարումը (ՄՀԻՎ), 2010-2015 թվականների իմունականխարգելման ազգային ծրագիրը, երեխայի առողջության պետական հավաստագրի ծրագրի ներդնումը, երեխաների վերակենդանացման կենտրոնների հագեցումը սարքավորումներով, ինչպես նաև բուժաշխատողների կարողությունների բարձրացումը: Առողջապահության նախարարությունն ընդունել է ԱՀԿ-ի երեխաների պատվաստումների վերաբերյալ ուղեցույցը: Ազգային ուղեցույցը պահանջում է, որ բոլոր երեխաները ստանան պատվաստումներ 12 հակամարմինների դեմ՝ օգտվելով պլանային ինը պատվաստային բանաձևերից: Պատվաստումներն իրականացվում են հետևյալ հիվանդությունների դեմ՝ տուբերկուլոզ, հեպատիտ Բ, դիֆթերիա, փայտացում, կապույտ հազ, հեմոֆիլուսային Բ տեսակի վարակ, պոլիոմիելիտ, կարմրուկ, կարմրախտ, խոզուկ, ռոտավիրուսային վարակ, պնևմակոկային վարակ:

Արդյունավետ պատվաստումների հետ մեկտեղ՝ նշված ազգային ծրագրերի շրջանակներում իրականացվող առողջապահության համակարգի բարեփոխումներին ուղղված միջոցառումների լայն շրջանակն էապես նպաստել է՝ (ա) երեխաների համար առաջնային և հիվանդանոցային խնամքի բարելավմանը, (բ) կանխարգելել հիվանդություններից պաշտպանվելու համար երեխաների պատվաստումների թվի աճին, (գ) նախածննդյան և մանկաբուժական վերակենդանացման ծառայությունների զարգացմանը տարածաշրջաններում (այդ թվում՝ անհրաժեշտ սարքավորումների և գործիքների մատակարարմանը), ինչպես նաև (դ) մասնագետների գիտելիքների և շարունակական կատարելագործմանը՝ միջազգային լավագույն ընթացակարգերին համապատասխան:

Կառավարությունը մտադիր է շարունակել և բազմապատկել բարեփոխումների ուղղությամբ գործադրվող իր ջանքերը՝ նպատակ ունենալով բարելավել մոր և մանկան առողջությունը Հայաստանում[41], ինչպես նաև նվազեցնել մանկական մահացությունը: Ապագայում ջանքեր են գործադրվելու հետևյալ ուղղություններով՝

- բացառապես կրծքով կերակրելու խթանում և միկրոտարրերի պակասի կանխարգելում,.
- նախածննդյան և մանկական հսկողության համապետական ծրագրերի իրականացում՝ նյութափոխանակային բնածին հիվանդությունների և այլ խանգարումների հայտնաբերման նպատակով.

39 2013թ. մանկական մահացության ցուցանիշը Եվրոպական միության 28 անդամ պետություններում կազմել է 3,7 մահվան դեպք 1.000 կենդանի ծնվածի հաշվով, իսկ ԱՊՀ և Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի տարածաշրջանի երկրներում այդ ցուցանիշը կազմել է 17 մահվան դեպք: 2013թ. զարգացած տարածաշրջաններում մինչև հինգ տարեկան երեխաների մահացությունը (ըստ ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի դասակարգման) կազմել է վեց մահվան դեպք 1.000 կենդանի ծնվածի հաշվով, իսկ ԱՊՀ և Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի տարածաշրջանի երկրներում մահացության ցուցանիշը կազմել է 20 մահվան դեպք 1.000 կենդանի ծնվածի հաշվով: Աղբյուրներ՝ Եվրոպական միության վիճակագրական ծառայություն՝ http://ec.europa.eu/eurostat/statistics-explained/index.php/Mortality_and_life_expectancy_statistics և ՄԱԿ-ի մանկական հիմնադրամ, «Մանկական մահացության մակարդակներ և միտումներ», 2014թ. http://www.unicef.org/media/files/Levels_and_Trends_in_Child_Mortality_2014.pdf, բովանդակությունը ներկայացված է 2015թ. սեպտեմբերի 27-ի դրությամբ:

40 Մանկական առողջության բարելավումը սահմանվել է որպես առաջնահերթություն և արտացոլվել է ազգային մակարդակով ընդունված այնպիսի ռազմավարական փաստաթղթերում, ինչպիսիք են՝ Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագիրը, Հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագիրը, ինչպես նաև առանձին ոլորտներին անդրադարձող հատուկ ռազմավարական ծրագրերում:

41 Հայաստանի Հանրապետության հեռանկարային զարգացման ծրագիր, 2014-15 թթ.

- պատվաստումներում երեխաների ընդգրկվածության ընդլայնում՝ պատվաստումներում ընդգրկվածության ներկայիս տարածաշրջանային տարբերությունների վերացման և նորածինների առողջապահության որակյալ ծառայությունների հասանելիության բարձրացման միջոցով:



Գծապատկեր 17. Աղբյուր՝ ՀՀ ԱՎԾ, 2014թ.

Մինչև հինգ տարեկան երեխաների մահացություն: Հայաստանում գրանցվել է զգալի առաջընթաց մինչև հինգ տարեկան երեխաների և նորածինների մահացության նվազեցման ուղղությամբ, թեև դեռևս չի կատարվել 1.000 կենդանի ծնվածների հաշվով 10 մահվան դեպքը չգերազանցելու թիրախը, որը սահմանվել էր համապատասխան ՀԶՆ-ի ներքո: 1990 թվականից ի վեր մանկական մահացությունը նվազել է ավելի քան երկու անգամ՝ 1990-ից 2013 թվականներն ընկած ժամանակահատվածում 1.000 կենդանի ծնվածների հաշվով 24-ից հասնելով 11 դեպքի: 2013 թվականին մինչև հինգ տարեկան երեխաների մահացությունը տղաների շրջանում ավելի բարձր էր՝ աղջիկների համեմատ և կազմում էր 1.000 կենդանի ծնվածի հաշվով համապատասխանաբար 12 և 10 մահվան դեպք:

Մանկական մահացություն: Մինչև հինգ տարեկան երեխաների մահացության օրինակով՝ ըստ պաշտոնական տվյալների մանկական մահացությունն ավելի քան կիսով չափ նվազել է՝ 1990-ից 2013 թվականներն ընկած ժամանակահատվածում 1.000 կենդանի ծնվածի հաշվով 18,5-ից հասնելով 9,7 մահվան դեպքի: Բայց և այնպես, Հայաստանը չի կատարել 1.000 կենդանի ծնվածի հաշվով ութ մահվան դեպքը չգերազանցելու թիրախը, որը սահմանվել էր համապատասխան ՀԶՆ-ի ներքո:

Հարկ է նշել, որ 2009-2011 թվականների տվյալները վկայում են մանկական մահացության աճի մասին: Արձանագրված աճը կապված է վարչական գրանցման պահանջների 2010 թվականին մտցված փոփոխությունների հետ, որոնք ուղղված են եղել բուժհաստատություններում և քաղաքացիական ակտերի գրանցման համակարգում նորածինների մահվան դեպքերի արձանագրման և գրանցման ընթացակարգերի կատարելագործմանը:

Մանկական մահացության նվազեցման մասին վկայում են նաև 2000, 2005 և 2010 թվականներին Հայաստանի ժողովրդագրության և առողջության հարցերի հետազոտությունների շրջանակներում ստացված տվյալները, թեպետ դրանց համաձայն՝ մանկական և մինչև հինգ տարեկան երեխաների մահացությունը եղել է պաշտոնական տվյալներից ավելի բարձր:



Գծապատկեր 18. Աղբյուր՝ Հայաստանի ժողովրդագրության և առողջության հարցերի հետազոտություններ



Գծապատկեր 19. Աղբյուր՝ Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն

Կարմրուկի դեմ պատվաստված երկու տարեկան երեխաների մասնաբաժին: Հայաստանի երեխաների 97%-ը պատվաստում են ստանում կարմրուկի դեմ (ԿԿԽ1 և ԿԿԽ2): 2010 թվականից ի վեր պատվաստումների մակարդակը եղել է կայուն և մնացել անփոփոխ: Պատվաստումների ազգային օրացույցի շրջանակներում մտցվեց երկու չափաբաժիններով ԿԿԽ պատվաստումների ծրագիրը՝ 12 ամսական և վեց տարեկան երեխաների համար: Պատվաստումների մակարդակի շնորհիվ բարելավվեց մանկական առողջությունը և կրճատվեց մինչև հինգ տարեկան երեխաների մահացությունը:



Գծապատկեր 20. Աղբյուր՝ ՀՀ առողջապահության նախարարություն, պատվաստումների ծածկույթ

Մարտահրավերներ և հեռանկարներ[42]

Նորածինների և երեխաների մահացության մակարդակը դեռևս բարձր է: Մանկական առողջապահական ազգային ծրագրերի բարեփոխումը և պատվաստումները նպաստել են երեխաների մահացության զգալի նվազեցմանը, թեպետ Եվրոպական միության համեմատ մահացության ցուցանիշը դեռևս բարձր է: Ազգային ՀԶՆ-ների իրականացման ուղղությամբ գրանցվել է լավ առաջընթաց, սակայն դրանք չեն կատարվել:

Պատվաստումներ և բուժծառայությունների հետևողականություն: Նախատեսված պատվաստումների իրականացման ժամանակացույցում դիտվում է ընդմիջումների, բացթողումների կամ ուշացումների բարձր տոկոս, ինչը նվազեցնում է պատվաստումների դրական արդյունքները: Ծառայության որակի բարելավումը, բուժծառայությունների և ծնողների միջև հաղորդակցության մեծացումը, ինչպես նաև (հատկապես հեռավոր գյուղական շրջաններում) ծնողների կրթումն ու իրազեկվածության բարձրացումը կարող է օգնել այս մարտահրավերի հաղթահարմանը:

Պատվաստումների հետ մեկտեղ՝ խիստ կարևոր է նաև պատշաճ ուշադրություն դարձնել դրանց առնչվող այլ ասպեկտներին, ինչպիսիք են.

- նախածննդյան բուժծառայությունները,
- վաղ տարիքում երեխայի սնուցումը,
- հիվանդությունների հայտնաբերումը և կանխարգելիչ միջոցառումները,
- դեռահասների շրջանում առկա որոշ խնդիրները:

Մեթոդաբանության հետ կապված մարտահրավեր: Մանկական մահացության ցուցիչներն ունեն լուրջ կատարելագործման կարիք, հատկապես՝ մանկական մահացության սահմանման միջազգային չափանիշների գրանցման և կենսագործման առումով:

42 Բոլոր ոլորտների վրա տարածվող պետական ֆինանսավորման մարտահրավերները քննարկվում են ՀԶՆ 1-ի հետ կապված դժվարություններին նվիրված բաժնում:

5

ՄԱՅՐԱԿԱՆ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ

ՆՊԱՏԱԿ 5. ՄԱՅՐԱԿԱՆ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԹԻՐԱԽՆԵՐ	ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ
Թիրախ 5.Ա 1990-ից 2015 թվականներն ընկած ժամանակահատվածում երեք քառորդով կրճատել մայրական մահացությունը	5.1 Մայրական մահացություն 5.2 Որակյալ բժշկական միջամտությամբ ընթացած ծնունդներ
Թիրախ 5.Բ. Մինչև 2015 թվականն ապահովել վերարտադրողական առողջության համընդհանուր հասանելիությունը	5.3 Հակաբեղմնավորիչ միջոցների տարածվածություն 5.4 Դեռահասների ծնելիություն 5.5 Նախածննդյան խնամքի ծածկույթ (առնվազն մեկ այցելություն և առնվազն չորս այցելություն) 5.6 Ընտանիքի պլանավորման չբավարարված կարիքներ, ընդամենը%
ԱԶԳԱՅԻՆ ԹԻՐԱԽՆԵՐ	**ԱԶԳԱՅԻՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ**
Թիրախ 6.Ա. 1990-ից 2015 թվականն ընկած ժամանակահատվածում երեք քառորդով կրճատել մայրական մահացությունը	1. Մայրական մահացություն 100.000 կենդանածնի հաշվով (3 տարվա միջին ցուցանիշ) 2. Որակյալ բժշկական միջամտությամբ ընթացած ծնունդներ,%
Թիրախ 6.Բ. Մինչև 2015 թվականն ապահովել վերարտադրողական առողջության համընդհանուր հասանելիությունը	1. Դեռահասների ծնելիության ցուցանիշ՝ 15-19 տարեկան կենդանածին կանանց հարաբերակցությունը 15-19 տարեկան տարիքային խմբում 1.000 կնոջ նկատմամբ 2. Նախածննդյան խնամքի ծածկույթ (առնվազն մեկ այցելություն) 3. Նախածննդյան խնամքի ծածկույթ (առնվազն չորս այցելություն) 4. Ընտանիքի պլանավորման չբավարարված կարիքներ, ընդամենը%

ՀԶՆ 5. Միավորների հաշվարկ

	1990	1999	2004	2005	2007	2008	2009	2010	2011	2012	2013	2014	2015 թիրախ	
ԹԻՐԱԽ 6.Ա. 1990-ԻՑ 2015 ԹՎԱԿԱՆՆԵՐՆ ԸՆԿԱԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ ԵՐԵՔ ՔԱՌՈՐԴՈՎ ԿՐՃԱՏԵԼ ՄԱՅՐԱԿԱՆ ՄԱՀԱՑՈՒԹՅՈՒՆԸ														
1. Մայրական մահացություն 100.000 կենդանածնի հաշվով	40,0	33,0	27,0	19,0	15,0	39,0	27,0	9,0	14,0	19,0	22,0	18,6	<10	Չկատարված թիրախ
2. Որակյալ բժշկական միջամտությամբ ընթացած ծնունդներ,%	98,6	96,8	99,5	97,8	99,7	99,9	99,9	100	100	100	100	100	>99,5	Կատարված թիրախ

ԹԻՐԱԽ 6.Բ. ՄԻՆՉԵՎ 2015 ԹՎԱԿԱՆՆ ԱՊԱՀՈՎԵԼ ՎԵՐԱՐՏԱԴՐՈՂԱԿԱՆ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՀԱՄԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՍԱՆԵԼԻՈՒԹՅՈՒՆԸ														
1. Դեռահասների ծնելիության ցուցանիշ՝ 15-19 տարեկան կենդանածին կանանց հարաբերակցությունը 15-19 տարեկան տարիքային խմբում 1.000 կնոջ նկատմամբ	69,1	34,6	29,8	26,8	25,5	25,7	27,6	28,3	26,4	26,0	22,7	23,4	<30	Կատարված թիրախ
2. Նախածննդային խնամքի ծածկույթ (առնվազն մեկ այցելություն),		92,3		93,6				96					>98	Կատարված թիրախ
3. Նախածննդային խնամքի ծածկույթ (առնվազն չորս այցելություն)		64,7		70,9				91					>80	Կատարված թիրախ
4. Ընտանիքի պլանավորման չբավարարված կարիքներ, ընդամենը		11,8		13,3			21						<7	Չկատարված թիրախ

Աղբյուր՝ թիրախ 6.Ա՝ ՀՀ ԱՎԾ, թիրախ 6.Բ՝ ՀՀ ԱՆ և ՀՀ ԱՎԾ Ժողովրդագրական և առողջապահության հարցերի հետազոտություն

Համատեքստ

Մայրերի մահվան դեպքերի մեծ մասից կարելի է խուսափել, քանի որ բարդացումների կանխարգելման կամ կառավարման բժշկական լուծումները լավ հայտնի են: Հղիության ընթացքում նախածննդյան խնամքի հասանելիության բարձրացումը, ծննդաբերության ժամանակ հմուտ խնամքի տրամադրումը, ինչպես նաև ծննդաբերությանը հաջորդող շաբաթներում խնամքի ու աջակցության ապահովումը կարող են զգալիորեն նվազեցնել մայրական մահացությունը:

Մայրական մահացության ցուցանիշը համարվում է մայրական առողջության կարգավիճակն արտացոլող հիմնական փոփոխականը: 1989 թվականից Հայաստանում կիրառվում է ԱՀԿ-ի կողմից ընդունված մայրական մահացության սահմանումը:[43]

Մայրական առողջությունը առաջնահերթություն է Կառավարության քաղաքականությունների օրակարգում: Մայրական առողջության ոլորտում Հայաստանի քաղաքականություններն ու ծրագրերն իրականացվում են մանկական առողջության ծրագրերի հետ միասին՝ ինչպես ներկայացված է նախորդ բաժնում: Ազգային ծրագրերն ուղղված են նախածննդյան, հետծննդյան և շուրջծննդյան (պերինատալ) փուլում որակյալ բժշկական խնամքի ապահովմանը, ինչպես նաև կանանց համար մեծ վտանգ ներկայացնող հիվանդությունների վաղաժամ հայտնաբերմանն ու կանխարգելմանը: Բացի այդ, Վերարտադրողական առողջության բարելավման 2007-2015 թվականների ազգային ծրագրում (շարունակելի է 2016-2020 թվականների) և դրան կից գործողությունների ծրագրում անդրադարձ է կատարվում մոր և մանկան առողջության խնդիրների հետ փոխկապակցված այնպիսի ոլորտների հետ, ինչպիսիք են՝ ընտանիքի պլանավորումը, հակաբեղմնավորիչ միջոցների օգտագործումը, հղիության արհեստական անվտանգ ընդհատումը, անպտղաբերությունը, ինչպես նաև վերարտադրողական օրգանների քաղցկեղը:

43 ԱՀԿ-ն մայրական մահացությունը սահմանում է որպես՝ հղի, ծննդաբերող կամ ծննդաբերած կանանց մահվան դեպք 100.000 կենդանածնի հաշվով՝ հղիության առաջին օրվանից մինչև հետծննդաբերական ժամանակահատվածի 42-րդ օրը ներառյալ:

Իրականացվել են մայրական առողջության բարելավմանն ուղղված թիրախային քաղաքականություններ, որոնք ապահովում են բոլոր ծնունդների ընդունումը հմուտ բուժանձնակազմի միջնորդությամբ, այդ թվում՝ (ա) այսպես կոչված «ծննդյան հավաստագրերի» ծրագիրը («Երեխայի առողջության պետական հավաստագրի ծրագիր»), որով ներդրվեցին պարտադիր խորհրդակցություններ, ինչպես նաև անվճար և մատչելի մանկաբարձական ծառայություններ, (բ) շտապ օգնության ծառայության ներդնումը և զարգացումը (գ) հեռավոր գյուղական շրջաններում ծառայությունների հասանելիությանն ուղղված շարժական բուժծառայությունների ներդնումը:

Կառավարության կողմից գործադրվող ջանքերը թույլ տվեցին ապահովել որակյալ, հուսալի և անվտանգ հակաբեղմնավորիչ միջոցների հասանելիությունն ու օգտագործումը, առաջնային բուժծառայություններ մատուցողների ներգրավումն ընտանիքի պլանավորման, խորհրդատվությունների անցկացման և հակաբեղմնավորիչ միջոցների նշանակման գործում՝ դրանով իսկ նվազեցնելով հղիության արհեստական ընդհատման՝ որպես ծնելիության հսկողության միջոցի դերը և պակասեցնելով հղիության արհեստական ընդհատումների քանակը: Վերարտադրողական բուժծառայությունների հասանելիությանն ուղղված բարեփոխումների շրջանակներում գործադրվող ջանքերից են՝ (ա) դեղերի միջոցով հղիության արհեստական ընդհատումը, (բ) ընտանիքի պլանավորման ավելի քան վեց տասնյակ գրասենյակների ստեղծումը, ինչպես նաև (գ) սկսած 2015 թվականից՝ պետական բյուջեից հակաբեղմնավորիչ միջոցների ձեռքբերման համար հատկացումները:[44]

Նշված միջոցառումներն էապես նպաստել են Հայաստանում հղիության արհեստական ընդհատման դեպքերի նվազեցմանը՝ յուրաքանչյուր կնոջ հաշվով 2005 թվականին արձանագրված 1,8 ցուցանիշից 2010 թվականին նվազելով մինչև 0,8: Այս ցուցանիշը շատ ավելի ցածր է, քան 2000 թվականին արձանագրված 2,6 ցուցանիշը: Ամուսնացած կանայք ավելի ու ավելի հաճախ են հայտնում այն մասին, որ դիմում են ընտանիքի պլանավորման ժամանակակից մեթոդներին:[45] Օրինակ՝ տղամարդկանց համար նախատեսված պահպանակների օգտագործումն ամուսնացած կանանց կողմից վերջին 10 տարիներում կրկնապատկվել է (2010-ին այդ ցուցանիշը կազմել է 15%՝ 2005-ին՝ 8%, իսկ 2000-ին՝ 7%):[46]

Չնայած այս նվաճումներին՝ մայրական առողջության հետ կապված իրավիճակը Հայաստանում դեռևս զգալի բարելավման կարիք ունի: Մայրական մահացության ցուցանիշը Հայաստանում մի քանի անգամ գերազանցում է Եվրոպական Միությունում արձանագրված ցուցանիշը: Թեև հղիության արհեստական ընդհատումների ընդհանուր թիվը նվազում է, սակայն այն դեռևս բարձր է, ընդ որում՝ հղիության արհեստական ընդհատումը հաճախ օգտագործվում է որպես ընտանիքի պլանավորման հիմնական միջոց:

Թիրախ 6.Ա. 1990-ից 2015 թվականներն ընկած ժամանակահատվածում երեք քառորդով կրճատել մայրական մահացությունը

ԱՀԿ-ի առաջարկությանը համապատասխան՝ մայրական մահացության վերաբերյալ տվյալները հավաքագրվում են եռամյա սկզբունքով: Եթե երկրի բնակչությունը չի գերազանցում 5 միլիոնը, ապա մայրական մահացությունը գնահատվում է եռամյա միջին տվյալների հիման վրա:

Մայրական մահացություն 1.000 կենդանածնի հաշվով, 3 տարվա միջին ցուցանիշ



Գծապատկեր 21. Աղբյուր՝ ՀՀ առողջապահության նախարարություն

Վերջին տարիներին մայրական մահացության եռամյա միջին ցուցանիշում դիտվում է կայուն նվազե-

44 Ամրագրվել է Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի թիվ 40 արձանագրային որոշմամբ:
45 2010թ. 27%՝ 2005թ. 20%-ի համեմատ:
46 Ժողովրդագրական և առողջապահության հարցերի հետազոտություն:

ցում: 2011-2013 թվականներին այս ցուցանիշը 1,5 անգամ պակաս է եղել ԱՊՀ երկրների միջին ցուցանիշից, սակայն գրեթե 3,7 անգամ գերազանցել է Եվրոպական միության ցուցանիշը:

Հայաստանը հեռու է ՀԶՆ-ի ներքո սահմանված թիրախի կատարումից, ըստ որի՝ մայրական մահացությունը չպետք է գերազանցի 100.000 կենդանածնի հաշվով 10 մահվան դեպքը:

Թիրախ 6.Բ. Մինչև 2015 թվականն ապահովել վերարտադրողական առողջության համընդհանուր հասանելիությունը

Հայաստանը կատարել է իր առջև դրված թիրախը համապատասխան որակավորում ունեցող բուժանձնակազմի կողմից ընդունված ծնունդների մասնաբաժնի գծով: 2008 թվականից, երբ ներդրվեց մանկաբարձական խնամքի հավաստագրերի ծրագիրը, համապատասխան որակավորում ունեցող բուժանձնակազմի կողմից ընդունված ծնունդների մասնաբաժինը կազմում է 100%:

Դեռահասների ծնելիության ցուցանիշի (կենդանի ծնվածներ՝ 15-19 տարեկան 1.000 կնոջ հաշվով) մասով արձանագրվել է զգալի նվազեցում՝ 1990 թվականին գրանցված 69,1-ից մինչև 23,4՝ 2014 թվականին, հետևաբար Հայաստանը կատարել է իր թիրախն այս ցուցանիշով:

Երկու այլ ցուցանիշների օգնությամբ չափվում է նախածննդյան բուժօգնության հասանելիության աստիճանը: 1996-ից մինչև 2010 թվականներն ընկած ժամանակահատվածում այս երկու ցուցանիշների գծով արձանագրվել է որոշակի բարելավում: Հայաստանի 2010 թվականի ԺԱՀ-ի հետազոտությունների համաձայն՝ նախածննդյան բուժօգնության ծածկույթը (առնվազն չորս այցելություն) 2000 թվականին արձանագրված 65%-ից աճել է մինչև 91% 2010 թվականին, մինչդեռ նախածննդյան խնամքի ծածկույթը (առնվազն մեկ այցելություն) կազմել է 96%: Հայաստանը մասնակիորեն կատարել իր առջև դրված թիրախը, և իրատեսական է, որ կարճաժամկետ հեռանկարում այս թիրախն ամբողջությամբ կկատարվի:

Մարտահրավերներ և հեռանկարներ[47]

Մայրական մահացության մակարդակը դեռևս բարձր է: 2004-ից 2014 թվականներն ընկած ժամանակահատվածում արձանագրվել է 100.000 կենդանի ծնվածի հաշվով մայրական մահացության ցուցանիշի նվազեցում՝ 26,7-ից մինչև 18,6 դեպք, սակայն նշված ցուցանիշը դեռևս չորս անգամ գերազանցում է Եվրոպական միության միջին ցուցանիշը: Ընթացող բարեփոխումների արդյունքների հետևողականության ու շարունակականության ապահովումը խիստ կարևոր է լինելու մայրական առողջության հետագա բարելավման և մայրական մահացության նվազեցման համար: Այս մարտահրավերի հաղթահարման համար կպահանջվի ծառայության բարձր մակարդակ, բուժծառայությունների և ծնողների միջև հաղորդակցման մեծացում, ինչպես նաև ծնողների կրթում և իրազեկության բարձրացում (հատկապես՝ հեռավոր գյուղական շրջաններում):

Ընտանիքի պլանավորման հետ կապված մարտահրավերներ: Ընտանիքի պլանավորման ոլորտում դեռևս պահանջվում են զգալի բարելավումներ: Հղիության արհեստական ընդհատման և սեռական ճանապարհով փոխանցվող վարակների (ՍՃՓՎ-ներ) թվի նվազեցման համար հարկավոր է բարձրացնել սեռական և վերարտադրողական առողջության (ՍՎԱ) հարցերի շուրջ ունեցած գիտելիքների մակարդակը, հատկապես՝ երիտասարդների և դեռահասների շրջանում: Հղիության արհեստական ընդհատման դեպքերը և ՍՃՓՎ-ներով հիվանդության բարձր մակարդակը բացասաբար են անդրադառնում Հայաստանում պտղաբերության ցուցանիշների վրա:[48]

Այս մարտահրավերի հաղթահարման համար կպահանջվեն ժամանակակից արդյունավետ հակաբեղմնավորիչ մեթոդներ, վերարտադրողական առողջության բուժծառայությունների բարելավված հասանելիություն, մատչելիություն և որակ, բուժծառայությունների և ծնողների միջև հաղորդակցման ամրապնդում, ինչպես նաև ծնողների կրթում և իրազեկության բարձրացում:

47 Բոլոր ոլորտների վրա տարածվող պետական ֆինանսավորման մարտահրավերները քննարկվում են 1-ին ՀԶՆ-ի հետ կապված դժվարություններին նվիրված բաժնում:

48 Անպտուղ ամուսնության տարածվածության և պատճառագիտության կլինիկահամաճարակաբանական ուսումնասիրություն, 2009թ. (http://unfpa.am/en/infertility-survey)



6

ՊԱՅՔԱՐ ՄԻԱՎ/ՁԻԱՀ-Ի, ՄԱԼԱՐԻԱՅԻ ԵՎ ԱՅԼ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԵՄ

ՆՊԱՏԱԿ 6. ՊԱՅՔԱՐ ՄԻԱՎ/ՁԻԱՀ-Ի, ՄԱԼԱՐԻԱՅԻ ԵՎ ԱՅԼ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԵՄ

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԹԻՐԱԽՆԵՐ	ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ
Թիրախ 6.Ա. Մինչև 2015 թվականն արգելակել և սկսել հակադարձել ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի տարածման ընթացքը	6.1 ՄԻԱՎ-ի տարածում 15-ից 24 տարեկան բնակչության շրջանում 6.2 Պահպանակի օգտագործում վերջին բարձր ռիսկայնություն ունեցող սեռական հարաբերության ժամանակ 6.3 ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի վերաբերյալ համապարփակ ճիշտ գիտելիքներ ունեցողների մասնաբաժինը 15-ից 24 տարեկան բնակչության շրջանում 6.4 10-ից 14 տարեկան ծնողազուրկ երեխաների՝ դպրոց հաճախելիության հարաբերակցությունը ծնողներ ունեցող երեխաների՝ դպրոց հաճախելիությանը
Թիրախ 6.Բ. Մինչև 2010 թվականն ապահովել ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի բուժման համընդհանուր հասանելիությունը դրա կարիքն ունեցողների համար	6.5 ՄԻԱՎ-ի խորացած փուլում գտնվող բնակչության մասնաբաժին, որն ունի հակառետրովիրուսային դեղեր ստանալու հնարավորություն
Թիրախ 6.Գ. Մինչև 2015 թվականը արգելակել և սկսել հակադարձել մալարիայի և այլ հիվանդությունների տարածման ընթացքը	6.6 Մալարիա և դրանով պայմանավորված մահացություն 6.7 Հակամիջատային անկողնային ցանցի տակ քնող մինչև հինգ տարեկան երեխաների մասնաբաժինը 6.8 Տենդ ունեցող և մալարիայի դեմ պատշաճ դեղեր ստացող մինչև հինգ տարեկան երեխաների մասնաբաժինը 6.9 Տուբերկուլոզի տարածում և դրանով պայմանավորված մահացություն 6.10 Տուբերկուլոզի անմիջական հսկողությամբ բուժման կարճատև կուրսի ընթացքում ախտորոշված և բուժում ստացած դեպքերի մասնաբաժինը
ԱԶԳԱՅԻՆ ԹԻՐԱԽՆԵՐ	**ԱԶԳԱՅԻՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ**
Թիրախ 7.Ա. Մինչև 2015 թվականն արգելակել և սկսել հակադարձել ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի տարածման ընթացքը	1. ՄԻԱՎ ունեցող 15-ից 49 տարեկան անձինք, տոկոս 2. ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի վերաբերյալ համապարփակ գիտելիքներ ունեցողների մասնաբաժինը 15-ից 24 տարեկան բնակչության շրջանում
Թիրախ 7.Բ. Մինչև 2010 թվականն ապահովել ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի բուժման համընդհանուր հասանելիությունը դրա կարիքն ունեցողների համար	1. ՄԻԱՎ-ի խորացած փուլում գտնվող բնակչության մասնաբաժինը, որն ունի հակառետրովիրուսային դեղեր ստանալու հնարավորություն
Թիրախ 8. Մինչև 2015 թվականն արգելակել և սկսել հակադարձել մալարիայի և հիմնական այլ հիվանդությունների տարածման ընթացքը	1. Մալարիայի նոր դեպքերի թիվ 2. Բնակչության հիվանդացությունը տուբերկուլոզով, դեպքերի թիվը 100.000 բնակչի հաշվով 3. Տուբերկուլոզի ախտորոշված և անմիջական հսկողությամբ բուժման կարճատև կուրսի ընթացքում բուժում ստացած դեպքերի մասնաբաժինը

ՀԶՆ 6. Միավորների հաշվարկ

ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ	1990	2000	2005	2007	2008	2009	2010	2011	2012	2013	2014	2015 թիրախ	
ԹԻՐԱԽ 7.Ա. ՄԻՆՉԵՎ 2015 ԹՎԱԿԱՆԸ ԱՐԳԵԼԱԿԵԼ ԵՎ ՍԿՍԵԼ ՀԱԿԱԴԱՐՁԵԼ ՄԻԱՎ/ՁԻԱՀ-Ի ՏԱՐԱԾՄԱՆ ԸՆԹԱՑՔԸ													
1. ՄԻԱՎ ունեցող 15-ից 49 տարեկան անձինք, տոկոս*		<0,01	<0,02	<0,02	<0,03	0,03	0,04	0,04	0,06	0,07	0,08	<0,04	Չկատարված թիրախ
2. ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի վերաբերյալ համապարփակ ճիշտ գիտելիքներ ունեցողների մասնաբաժինը 15-ից 24 տարեկան բնակչության շրջանում**		…	…		…		20,4		18,7		22,4	>80%	Չկատարված թիրախ
ԹԻՐԱԽ 7.Բ. ՄԻՆՉԵՎ 2010 ԹՎԱԿԱՆՆ ԱՊԱՀՈՎԵԼ ՄԻԱՎ/ՁԻԱՀ-Ի ԲՈՒԺՄԱՆ ՀԱՄԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՍԱՆԵԼԻՈՒԹՅՈՒՆԸ ԴՐԱ ԿԱՐԻՔՆ ՈՒՆԵՑՈՂ ԲՈԼՈՐ ԱՆՁԱՆՑ ՀԱՄԱՐ													
1. ՄԻԱՎ-ի խորացած փուլում գտնվող բնակչության մասնաբաժինը, որն ունի հակառետրովիրուսային դեղեր ստանալու հնարավորություն				100	100%	100%	100%	100%	100%	100%	100%	100%	Կատարված թիրախ
ԹԻՐԱԽ 8. ՄԻՆՉԵՎ 2015 ԹՎԱԿԱՆԸ ԱՐԳԵԼԱԿԵԼ ԵՎ ՍԿՍԵԼ ՀԱԿԱԴԱՐՁԵԼ ՄԱԼԱՐԻԱՅԻ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ԱՅԼ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԱՐԱԾՄԱՆ ԸՆԹԱՑՔԸ[49]													
1. Մալարիայի նոր տեղական դեպքերի թիվ	0	329	6	0	0	0	0	0	0	0	0	0	Կատարված թիրախ
2. Բնակչության հիվանդացությունը տուբերկուլոզով, դեպքերի թիվը 100.000 բնակչի հաշվով (աղբյուր՝ ԱՀ, 2014թ.)	16,6	44,4	48,5	47,0	45,9	44,1	40,6	36,3	37,4	34,6	34,7	<30	Լավ առաջընթաց

49 Այս թիրախի ներքո 2000 և 2005 թթ. վերաբերյալ բերված թվերը համապատասխանում են 1999 և 2004 թթ.:

ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ	1990	2000	2005	2007	2008	2009	2010	2011	2012	2013	2014	2015 թիրախ	
3. Տուբերկուլոզի անմիջական հսկողությամբ բուժման կարճատև կուրսի ընթացքում ախտորոշված և բուժում ստացած դեպքերի մասնաբաժինը, տոկոս	18,5 (1995)	83,0	99,8	100	100	100	100	100	100	100	100	100	Կատարված թիրախ

Նշում՝ 2010 թվականին նախորդող տարիների համար բերված թվերը կազմվել են այլ ձևաչափով. 2000 թվականին՝ 7% իգական սեռի, 8% արական սեռի, 2005 թվականին՝ 15,8% իգական սեռի, 8,9% արական սեռի, 2010 թվականին՝ 15,8% իգական սեռի, 8,9% արական սեռի (աղբյուր՝ ՀՀ ԱՎԾ, ԺԱՀՀ)

*Աղբյուր՝ *ԶԻԱՀ-ի կանխարգելման հանրապետական կենտրոն, ՄԻԱՎ-ի հաշվառման մատյան, **Վարքագծի վերահսկողություն երիտասարդության շրջանում 2010 թվականին, 2012 թվականին, 2014 թվականին:*

Համատեքստ

Հայաստանում ՄԻԱՎ-ի դեպքերի հաշվառումը մեկնարկեց 1988 թվականին, իսկ ՄԻԱՎ/ԶԻԱՀ-ի հակազդման ազգային ծրագիրն ընդունվել է 2002-2006 թվականների համար: 2015 թվականի օգոստոսի 1-ի դրությամբ ՀՀ քաղաքացիների շրջանում գրանցվել է ՄԻԱՎ-ի 2.118 դեպք, ընդ որում այս թիվը կայուն աճել է վերջին երկու տասնամյակում: 2014 թվականին գրանցվել է ՄԻԱՎ-ի 334 նոր դեպք, ինչը գերազանցում է նախորդ տարիներին գրանցված ՄԻԱՎ-ի դեպքերի տարեկան թիվը: ՄԻԱՎ-ի փոխանցման հիմնական ճանապարհներն են հետերոսեքսուալ սեռական հարաբերությունները (64,2%) և թմրամիջոցների ներերակային օգտագործումը (26,4%): Բացի այդ, գրանցվել են դեպքեր, երբ փոխանցումը տեղի է ունեցել միասեռական հարաբերությունների միջոցով, ՄԻԱՎ-ն անցել է մորից երեխային, ինչպես նաև՝ երբ վարակն անցել է արյան միջոցով:

ՄԻԱՎ/ԶԻԱՀ-ի կանխարգելման շրջանակներում իրականացվող ազգային ծրագրերը[50], որոնք կոչված են եղել նվազեցնել ՄԻԱՎ-ի փոխանցումը և կասեցնել ՄԻԱՎ/ԶԻԱՀ-ի տարածումը, չեն կարողացել կասեցնել ՄԻԱՎ-ի դեպքերի թվի աճը: Այս իրավիճակում առանցքային գործոն է եղել այն հանգամանքը, որ Հայաստանում աշխատանքային միգրացիան եղել է ՄԻԱՎ-ի հիմնական աղբյուրը, այն է՝ ՄԻԱՎ-ի գրանցված դեպքերի 73%-ը կապված է միգրացիայի հետ: Բացի այդ, մինչև 2000-ականների վերջը ՄԻԱՎ/ԶԻԱՀ-ի հակազդման ռազմավարությունները բավարար չափով չեն անդրադարձել միգրացիայի գործոնին:

ՄԻԱՎ-ի վերահսկողությունը երկրում բարելավվել է: Երկրի 100 քաղաքներում և գյուղական համայնքներում իրականացվում են ՄԻԱՎ-ի կանխարգելիչ ծրագրեր ՄԻԱՎ-ի նկատմամբ առավելապես խոցելի բնակչության խմբերի՝ միգրանտ աշխատողների և նրանց ընտանիքի անդամների շրջանում: Գործում է շարժական բժշկական թիմ, ինչպես նաև շարժական բժշկական և ախտորոշիչ կլինիկա, որը մատուցում է ՄԻԱՎ-ի հետ կապված ծառայություններ, այդ թվում՝ տեղում ՄԻԱՎ-ի հայտնաբերմանն ուղղված հետազոտություն: Հայաստանում գործում է ՄԻԱՎ-ի վերաբերյալ խորհրդատվության և հետազոտության համակարգ, որը հիմնականում ինտեգրված է ներկայիս առողջապահական համակարգում: Բուժծառայություններ մատուցողների նախաձեռնությամբ՝ ՄԻԱՎ-ի վերաբերյալ խորհրդատվությունը և հետազոտությունները համատարած ընդգրկված են առողջապահական հաստատություններում:

50 ՄԻԱՎ/ԶԻԱՀ-ի կանխարգելման ազգային ծրագրեր (առաջին ծրագիրը եղել է 2002-2006 թթ. համար). ներկայումս իրականացվում է ԶԻԱՀ կանխարգելման ազգային ծրագիրը 2013-2016 թթ. համար:

Տուբերկուլոզի դեմ պայքարի 2007-2015 թվականների ազգային ծրագիրն (շարունակելի է 2016-2020 թվականներին) ուղղված է տուբերկուլոզով հիվանդացության և դրանից մահացության նվազեցմանը, ինչպես նաև Հայաստանում բազմադեղակայուն տուբերկուլոզի տարածման կասեցմանը: Տուբերկուլոզի հսկողության ազգային ծրագրով ամրապնդվել են ԱՀԲԿԿ-ի (Անմիջական հսկողությամբ բուժման կարճատև կուրս) ռազմավարության հիմնական տարրերը, որոնք կոչված են կանխել բազմադեղակայուն տուբերկուլոզը, բարձրացնել դեղամիջոցների նկատմամբ կայունության տնօրինման կարողությունները, ապահովել տուբերկուլոզի դեպքերի հայտնաբերման աճը, տրամադրել համալիր սոցիալական և հոգեբանական աջակցություն հիվանդներին, մատուցել ախտորոշման և միջանկյալ խնամքի ծառայություններ սեզոնային միգրանտներին՝ դրանով իսկ մեծացնելով համապատասխան դեպքերում տնային պայմաններում բուժում ապահովելու և առաջնային առողջապահական համակարգ ներգրավելու կարողությունները:

Մալարիայի ներբերումը և արմատավորումը կանխարգելելու նպատակով ՀՀ կառավարությունն ընդունել է որոշում «Մալարիայի ներբերումը և արմատավորումը կանխարգելելու 2011-2015 թվականների պետական ծրագիրը[51] հաստատելու մասին»՝ նպատակ ունենալով ապահովել ներկայիս համաճարակաբանական իրավիճակը հետևյալ քայլերի միջոցով.

- մալարիայի ներբերման և արմատավորման կանխարգելիչ գործողությունների կառավարման համակարգի ամրապնդում,
- անդրսահմանային և միջազգային համագործակցության բարելավում,
- երկրում մալարիայի համաճարակաբանական հսկողության համակարգի բարելավում,
- գործողությունների իրականացում առանձին ուղղություններով՝ ելնելով բնապահպանական, համաճարակաբանական և սոցիալ-ժողովրդագրական իրավիճակից,
- կանխարգելիչ միջոցառումների ձեռնարկում բարձր ռիսկայնություն ներկայացնող բնակչության շրջանում (զբոսաշրջիկներ, միգրանտներ, արտասահմանյան ուսանողներ),
- բնակչության իրազեկում մալարիայի կանխարգելման միջոցառումների վերաբերյալ,
- մալարիայի հսկողության համար անհրաժեշտ մասնագետների հավաքագրում և նրանց հետագա պատրաստում:

Ելնելով պետական ծրագրի համալիր կանխարգելիչ և հակահամաճարակաբանական միջոցառումների բնույթից՝ մալարիայի ինքնաձին դեպքեր մինչ օրս չեն գրանցվել: Վարակիչ հիվանդությունների վերացման ուղղությամբ հետագա քայլերից է Կառավարության կողմից ընդունված՝ վարակիչ հիվանդությունների ուղղությունների հսկողության ծրագիրը:

Թիրախ 7.Ա. Մինչև 2015 թվականն արգելակել և սկսել հակադարձել ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի տարածման ընթացքը

2015 թվականի օգոստոսի 1-ի դրությամբ ՀՀ քաղաքացիների շրջանում գրանցվել է ՄԻԱՎ-ի 2.118 դեպք, այդ թվում՝ ՄԻԱՎ-ով վարակվելու 40 դեպք՝ երեխաների շրջանում: ՄԻԱՎ վարակակիրների մեծամասնությունը՝ 1.463 դեպք (69%) կազմում են տղամարդիկ: ՄԻԱՎ-ի 655 դեպք է գրանցվել կանանց և երեխաների շրջանում՝ համապատասխանաբար 31% և 1,9% համամասնությամբ: ՄԻԱՎ-ի ախտորոշման պահին վարակակիրների 53%-ը պատկանում էր 25-ից 39 տարեկան տարիքային խմբին:

Ըստ գնահատականների՝ մինչև 2014 թվականի ավարտը երկրում ՄԻԱՎ-ով ապրող անձանց թիվը կազմել է շուրջ 3.800 մարդ: 2012-2014 թվականներին ՄԻԱՎ-ի դեպքերի շուրջ 59%-ը բաժին էր ընկնում արտասահմանում վարակված միգրանտ աշխատողներին, ովքեր այնուհետև վարակել էին իրենց սեռական զուգընկերներին (ովքեր կազմում են ՄԻԱՎ վարակակիրների 14%-ը):

Գրանցված դեպքերի թիվը տարեցտարի աճում է: ՁԻԱՀ-ի կանխարգելման հանրապետական կենտրոնի տվյալներով՝ 15-ից 49 տարեկան ՄԻԱՎ վարակակիրների մասնաբաժինը 2014 թվականին 0,01%-ից (2000 թվականն) աճել է՝ հասնելով 0,08%-ի:

51 Նախատեսված է շարունակել 2016-2018 թթ. ծրագրով:



Գծապատկեր 22. Աղբյուր՝ «Առողջություն և առողջապահություն» վիճակագրական տարեգիրք, ԱԱԻ, 2014թ.

Երիտասարդության շրջանում վարքագծային հսկողության տվյալներով՝ 2010, 2012 և 2014 թվականներին համապարփակ ճիշտ գիտելիքները ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի վերաբերյալ բնակչության 15-ից 24 տարեկան տարիքային խմբում դեռևս գտնվում էին ցածր մակարդակի վրա, թեպետև 2010 թվականի համեմատ՝ 2014-ին արձանագրվել է 2 տոկոսանոց աճ:

Թիրախ 7.Բ. Մինչև 2010 թվականն ապահովել ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի բուժման համընդհանուր հասանելիությունը դրա կարիքն ունեցող բոլոր անձանց համար

Սկսած 2007 թվականից՝ ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ով հիվանդների համար ապահովվել է հակառետրովիրուսային դեղերի հասանելիությունը 100%-ով: Հակառետրովիրուսային դեղերը հասանելի են սահմանված նախապայմանները բավարարող բոլոր գրանցված հիվանդներին, ովքեր տվել են դրանք ստանալու իրենց համաձայնությունը:

Արդյունքում, ընդլայնվել է ՄԻԱՎ-ի հայտնաբերման նպատակով անցկացվող հետազոտությունների հասանելիությունը, իսկ ՄԻԱՎ-ի հայտնաբերման հավանականությունը բարձրացել է. ընդգրկվել է հղի կանանց 95%-ը, մինչդեռ տուբերկուլոզ ունեցող բոլոր հիվանդները նույնպես անցնում են հետազոտություն ՄԻԱՎ-ի հայտնաբերման նպատակով:

Թիրախ 8. Մինչև 2015 թվականն արգելակել և սկսել հակադարձել մալարիայի և հիմնական այլ հիվանդությունների տարածման ընթացքը

Վերջին տարիներին Տուբերկուլոզի դեմ պայքարի 2007 - 2015 թվականների ազգային ծրագրի շրջանակներում ձեռնարկվող գործողությունների արդյունքում համաճարակաբանական իրավիճակը բարելավվել է:

2007 թվականից ի վեր 100.000 բնակչի հաշվով տուբերկուլոզով հիվանդացության ցուցանիշում արձանագրվեց կայուն նվազեցում. այն 47,4-ից մինչև 2014 թվականին հասավ 34,7-ի: Թեև հիվանդացության մակարդակն իջել է, այն գերազանցում է 1990 թվականին արձանագրված 16,6 ցուցանիշը: Նման աճը կարելի է մասամբ վերագրել սոցիալ-տնտեսական պայմանների վատթարացմանը, ինչպես նաև միգրացիոն հոսքերի արագացմանը: Միգրանտների շրջանում դիտվում է իրազեկության և գիտելիքների պակաս:

2013 թվականին առավել շատ վարակակիրներ են գրանցվել 25-ից 34 և 45-ից 54 տարեկան տարիքային խմբերում:

Առողջապահության համակարգի բարելավման շնորհիվ 2007-ից 2014 թվականներն ընկած ժամանակահատվածում մահվան դեպքերը զգալիորեն նվազել են՝ 175-ից հասնելով 46-ի (Տուբերկուլոզի դեմ պայքարի ազգային կենտրոն, ՀՀ առողջապահության նախարարություն):



Գծապատկեր 23. Աղբյուր՝ Տուբերկուլոզի դեմ պայքարի ազգային կենտրոն



Գծապատկեր 24. Աղբյուր՝ Տուբերկուլոզի դեմ պայքարի ազգային կենտրոն

2007 թվականից ի վեր անմիջական հսկողությամբ բուժման կարճատև կուրսի ընթացքում ախտորոշված և բուժում ստացած տուբերկուլոզի դեպքերի մասնաբաժինը շարունակաբար կազմել է 100%:

2006 թվականից ի վեր Հայաստանում չի գրանցվել մալարիայի ինքնածին ոչ մի դեպք: 2011 թվականին Հայաստանը ԱՀԿ-ի կողմից հավաստագրվել է որպես մալարիայից զերծ երկիր: Պետական ծրագրի համալիր կանխարգելիչ և հակահամաճարակաբանական միջոցառումների համաձայն՝ Հայաստանում մալարիայի ինքնածին ոչ մի դեպք մինչ օրս չի գրանցվել: Այդ ժամանակվանից ի վեր գրանցվել է Աֆրիկայից ներբերված մալարիայի յոթ դեպք:

Մարտահրավերներ և հեռանկարներ[52]

ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի թվերի աճ: Մտահոգիչ է ՄԻԱՎ վարակակիրների թվի կայուն աճը, ինչպես նաև այն հանգամանքը, որ բնակչության 15-ից 24 տարեկան տարիքային խմբում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի վերաբերյալ գիտելիքների մակարդակը ցածր է: 2014 թվականին նման գիտելիքներ ուներ բնակչության ընդամենը 22,4%-ը: 2004-2014 թվականներին ՄԻԱՎ-ի դեպքերի 67,3%-ը գրանցվել է բնակչության առավել ռիսկային խմբերի շրջանակներից դուրս:

Թեև վերջին տասնամյակում ՁԻԱՀ-ի և տուբերկուլոզի հակազդման ուղղությամբ Հայաստանում արձանագրվել է զգալի առաջընթաց, այն է՝ համապատասխան բուժման հնարավորություն է ստացել ՄԻԱՎ վարակակիր հանդիսացող և բուժման կարիք ունեցող յուրաքանչյուր անձ, երկրի առջև ծառացած է մեծ մարտահրավեր ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ին կայուն արձագանքելու հնարավորություններ ստեղծելու առումով: Եթե Համաշխարհային հիմնադրամի հավանությանն արժանանա ՄԻԱՎ-ի գծով հաջորդ դրամաշնորհը, ապա նույնիսկ այդ պարագայում կդիտվի ծախսերի նվազեցում 50%-ով՝ նախորդ տարիների համեմատ, ընդ որում՝ երկիրը պետք է տրամադրի համաֆինանսավորման 40%-ը և գնի պահանջվող դեղերի զգալի բաժինը: Այս ոլորտում ներկայումս առկա բացերը և Համաշխարհային հիմնադրամի կողմից տրամադրվող դրամաշնորհների ընդհատումը՝ ի հայտ բերված ՄԻԱՎ-ի դեպքերի աճի հետ մեկտեղ և վերջին երկու տարիներին տնտեսական ընդհանուր աճի դանդաղեցման պայմաններում, մտահոգության տեղիք են տալիս: Հայաստանում հակազդման ուղղությամբ արձանագրված նվաճումները հարցականի տակ կառնվեն, եթե չապահովվի անցում նվիրատու կազմակերպությունների ֆինանսավորումից պետական ֆինանսավորման՝ առնվազն հակառետրովիրուսային դեղերի և հնարավորության դեպքում նաև մեթադոնային փոխարինող բուժման ֆինանսավորման ուղղությամբ:

Միգրանտ աշխատողներն այս հիվանդության հիմնական ներբերողներն են (2012-2014 թվականներին գրանցված ՄԻԱՎ-ի դեպքերի 73%-ը կապված են եղել միգրացիայի հետ), իսկ վերջին տարիներին նրանց թիվն աճել է: Աշխատանքային միգրացիայի մակարդակն ապագայում չի նվազելու, և, հետևաբար, ՄԻԱՎ վարակի նվազեցում արձանագրելու համար կարևոր է ապահովել վաղաժամ ախտորոշում,

52 Բոլոր ոլորտների վրա տարածվող պետական ֆինանսավորման մարտահրավերները քննարկվում են 1-ին ՀԶՆ-ի հետ կապված դժվարություններին նվիրված բաժնում:

իրազեկվածության և գիտելիքների բարձրացում ոչ միայն առավել ռիսկային, այլև բնակչության այլ խմբերում, ինչպես նաև հաճախորդի նախաձեռնությամբ ՄԻԱՎ-ի հայտնաբերմանն ուղղված հետազոտությունների և խորհրդատվությունների խթանում: Այս մարտահրավերի հաղթահարման համար կարող են օգտակար լինել բուժծառայությունների բարձր մակարդակը և բնակչության հետ հաղորդակցության բարելավումը, ինչպես նաև ծնողների կրթումն ու իրազեկության բարձրացումը:

7
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ
ԿԱՅՈՒՆ ՊԱՀՊԱՆՈՒՄ

ՆՊԱՏԱԿ 7. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԿԱՅՈՒՆ ՊԱՀՊԱՆՈՒՄ

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԹԻՐԱԽՆԵՐ	ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ
Թիրախ 7.Ա. Ներդնել կայուն զարգացման սկզբունքները երկրի քաղաքականության ու ծրագրերի մեջ և հակադարձել բնական ռեսուրսների կորստի գործընթացը	7.1 Անտառածածկ տարածքների մասնաբաժինը երկրի ընդհանուր տարածքում 7.2 Ածխածնի երկօքսիդի արտանետումները՝ ընդհանուր, 1 շնչին ընկնող և ըստ ՀՆԱ-ի 1 ԱՄՆ դոլարի (գնողունակության համարժեքությամբ) 7.3 Օզոնաքայքայիչ նյութերի սպառում 7.4 Ձկնային պաշարների մասնաբաժինն ապահով կենսաբանական սահմաններում 7.5 Ընդհանուր օգտագործված ջրային ռեսուրսների մասնաբաժինը
Թիրախ 7.Բ. Նվազեցնել կենսաբանական բազմազանության կորուստը՝ մինչև 2010 թվականն ապահովելով կորուստների միտման զգալի կրճատում	7.6 Պաշտպանվող հողային և ծովային տարածքների մասնաբաժինը 7.7 Անհետացման եզրին գտնվող տեսակների մասնաբաժինը
Թիրախ 7.Գ. Մինչև 2015 թվականը կրկնակի նվազեցնել անվտանգ խմելու ջրին և կոյուղուն մշտապես հասանելիություն չունեցող բնակչության մասնաբաժինը	7.8 Բարելավված խմելու ջրի աղբյուրներից օգտվող բնակչության մասնաբաժինը 7.9 Բարելավված կոյուղուց օգտվող բնակչության մասնաբաժինը
Թիրախ 7.Դ. Մինչև 2020 թվականը հասնել վթարային կացարանների առնվազն 100 մլն բնակիչների բնակության պայմանների բարելավմանը	7.10 Վթարային կացարաններում բնակվող քաղաքային բնակչության մասնաբաժինը
ԱԶԳԱՅԻՆ ԹԻՐԱԽՆԵՐ	**ԱԶԳԱՅԻՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ**
Թիրախ 9. Ներդնել կայուն զարգացման սկզբունքները երկրի քաղաքականության ու ծրագրերի մեջ և հակադարձել բնական ռեսուրսների կորստի գործընթացը	1. [1.000 ԱՄՆ դոլար ՀՆԱ-ի (ԳՀ) ստեղծման համար էներգիայի ծախսը (կգ նավթային համարժեք)]* 2. Անտառածածկ տարածքների մասնաբաժինը երկրի ընդհանուր տարածքում,% 3. Կենսաբանական բազմազանությունը պահպանելու նպատակով առկա հատուկ պահպանվող տարածքների մասնաբաժինը երկրի ընդհանուր տարածքում,% 4. Ածխածնի երկօքսիդի արտանետումները (1 շնչի հաշվով, տոննա) 5. Օզոնաքայքայիչ քլորֆտորածխաջրածինների սպառումը [և քլորդիֆտորմեթան]** (օզոնաքայքայիչ ներուժ, տոննա) 6. Կոշտ վառելիք օգտագործող բնակչության մասնաբաժինը 7. Ծովի մակարդակից Սևանա լճի հայելու մակարդակի բարձրությունը, մետր 8. Սևանա լճի ջրի միջին թափանցելիությունը 9. Սևանա լճի ջրում լուծված թթվածնի միջին կոնցենտրացիան, (մգ/լ) 10. Կեղտաջրերի մաքրման կայանների կողմից սպասարկվող քաղաքների թիվը

ԱԶԳԱՅԻՆ ԹԻՐԱԽՆԵՐ	ԱԶԳԱՅԻՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ
Թիրախ 10. Բարձրացնել անվտանգ խմելու ջրի հասանելիությունը	1. Կենտրոնացված ջրամատակարարման միջին օրական տևողությունը քաղաքային [և գյուղական]** (Երևանից դուրս) տնային տնտեսություններում, ժամ 2. Գյուղական շրջաններում խմելու ջրի հասանելիություն չունեցողների մասնաբաժինը գյուղական շրջաններում բնակվողների նկատմամբ,% 3. Գյուղական շրջաններում տեղափոխված ջուր օգտագործող բնակչության մասնաբաժինը գյուղական շրջաններում ջուր օգտագործողների ընդհանուր թվի նկատմամբ,%
Թիրախ 11. Մինչև 2015 թվականն ապահովել բնակարանային պայմանների բարելավում	1. Քաղաքային վթարային կացարաններում բնակվող տնային տնտեսությունների մասնաբաժինը (ոչ սովորական կացարաններում բնակվող քաղաքային տնային տնտեսություններ), 1.000 տնային տնտեսության հաշվով 2. Բարելավված կոյուղու համակարգին հասանելիություն ունեցող բնակչության մասնաբաժինը,% 3. Հուսալի գազամատակարարում ունեցող համայնքների մասնաբաժինը, որոնք ունեն 300-ից ավելի տնային տնտեսություն, [գազամատակարարում ունեցող կացարանների մասնաբաժին,%]*

(*) Այս ցուցանիշն ընդգրկվել էր ազգային ցուցանիշների սկզբնական ցանկում, սակայն հանվել էր 2010 թվականի առաջընթացի զեկույցից: 2015 թվականի զեկույցում այն կրկին ընդգրկվել է:
(**) Ցուցանիշի առանձին փարրեր կամ ցուցանիշն ամբողջությամբ փոխվել են 2015 թվականի առաջընթացի զեկույցում, քանի որ ի սկզբանե հայտարարված ցուցանիշն առկա չէ:

ՀԶՆ 7. Միավորների հաշվարկ*

ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ	1990	2000	2005	2007	2008	2009	2010	2011	2012	2013	2014	2015 թիրախ	
ԹԻՐԱԽ 9. ՆԵՐԴՆԵԼ ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ ԵՐԿՐԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՈՒ ԾՐԱԳՐԵՐԻ ՄԵՋ ԵՎ ՀԱԿԱԴԱՐՁԵԼ ԲՆԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԿՈՐՍՏԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ													
1. 1.000 ԱՄՆ դոլար ՀՆԱ-ի (ԳՀ) ստեղծման համար էներգիայի ծախսը (կգ նավթային համարժեք)[53]		295	207	177,2	137,8	134,2	127,7	129,2	130,5	131,2	295	Տվյալներ չկան	Տվյալներ չկան
2. Անտառածածկ տարածքների մասնաբաժինը երկրի ընդհանուր տարածքում,%	--	11,2	11,2	10,3	10,3	10,3	10,3	10,0	9,7	9,7	--	≥11	Չկատարված թիրախ

53 Տվյալները վերցված են ՀՀ ազգային վիճակագրական ծառայության ՀԶՆ տվյալների շտեմարանից: Տվյալների շտեմարանում չի նշվում այն տարին, որում արձանագրված ինֆլյացիան արտացոլելու համար կատարվել է համապատասխան շտկում: Հեղինակները կարծում են, որ բացթողում է չհիշատակել ըստ ինֆլյացիայի կատարված շտկումը, ընդ որում՝ ՀՆԱ-ի թվերը փաստորեն շտկված են՝ ըստ ժամանակի ընթացքում արձանագրված ինֆլյացիայի, այլ ոչ թե՝ միայն գնողունակության համարժեքության համաձայն:

ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ	1990	2000	2005	2007	2008	2009	2010	2011	2012	2013	2014	2015 թիրախ	
3. Կենսաբանական բազմազանությունը պահպանելու նպատակով առկա հատուկ պահպանվող տարածքների մասնաբաժինը երկրի ընդհանուր տարածքում,%	--	10	11	10	10	13	12	12	12	13	--	≥13	Կատարված թիրախ
4. Ածխածնի երկօքսիդի արտանետումները 1 շնչի հաշվով, տոննա	7,04	1,79	2,26	2,38	2,74	2,43	2,48	2,82	3,08	--	--	<3,5	Լավ առաջընթաց
5. Օզոնաքայքայիչ քլորֆտոր-ածխաջրածինների [և քլորդիֆտորմեթանի] սպառումը (օզոնաքայքայիչ ներուժ, տոննա)	--	25,7	87,0	29,4	18,4	24,9	7,1	7,5	5,7	4,5	3,2	0	Լավ առաջընթաց
6. Կոշտ վառելիք օգտագործող բնակչության մասնաբաժինը		59,9	36,5	25,6	21,7	23,2	30,5	36	33,4	34,5	--	<5	Չկատարված թիրախ
7. Ծովի մակարդակից Սևանա լճի հայելու մակարդակի բարձրությունը, մետր	1897,81	1896,51	1897,66	1898,25	1898,85	1899,23	1899,23	1899,91	1900,13	1900,11	1900,16	≥1903	
8. Սևանա լճի ջրի միջին թափանցելիությունը, մետր	--	5,6	--	--	--	--	--	--	8,5	11,5	11	≥9	Կատարված թիրախ
9. Սևանա լճի ջրում լուծված թթվածնի միջին կոնցենտրացիան, (մգ/լ)	--	--	5,8	8,1	7,1	7,2	8,8	--	10,1	10,6	9,8	>8	Կատարված թիրախ
10. Կեղտաջրերի մաքրման կայանների կողմից սպասարկվող քաղաքների թիվը	21	0	0	0	0	0	0	0	3	3	6 (2 կայան 2015թ.-ի սկզբին)	5	Կատարված թիրախ
ԹԻՐԱԽ 10. ԲԱՐՁՐԱՑՆԵԼ ԱՆՎՏԱՆԳ ԽՄԵԼՈՒ ՋՐԻ ՀԱՍԱՆԵԼԻՈՒԹՅՈՒՆԸ													
1. Կենտրոնացված ջրամատակարարման միջին օրական տևողությունը քաղաքային [և գյուղական]** (Երևանից դուրս) տնային տնտեսություններում, ժամ			7,39	10,98	12,1	13,01	14,03	15,02	16	16,61	17,02	>16	Կատարված թիրախ

ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ	1990	2000	2005	2007	2008	2009	2010	2011	2012	2013	2014	2015 թիրախ	
2. Գյուղական շրջաններում խմելու ջրի հասանելիություն չունեցողների մասնաբաժինը գյուղական շրջաններում բնակվողների նկատմամբ,%		35,6	27,2	15,2	7,6	6,4	6,5	6,3	9,2	3,7	--	<5	Կատարված թիրախ
3. Գյուղական շրջաններում տեղափոխված ջուր օգտագործող բնակչության մասնաբաժինը գյուղական շրջաններում ջուր օգտագործողների ընդհանուր թվի նկատմամբ,%	--	17,8 (1998 /99 թթ.)	10,6	4,1	3	0,6	0,4	0	0,2	0	--	<1	Կատարված թիրախ
ԹԻՐԱԽ 11. ՄԻՆՉև 2015 ԹՎԱԿԱՆԸ ԲԱՐԵԼԱՎԵԼ ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ													
1. Քաղաքային վթարային կացարաններում բնակվող տնային տնտեսությունների մասնաբաժինը (ոչ սովորական կացարաններում բնակվող քաղաքային տնային տնտեսություններ), 1.000 տնային տնտեսության հաշվով	--	--	--	35,2 (2006 թ.)	--	--	--	--	--	--	28*	<5	Չկատարված թիրախ
2. Բարելավված կոյուղու համակարգերին հասանելիություն ունեցող բնակչության մասնաբաժինը,%	--	57,9**	65,1	67,0	66,7	69,1	69,2	69,6	68,0	69,7	--	>85	Չկատարված թիրախ
3. Գազամատակարարում ունեցող կացարանների մասնաբաժինը,%	--	--	47	--	--	--	73	--	--	--	77	Տվյալներ չկան	Տվյալներ չկան

Աղբյուրներ՝ Վերցված է տարբեր աղբյուրներից, յուրաքանչյուր աղբյուրի վերաբերյալ տե՛ս դրան վերաբերող քննարկման բաժինը:
Նշում՝ (*) Հնարավոր է, որ տարբեր տարիների վերաբերյալ տվյալները համեմատելի չլինեն, քանի որ սահմանումները կարող են փոխված լինել:
***Վերաբերում է 1999 թվականին՝ ՀԶՆ-ների 2005-2009 թթ. առաջընթացի զեկույցի համաձայն:*

Համատեքստ

Մինչ 2015 թվականը Հայաստանի Հանրապետությունը վավերացրել է շրջակա միջավայրի պահպանության մասին 22 միջազգային համաձայնագիր: Վերջին 15 տարվա ընթացքում այդ միջազգային բնապահպանական համաձայնագրերով ստանձնած պարտավորությունների իրականացման նպատակով Հայաստանի Հանրապետությունն օգտագործել է Գլոբալ էկոլոգիական հիմնադրամի կողմից հատկացված միջոցները:

2002 թվականի հուլիսին հանրապետությունում ՀՀ վարչապետի նախագահությամբ ստեղծվեց Կայուն զարգացման ազգային խորհուրդ, որում ընդգրկվեցին Կառավարության, մասնավոր ոլորտի, ակադեմիայի և քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներ: Կայուն զարգացման ազգային խորհուրդը, համագործակցելով միջազգային և ազգային կազմակերպությունների հետ, պատրաստեց «Ռիո+20» Ազգային գնահատման զեկույցը (2012 թվական), ինչպես նաև «Ռիո+20» Ռազմավարական ծրագիրը (2015 թվական): Այս վերջին փաստաթուղթը ներկայում քննարկվում է ՀՀ կառավարության կողմից: «Ռիո+20» Ռազմավարական ծրագրում առաջարկվում են հայեցակարգեր և գործողությունների ծրագրեր կայուն զարգացման համար էական նշանակություն ունեցող 11 հիմնական ուղղություններով, այդ թվում՝ էներգաարդյունավետություն, վերականգնվող էներգետիկա, հանքարդյունաբերություն, կանաչ տնտեսություն, կանաչ քաղաքներ, պինդ թափոններ, կրթություն և այլն:

Հայաստանի Հանրապետությունը մշակել և ընդունել է Ազգային բնապահպանական գործողությունների (ԱԲԳԾ) երկու ծրագիր, քաղաքական և ծրագրային շրջանակային փաստաթղթեր, ինչպես նաև մի շարք այլ փաստաթղթեր, որոնցում ամրագրված են ազգային և գյուղատնտեսական զարգացման առաջնահերթությունները՝ միաժամանակ ապահովելով շրջակա միջավայրի կայուն պահպանումը:[54] Հայաստանում «Կայուն զարգացում» առարկան ընդգրկվել է պետական բուհական ծրագրում, և այս թեմայով հրապարակվել են մի շարք դասագրքեր:[55]

Բնապահպանության համար մեկ ու կես տասնամյակ տևած օրենսդրական բարելավումների և միջազգային աջակցության կարևոր, դրական և շոշափելի արդյունք դարձավ երկրում հատուկ պահպանվող տարածքների ընդլայնումը: Այժմ Հայաստանում ազգային պարկերի թիվն ավելացել է երկուսով, իսկ պետական արգելավայրերի թիվը՝ չորսով: Բացի այդ, 2014 թվականին Հայաստանը հաստատեց մի շարք մարզերում գտնվող 232 բնության հուշարձանների ցանկը: Այս առաջխաղացումները տեղի են ունենում Կենսաբանական բազմազանության մասին կոնվենցիայի շրջանակներում: Հայաստանը մտադիր է մինչև 2016 թվականը շարունակել բնության հուշարձանների ցանկի ընդունումը մյուս մարզերի համար, իսկ մինչև 2020 թվականը մտադիր է մշակել Կենսաբանական բազմազանության մշտադիտարկման և անշարժ գույքի կադաստրի միասնական համակարգ:[56]

Ջգալի առաջընթացի ևս մեկ օրինակ կարող է ծառայել Սևանա լճի ջրի մակարդակի բարձրացումը և բարելավումը երկու ցուցանիշով՝ լուծված թթվածնի միջին կոնցենտրացիա և ջրի թափանցելիություն: Այս բարելավումներն արձանագրվել են 2008 թվականին ՀՀ նախագահի կարգադրությամբ՝ Սևանա լճի հիմնահարցերի հանձնաժողովի ստեղծումից հետո: Հանձնաժողովն ունի տարեկան գործողությունների ծրագիր, և միջազգային ֆինանսական աղբյուրներից ստացված միջոցներն ուղղում է լճի ավազանի հարակից խոշոր համայնքների կեղտաջրերի մաքրման կայանների կառուցմանը: Մինչև 2012 թվականը կեղտաջրերի մաքրման կայաններ են կառուցվել Գավառ, Մարտունի և Վարդենիս քաղաքներում, որոնց կեղտաջրերը հոսում են Սևանա լիճ:

Կլիմայի փոփոխության երրորդ ազգային զեկույցի (2015 թվական) պատրաստման շրջանակներում Հայաստանի Հանրապետությունը մշակեց Ջերմոցային գազերի 2010 թվական կադաստր, որում ներկայացվում են ածխածնի երկօքսիդի արտանետումների թարմացված գնահատականները՝ սկսած 2000 թվականից: Ամենավերջին տվյալներն առկա են 2012 թվականի համար: Կադաստրը թարմացվելու է երկու

54 Դրանցից են՝ Գյուղատնտեսության կայուն զարգացման ռազմավարության նախագիծը (2004թ.), Հայաստանի Հանրապետության պարենային անվտանգության ապահովման հայեցակարգը (2005թ.), ինչպես նաև Գյուղատնտեսության կայուն զարգացման ռազմավարության թարմացված տարբերակը (2006թ.): 2010թ. Գյուղատնտեսության կայուն զարգացման 2010-2020 թթ. ռազմավարությունը հաստատվեց ՀՀ կառավարության կողմից:

55 Դրանցից մի քանիսն են՝ «Կայուն մարդկային զարգացման հայեցակարգ. տեսություն և պրակտիկա», նախատեսված է ԱՊՀ երկրների բուհերի համար, «Կայուն զարգացման համաշխարհային գործընթացը և Հայաստանը. կուտակված փորձը, մարտահրավերներն ու ձեռքբերումները»:

56 Կենսաբանական բազմազանության մասին կոնվենցիայի ներքո պահպանվող տարածքներում աշխատանքների իրականացման գործողությունների ծրագիր (բեռնված է այստեղից՝ https://www.cbd.int/protected/implementation/actionplans/ 2 սեպտեմբերի, 2015թ.):

տարին մեկ: Ըստ նոր կադաստրի՝ Հայաստանում աճել են ածխածնի երկօքսիդի արտանետումները մեկ շնչի հաշվով, սակայն դրանք զգալիորեն ցածր են եղել 2015 թվականի համար մեկ անձի հաշվով 3,5 տոննա առավելագույն թիրախից, որը սահմանվել էր ՀԶՆ-ների տեղայնացման շրջանակում:

Հայաստանում հատուկ պահպանվող տարածքների վիճակ, 2015 թվական

Ազգային պարկեր	Պետական արգելոցներ	Պետական արգելավայրեր	Բնության հուշարձաններ և պահպանվող լանդշաֆտներ
2009 թվականին ավելացել է 2 պարկ ➢ Արփի լճի ազգային պարկ ➢ Արևիկ ազգային պարկ **Ընդամենը 4 պարկ** ➢ Դիլիջան ազգային պարկ ➢ Սևան ազգային պարկ	**Այսօր՝ 3** ➢ Էրեբունի ➢ Խոսրովի անտառ ➢ Շիկահող	**2007 թվականից ավելացել է 4** ➢ Զանգեզուր ➢ Խուստուփ ➢ Զիկատար ➢ Խոր Վիրապ **Այսօր՝ ընդամենը 27**	**2014 թվականին հաստատված 232 բնության հուշարձանների ցանկ:** 2010 թվականին մեկնարկել են աշխատանքները Գնիշիկ պահպանվող լանդշաֆտի վրա: 2013 թվականին հաստատվել է 2014-2018 թվականների կառավարման ծրագիրը:

Գծապատկեր 25. Աղբյուրը՝ Շրջակա միջավայրը և բնական պաշարները Հայաստանի Հանրապետությունում 2013 թվականին, ՀՀ ԱՎԾ (էջեր՝ 38-41), ՀՀ բնապահպանության նախարարություն (www.mnp.am), հատուկ պահպանվող տարածքների հողամը բերված է նախարարության կայքէջի ներքևի հատվածում, ՄԱԶԾ (http://www.am.undp.org/content/armenia/en/home/operations/projects/environment_and_energy/developing-the-protected-area-system-of-armenia.html)

Հետևելով Մոնրեալի արձանագրության ներքո ստանձնած իր պարտավորություններին՝ Հայաստանը գրեթե բացառել է օզոնաքայքայիչ նյութերի օգտագործումն իր տարածքում: Այն ամբողջությամբ բացառել է քլորֆտորածխաջրածինների սպառումը՝ 1996 թվականին արձանագրված 196,5 ՕՔՆ տոննայից սպառումն իջեցնելով մինչև զրո տոննա 2010 թվականին:[57] Այժմ երկրում ընթանում է քլորդիֆտորմեթանի բացառման գործընթացը: 2014 թվականին երկրում քլորդիֆտորմեթանի սպառումը իջել է մինչև չնչին թիվ կազմող՝ տարեկան 3,15 ՕՔՆ տոննա: Ամենայն հավանականությամբ մինչև 2015 թվականը Հայաստանը կհասնի կամ շատ կմոտենա օզոնաքայքայիչ նյութերի վերացման թիրախին:

Բացի այդ, Հայաստանի տնտեսությունը դարձել է պակաս էներգատար: 1997 թվականին ՀՆԱ-ի 1.000 ԱՄՆ դոլարի գոյացման համար Հայաստանն օգտագործում էր 295 կգ նավթային համարժեք: 2013 թվականին ՀՆԱ-ի նույն թվի գոյացման համար օգտագործվել է 131 նավթային համարժեք (գրեթե մեկ երրորդը): Նման միտման հավանական աղբյուրներից են էներգաարդյունավետ արտադրության ոլորտում արված ներդրումները և պակաս էներգատար տնտեսության ոլորտների (այն է՝ ծառայությունների և ՏՏ ոլորտներ) զարգացումը Հայաստանում:

Ներկայումս Հայաստանում ամփոփվում և ընդունվում է Էներգախնայողության և վերականգնվող էներգետիկայի 2-րդ ազգային ծրագիրը, որտեղ ամրագրված են էներգաարդյունավետ ներդրումների առաջնահերթ ոլորտները: Բացի այդ, Հայաստանը մասնակցում է Եվրոպական Միության կողմից առաջնորդվող քաղաքապետերի դաշնագրին, որի միջոցով տեղական իշխանություններն ընդունում են էներգախնայողության և վերականգնվող էներգետիկայի քաղաքականություններ և ծրագրեր: Մինչ օրս Հայաստանի 10 համայնքներում ընդունվել են Կայուն էներգիայի գործողությունների ծրագրեր (ԿԷԳԾ-ներ):[58]

Հայաստանի Հանրապետության 2014-2025 թվականների հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագրում նշվում է, որ հարկավոր է «տնտեսական աճի բարձր տեմպերին միտված Կառավարության ջանքերի հետ միասին հնարավորինս նվազեցնել բնապահպանական տեսանկյունից առաջացող ռիսկերը» (էջ՝ 167): Ռազմավարական ծրագրում նշված 15 հիմնական առաջնահերթ ուղղություններից են օրենսդրական բարեփոխումները, տնօրինման և կառավարման կարողությունների բարձրացումը (այդ թվում՝ հատուկ պահպանվող տարածքների, անտառների և ջրային ավազանների համար), բնապահ-

57 http://ozone.unep.org/en/data-reporting/data-centre, կայքէջի բովանդակությունը ներկայացված է 2015թ. սեպտեմբերի 8-ի դրությամբ:

58 http://www.eumayors.eu/about/signatories_en.html?country_search=am, կայքէջի բովանդակությունը ներկայացված է 2015թ. սեպտեմբերի 6-ի դրությամբ, հարցազրույց փորձագետների հետ:

պանական վճարների դրույքաչափերի բարձրացումը, Սևանա լճում աշխատանքների շարունակումը, «կանաչ» նորարարական մոտեցումների խթանման իրավական մեխանիզմների ստեղծումը, կրթության և իրազեկության բարձրացումը:

Թիրախ 9. Ներդնել կայուն զարգացման սկզբունքները երկրի քաղաքականության ու ծրագրերի մեջ և հակադարձել բնական ռեսուրսների կորստի գործընթացը



Գծապատկեր 26. Աղբյուր՝ Հայաստանի ՀԶՆ ցուցանիշների տվյալների շտեմարան, ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն:
Բեռնվել է 2015թ. օգոստոսի 24-ի դրությամբ՝ հետևյալ աղբյուրից՝ http://armstat.am/en/?nid=180:

Պահպանվող տարածքների մասնաբաժին: Վերջին 15 տարիներին Հայաստանում աճել է հատուկ պահպանվող տարածքների թիվը՝ առաջին հերթին կենսաբանական բազմազանության պահպանման նպատակով: ՀՀ ազգային վիճակագրական ծառայության Հայաստանի ՀԶՆ ցուցանիշների տվյալների շտեմարանում նշվում է, որ 2013 թվականի դրությամբ երկրի տարածքի 13%-ը կազմում են պահպանվող տարածքները: Այս ցուցանիշը 2000-ական թվականների սկզբին կազմում էր 10%[59]: 2009 թվականին գոյություն ունեցող (Սևան ազգային պարկ և Դիլիջանի ազգային պարկ) ազգային պարկերի թվին գումարվեց ևս 2 ազգային պարկ՝ Արփի լճի ազգային պարկը և Արևիկ ազգային պարկը: Բացի այդ, չորս նոր պետական արգելավայրերի՝ «Խոր Վիրապ», «Զանգեզուր», «Ջիկատար» և «Խուստուփ» արգելավայրերի ավելացումից հետո պետական արգելավայրերի ընդհանուր թիվը հասավ 27-ի: Վերջապես, 2014 թվականին Հայաստանն ընդունեց պահպանության ենթակա 232 բնության հուշարձանների ցանկը: Հատուկ պահպանվող տարածքների ուղղությամբ Հայաստանի արձանագրած առաջընթացը խիստ գովելի

59 Հայաստանի պահպանվող տարածքների մասին վիճակագրությունը վերցված է Հայաստանի ՀԶՆ ցուցանիշների տվյալների շտեմարանից, որն առկա է ՀՀ ազգային վիճակագրական ծառայության (ՀՀ ԱՎԾ) կայքում (http://armstat.am/en/?nid=180, accessed August 25, 2015թ.): Սակայն, պետք է նշել, որ կան որոշ անհամապատասխանություններ.

ա) այս տվյալների և Հայաստանի վիճակագրական տարեգրքում ներկայացված (ՀՀ ԱՎԾ) տվյալների միջև: 2014թ. վիճակագրական տարեգրքի 158-րդ աղյուսակում (էջ 203) նշված «հատուկ պահպանվող տարածքների» մասնաբաժինն ավելի փոքր է, քան ՀԶՆ ցուցանիշների շտեմարանում նշված մասնաբաժինը: Տարեգրքում, օրինակ, նշվում է, որ 2013թ. Հայաստանի պահպանվող տարածքները կազմել են 331.700 հա կամ Հայաստանի հողային մակերեսի 11,2%-ը: Մյուս կողմից, ՀԶՆ ցուցանիշների շտեմարանում հատուկ պահպանվող տարածքները կազմում են երկրի հողային մակերեսի 13%-ը: Տվյալների երկու խմբի միջև առկա է անհամապատասխանություն առնվազն 2009-13թթ. համար. այս տվյալները ստուգվել են հեղինակի կողմից: ՀՀ ԱՎԾ մասնագետները նշում են, որ վիճակագրական տարեգրքի տվյալները վերցված են ՀՀ հողային կադաստրի տարեկան հողային հաշվեկշռից՝ http://cadaster.am:

բ) այս տվյալների և հողային հաշվեկշռի տվյալների միջև (ՀՀ հողային կադաստր՝ http://cadastre.am/page/land_balance, գնահատված Օգոստոսի 27, 2015թ. դրությամբ): Հողային հաշվեկշռի տվյալների համաձայն՝ հատուկ պահպանվող տարածքների մասնաբաժինն ավելի փոքր է, քան ՀԶՆ ցուցանիշների շտեմարանում նշված մասնաբաժինը: Ընդ որում՝ հողային հաշվեկշռում ներառված են ոչ միայն ազգային պարկերը, պետական արգելավայրերը, այլև հանգստի և առողջական գոտիները, պատմական և մշակութային հողերը:

գ) ՀՀ ԱՎԾ 2013թ. «Շրջակա միջավայր և բնական պաշարներ» հրապարակման աղյուսակների միջև: «Հատուկ տարածքների վերաբերյալ հիմնական ցուցանիշներ, 2013թ.» աղյուսակում (էջ 34), պետական արգելավայրերի (սահմանված որպես հատուկ տարածքների տարատեսակ) ընդհանուր մակերեսը կազմում է 111,5 հազար հա: Նույն հրապարակման 39-41 էջերում տրված է ՀՀ պետական արգելավայրերի ցանկը՝ 117,6 հազար ընդհանուր մակերեսով: Այս անհամապատասխանությունները ճշգրտելու համար ՀՀ ԱՎԾ-ն պետք է աշխատի համապատասխան կառույցների հետ:

է: Բայց և այնպես, ծանոթագրությունների բաժնում նկարագրված տվյալների անհամապատասխանության պատճառով հեղինակները դժվարանում են Հայաստանի տարածքի 13%-ը որպես պահպանվող տարածքներ հայտարարել և 2015 թվականի ՀԶՆ-ի ներքո սահմանված թիրախը համարել կատարված:

Անտառածածկ տարածքներ: ՀԶՆ ցուցանիշների տվյալների շտեմարանում բերված պաշտոնական տվյալների համաձայն՝ 2005-2013 թվականները ընկած ժամանակահատվածում, ասել է թե՝ ընդամենը 8 տարում, Հայաստանի անտառածածկ տարածքների մակերեսը 11,2%-ից հասել է 9,7%-ի: Խոսքը 450 քառակուսի կիլոմետր անտառածածկ տարածքների կորստի մասին է, ինչը համարժեք է Երևան քաղաքի մակերեսի կրկնապատիկին: Այդուհանդերձ, անտառածածկ տարածքների մասով ունեցած վիճակագրական տվյալները լի են հակասություններով:[60] Չնայած հանրամատչելի տվյալների հետ կապված խնդիրներին՝ բոլորը, կարծես, համամիտ են, որ Հայաստանի անտառածածկ տարածքների մասով դիտվում է նվազեցման միտում: Այս միտումն անհանգստության տեղիք է տալիս, իսկ այն հակադարձելու համար պահանջվում են արագ և վճռական քայլեր:

Կոշտ վառելիք օգտագործող բնակչության մասնաբաժին: Տնային տնտեսությունների տարեկան հետազոտությունների համաձայն՝ Հայաստանում գրեթե երկու անգամ կրճատվել է կոշտ վառելիք (փայտ և աթար) օգտագործող բնակչության մասնաբաժինը՝ 1996 թվականին արձանագրված 62%-ից 2013 թվականին իջնելով մինչև 35%: Թեև խոսքը կարևոր առաջընթացի մասին է, սակայն այն մեծապես տարբերվում է 2015 թվականի ՀԶՆ-ի ներքո սահմանված թիրախից, ըստ որի՝ այդ ցուցանիշը չպետք է գերազանցի երկրի բնակչության 5%-ը: Քիչ հավանական է, որ Հայաստանը կկատարի նշված թիրախը: Այդուհանդերձ, ավելի մեծ անհանգստության տեղիք է տալիս այն հանգամանքը, որ 2008 թվականից ի վեր նշված միտումը հակադարձվել է: Նախկինում արձանագրվել էր շարունակական կրճատում, որը 2008 թվականին հասել էր 22%-ի, սակայն մինչև 2013 թվականը կոշտ վառելիքի օգտագործումը բարձրացավ մինչև 35%:

60 Անտառածածկ տարածքների վերաբերյալ եղած վիճակագրական տվյալները լի են հակասություններով: Ստորև բերված են անտառածածկ տարածքներին վերաբերող թվերի հետ կապված որոշ ակներև բարդություններ.

ա) Հայաստանի ՀԶՆ ցուցանիշների տվյալների շտեմարանում անտառածածկ տարածքների վերաբերյալ օգտագործվող վիճակագրական տվյալները ներկայացված են որպես ՀՀ հողային կադաստրի հողային ֆոնդի հաշվետվության մեջ նշված՝ երկրի անտառային հողերի (անվանվում է նաև «անտառային ֆոնդ») տոկոս: Խնդիրը բխում է այն հանգամանքից, որ անտառներն ընդգրկված են նաև այլ կատեգորիաներում, ինչպիսիք են՝ հատուկ պահպանվող տարածքներն ու համայնքային բնակավայրերը: Այդուհանդերձ, ՀԶՆ ցուցանիշների տվյալների շտեմարանում այս իրողությունը հաշվի չի առնվում: Այս հանգամանքը կարող է շարունակաբար բերել երկրի անտառածածկ տարածքների թերի հաշվարկմանը:

բ) Անթույլատրելի է որպես անտառային հողեր նշված անտառածածկ տարածքների գերհաշվարկը: «Landsat» ծրագրի օգնությամբ Հայաստանի անտառածածկ տարածքների վերլուծությունը վկայում է այն մասին, որ 2001 թվականին Հայաստանի անտառածածկ տարածքները կազմում էին ոչ ավելի, քան երկրի մակերեսի 8,3%-ը (Տես Moreno-Sanchez, R., Sayadyan, H., R. Streeter, և J. Rozelle. 2007թ., «The Armenian forests: threats to conservation and needs for sustainable management», այստեղ՝ «Ecosystems and Sustainable Development». հրատարակչություն՝ VI. WIT Press. Southampton, Միացյալ Թագավորություն, էջեր 113-122): Այս տվյալներն էապես հակասում են Հայաստանի ՀԶՆ ցուցանիշների տվյալների շտեմարանում բերված 11,2% ցուցանիշին:

գ) Գոյություն ունի նաև անհամապատասխանություն Հայաստանի ՀԶՆ ցուցանիշների տվյալների շտեմարանում բերված թվերի և ՄԱԿ-ի համաշխարհային պարենի և գյուղատնտեսության կազմակերպության կողմից հրապարակված տվյալների շտեմարանում անտառածածկ տարածքների մասով բերված թվերի միջև (Համաշխարհային աղյուսակներ (անգլերեն տարբերակ) բեռնված է այստեղից՝ http://countrystat.org 2015թ. սեպտեմբերի 6-ի դրությամբ): «Armenia the Trends in Extent of Forests 1990-2010» խորագիրը կրող հրապարակման մեջ բերված վիճակագրական տվյալները վկայում են այն մասին, որ անտառածածկ տարածքները Հայաստանում կազմում են՝ 1990թ.-ին՝ 347 հազար հեկտար (Հայաստանի տարածքի 11,7%-ը), 2000թ.-ին՝ 304 հազար հեկտար (Հայաստանի տարածքի 10,2%-ը), 2005թ.-ին՝ 283 հազար հեկտար (Հայաստանի տարածքի 9,5%-ը), 2010թ.-ին՝ 262 հազար հեկտար (Հայաստանի տարածքի 8,8%-ը):

ՀՀ կառավարությունը և ՀՀ ԱՎԾ-ն պետք է աշխատանք տանեն համապատասխան գերատեսչությունների հետ՝ նշված անհամապատասխանությունները վերացնելու նպատակով: Կարևոր է նշել, որ ՀՀ կառավարության 2005 թվականի հուլիսի 28-ի թիվ 1152-Ն որոշմամբ հիմնադրվեց «Անտառային պետական մոնիտորինգի կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը: Նշված կենտրոնը ապահովվել է արբանյակային պատկերներ ստացող և հեռահար զոնդավորման կարողություններ ունեցող սարքավորումներով, որոնք ֆինանսավորվել են Գերմանիայի կառավարության կողմից: Դժվար է պատկերացնել, որ անտառածածկ տարածքների մակերեսի և որակի վերաբերյալ 10 տարում հանրությանը չեն տրամադրվել հուսալի տվյալներ:

Կոշտ վառելիք օգտագործող բնակչության մասնաբաժին,%



Գծապատկեր 27. Աղբյուր՝ Հայաստանի ՀԶՆ ցուցանիշների տվյալների շտեմարան, ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն: Բեռնվել է 2015թ. օգոստոսի 24-ի դրությամբ՝ հետևյալ աղբյուրից՝ http://armstat.am/en/?nid=180: Տվյալների շտեմարանի մեջբերումը վկայում է այն մասին, որ համապատասխան տեղեկությունները վերցված են ՏՏԿԱՀ-ից:

Ածխածնի երկօքսիդի արտանետումներ: Հայաստանում աճել են ածխածնի երկօքսիդի արտանետումները մեկ շնչի հաշվով, սակայն դրանք զգալիորեն ցածր են մեկ շնչի հաշվով 3,5 տոննա առավելագույն թիրախից: Կլիմայի փոփոխության 3-րդ ազգային զեկույցի պատրաստման շրջանակներում Հայաստանը մշակել է Ջերմոցային գազերի կադաստր, որը թարմացվելու է երկու տարին մեկ: Կադաստրում առկա ամենաթարմ տվյալները վերաբերում են 2010 թվականին: Ակնկալվում է, որ 2012 թվականի տվյալները կստացվեն հաջորդ տարի:

Ածխածնի երկօքսիդի արտանետումներ, տոննա մեկ շնչի հաշվով, 2015 թվականի թիրախ <3,5 տոննա ածխածնի երկօքսիդ մեկ շնչի հաշվով



Գծապատկեր 28. http://armstatbank.am, կայքէջի բովանդակությունը ներկայացված է 2015թ. սեպտեմբերի 5-ի դրությամբ:

Էներգատարություն: Հայաստանի տնտեսությունը դարձել է պակաս էներգատար: 1997 թվականին ՀՆԱ-ի 1.000 ԱՄՆ դոլարի գոյացման համար Հայաստանն օգտագործում էր 295 կգ նավթային համարժեք:[61] 2013 թվականին նույն տնտեսական արդյունքի գոյացման համար օգտագործվել է 131 կգ նավթային համարժեք (գրեթե մեկ երրորդը): Նման միտման հավանական աղբյուրներից են էներգաարդյունավետ արտադրության ոլորտում արված ներդրումները և պակաս էներգատար տնտեսության հատվածների (այն է՝ ծառայություններ և ՏՏ ոլորտ) զարգացումը Հայաստանում:

Հայաստանը գրեթե բացառել է օզոնաքայքայիչ նյութերի օգտագործումն իր տարածքում՝ դրանց մակարդակը 1996 թվականին արձանագրված 197 տոննայից իջեցնելով մինչև 7,5 տոննա 2013 թվականին: Օզոնաքայքայիչ նյութերի առկայությունն ու օգտագործումը ողջ աշխարհում նվազում է: Հայաստանը չի

61 Տվյալները վերցված են ՀՀ ազգային վիճակագրական ծառայության ՀԶՆ տվյալների շտեմարանից: Տվյալների շտեմարանում չի նշվում այն տարին, որում արձանագրված ինֆլյացիան արտացոլելու համար կատարվել է համապատասխան շտկում: Հեղինակները կարծում են, որ բացթողում է չհիշատակել ըստ գնահի կատարված շտկումը, ընդ որում՝ ՀՆԱ-ի թվերը փաստորեն շտկված են՝ ըստ ժամանակի ընթացքում արձանագրված գնահի, այլ ոչ թե միայն գնողունակության համարժեքության համաձայն:

կարող գնել դրանք միջազգային շուկայում, և միջազգային համաձայնագրերով պարտավորված է զերծ մնալ դրանց արտադրությունից: Հավանական է, որ Հայաստանը մինչև 2015 թվականը կկատարի քլորֆտորածխաջրածինների զրոյական սպառում ապահովելու իր առջև դրված թիրախը:

Էներգիայի օգտագործում (նավթային համարժեք, կգ) ՀՆԱ-ի 1.000 ԱՄՆ դոլարի հաշվով (ԳՀ)



Գծապատկեր 29. Աղբյուր՝ Հայաստանի ՀԶՆ ցուցանիշների փվյալների շտեմարան, ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն: Բեռնվել է 2015թ. օգոստոսի 24-ի դրությամբ՝ այստեղից՝ http://armstat.am/en/?nid=180:

Սևանա լճի մակարդակ, մետր



Գծապատկեր 30. Աղբյուր՝ www.seis-sevan.am, կայքէջի բովանդակությունը ներկայացված է 2015թ. օգոստոսի 31-ի դրությամբ:

Սևանա լճի մակարդակ: Հայաստանը բարձրացրել է Սևանա լճի մակարդակը մոտ չորս մետրով՝ 2002 թվականին արձանագրված ծովի մակարդակից բարձր կազմող 1.896,32 մետրից 2015 թվականին հասնելով մինչև 1.900,12 մետրի: 2015 թվականի ՀԶՆ-ների ներքո Հայաստանի առջև դրված է թիրախ՝ բարձրացնել լճի մակարդակը մինչև 1.903 մետր: Հայաստանը չի իրականացնի այս նպատակը, քանի որ լճի մակարդակի հետագա բարձրացման արդյունքում որոշ ենթակառուցվածքային և տնտեսական ակտիվներ կհայտնվեն ջրի տակ: ՀՀ կառավարությունը նման ծախսեր կրելու պատրաստակամություն չի հայտնել:[62]

Սևանա լճի ջրում լուծված թթվածնի տարեկան մակարդակ, (մգ/լ): ՀԶՆ թիրախ՝ թթվածնի 8 մգ մեկ լիտրում



Գծապատկեր 31. Աղբյուր՝ Հայաստանում մակերևութային ջրերի որակի տարեկան տեղեկագիր, Շրջակա միջավայրի վրա ներգործության մոնիտորինգի կենտրոն, ՀՀ բնապահպանության նախարարություն, Երևան, 2004-2014 թթ.

62 2001 թվականի դեկտեմբերի 14-ին ընդունված «Սևանա լճի էկոհամակարգի վերականգնման, պահպանման, վերարտադրման և օգտագործման միջոցառումների տարեկան ու համալիր ծրագրերը հաստատելու մասին» օրենքով ամրագրված էր մեկ այլ թիրախ Սևանա լճի մակարդակի վերաբերյալ: Նշված օրենքի համաձայն՝ 2003-ից 2030 թվականներն ընկած ժամանակահատվածում Սևանա լճի մակարդակը պետք է բարձրացվեր տարեկան 21,6 սանտիմետրով: Նշվում է, որ 2001 թվականի վերջի դրությամբ՝ լճի մակարդակը կազմել է 1.896,66 մետր: Ասվածը ենթադրում է, որ մինչև 2015 թվականը լճի մակարդակը պետք է հասներ 1.899,28 մետրի (=1.896,66 + [21.6*13 տարի]): Այս թիրախը չի կատարվել: Բայց և այնպես, սույն զեկույցում գնահատվում է ՀԶՆ-ների իրագործման ընթացքը, իսկ դրանց ներքո սահմանված թիրախը կազմում է 1.903 մետր: Նշված թիրախը չի կատարվել:

Սևանա լճի ջրի որակը (լուծված թթվածին և թափանցելիություն): Ըստ ստացված տվյալների՝ Սևանա լճի մաքրությունը (չափվում է թափանցելիությամբ և լուծված թթվածնի պարունակությամբ) բարելավվել է: Շրջակա միջավայրի վրա ներգործության մոնիտորինգի կենտրոնի տվյալներով՝ երեք տարում՝ 2012-2014 թվականներին, լուծված թթվածնի միջին պարունակությունը կազմել է 10,1, 10,6, 9,8 մգ/լ, ընդ որում բոլոր ցուցանիշները գերազանցում են 2015 թվականի համար սահմանված 8 մգ/լ-ը: Ըստ ունեցած տեղեկատվության՝ Սևանա լճի ջրի թափանցելիությունը նույնպես բարելավվել է: 2012-2014 թվականներն ընկած ժամանակահատվածում ջրի թափանցելիությունը կազմել է համապատասխանաբար 8,5, 11,5 և 11 մետր: Վերջին երկու չափագրումները գերազանցել են 2015 թվականի ՀԶՆ-ների ներքո սահմանված թիրախը, որը կազմում է ինը մետր: Մինչև 2012 թվականը կեղտաջրերի մաքրման կայաններ են կառուցվել Գավառ, Մարտունի և Վարդենիս քաղաքներում, որոնց կեղտաջրերը հոսում են Սևանա լիճ:

Կեղտաջրերի մաքրում: Ներկայում Հայաստանում գործում է կոյուղու կեղտաջրերի մաքրման վեց կայան: Այս կայաններից հինգում, որոնք են Վարդենիսում, Մարտունիում և Գավառում բացված (բոլորը Սևանա լճի բնապահպանական ծրագրի շրջանակներում) նոր կայանները, ինչպես նաև Դիլիջանում և Ջերմուկում վերակառուցված և վերագործարկված կայանները իրականացվում է միայն մեխանիկական մաքրում: Բացի այդ, Երևանի մոտակայքում գտնվող Փարաքար գյուղում կա արհեստական կենսաբանական լճակ: 2015 թվականի ՀԶՆ-ների ներքո սահմանված թիրախի համաձայն՝ երկրում պետք է գործի հինգ կայան: Հայաստանը գերազանցել է իր առջև դրված նպատակը, ըստ որի՝ մինչև 2015 թվականը պետք է գործի հինգ մաքրման կայան:

Աղյուսակ 3. Կեղտաջրերի մաքրման կայանների աշխատանքը Հայաստանում

Վարչական շրջան	Կեղտաջրերի մաքրման տեսակ և մակարդակ	Գործարկման տարի	Ֆինանսավորման աղբյուրներ
Գավառ*	Նոր շինություն, սովորական, միայն մեխանիկական	2012թ.	ՎԶԵԲ, Սևանա լիճ բնապահպանական ծրագիր, ՀՀ կառավարություն
Մարտունի*	Նոր շինություն, սովորական, միայն մեխանիկական	2012թ.	ՎԶԵԲ, Սևանա լիճ բնապահպանական ծրագիր, ՀՀ կառավարություն
Վարդենիս*	Նոր շինություն, սովորական, միայն մեխանիկական	2012թ.	ՎԶԵԲ, Սևանա լիճ բնապահպանական ծրագիր, ՀՀ կառավարություն
Փարաքար**	Նոր շինություն, արհեստական լճակ՝ մեխանիկական և կենսաբանական	2014թ.	ՄԱԶԾ-ԳԷՀ Փոքր դրամաշնորհների ծրագիր, Հայաստան, Գլոբալ ջրային համագործակցություն Ծրագիր «DFID WACDEP», Փարաքար վարչական շրջան, ՋԻՆՁ ՍՊԸ, Հայաստան
Դիլիջան*	Վերակառուցված, սովորական, միայն մեխանիկական	2015թ.	ՎԶԵԲ՝ Հայաստանի փոքր քաղաքների ջրամատակարարման ծրագիր, ԵՆԲ, ՀՆԳ, ՀՀ կառավարություն
Ջերմուկ*	Վերակառուցված, սովորական, միայն մեխանիկական	2015թ.	ՎԶԵԲ՝ Հայաստանի փոքր քաղաքների ջրամատակարարման ծրագիր, ԵՆԲ, ՀՆԳ, ՀՀ Կառավարություն

Աղբյուրներ՝ (*) www.armwater.am/en/current-activities.html, կայքէջի բովանդակությունը ներկայացված է 2015թ. սեպտեմբերի 2-ի դրությամբ:
(**) http://www.am.undp.org/content/armenia/en/home/ourwork/environmentandenergy/successstories/local-solutions-to-wastewater-problems.html, կայքէջի բովանդակությունը ներկայացված է 2015թ. օգոստոսի 31-ի դրությամբ:

Թիրախ 10. Բարձրացնել անվտանգ խմելու ջրի հասանելիությունը

Վերջին 15 տարիներում Հայաստանում բարձրացել է բնակչության համար անվտանգ խմելու ջրի հասանելիությունը: Այս թիրախը չափվում է երեք ցուցանիշով: Դրանք են՝ տնային տնտեսություններին ջրամատակարարման օրական տևողությունը, գյուղական շրջաններում կենտրոնացված ջրամատակարարումը, ինչպես նաև փոխադրված ջուր օգտագործող գյուղական բնակչության մասնաբաժինը: Հայաստանում այս բոլոր ցուցանիշների գծով արձանագրվել է առաջընթաց:

Ջրամատակարարման օրական տևողություն: Ըստ Երևանից դուրս գտնվող համայնքներին ջրամատակարարման ծառայություն մատուցող ընկերության տվյալների՝ խմելու ջրի ջրամատակարարման տևողությունը Երևանից դուրս գտնվող շրջաններում կայուն աճել է՝ հասնելով օրական 17 ժամի: Գոյություն չունի այս թվերի անկախ ստուգման որևէ հնարավորություն: 2015 թվականի ՀԶՆ-ների ներքո սահմանված թիրախը նախատեսում էր 16 ժամ խմելու ջրի մատակարարում Երևանից դուրս գտնվող համայնքների համար:

Անվտանգ խմելու ջրի հասանելիությունը գյուղական շրջաններում: Ըստ տնային տնտեսությունների տարեկան հետազոտությունների՝ Հայաստանում գյուղական շրջաններում արձանագրվել է առաջընթաց բնակչության ավելի լայն մասնաբաժնին անվտանգ խմելու ջրի հասանելիությունն ապահովելու ուղղությամբ: 2000 թվականին գյուղական շրջանների բնակչության 36%-ը չի ունեցել անվտանգ խմելու ջրին հասանելիություն, ասել է թե՝ կենտրոնացված ջրամատակարարման հնարավորություն: 2013 թվականին այդ ցուցանիշը կազմել է 4%: Ըստ 2015 թվականի ՀԶՆ-ների ներքո սահմանված թիրախի՝ անվտանգ խմելու ջրին հասանելիության հնարավորություն չունեցող բնակչության մասնաբաժինը պետք է լինի 5%-ից պակաս: Առավել հավանական է, որ ջրամատակարարման նույն մակարդակը կպահպանվեր նաև 2014 և 2015 թվականներին:

Փոխադրված ջուր գյուղական շրջաններում: Տնային տնտեսությունների հետազոտությունները վկայում են այն մասին, որ այսօր բնակչության ավելի փոքր մասնաբաժին է օգտվում փոխադրված ջրից, քան 15 տարի առաջ: 1999 թվականին գյուղական շրջանների բնակչության 18%-ն օգտագործում էր փոխադրված ջուր: 2013 թվականին գրեթե ոչ մի գյուղական համայնքում ջրի նման աղբյուր չէր օգտագործվում:[63] Ըստ 2015 թվականի ՀԶՆ-ների ներքո սահմանված թիրախի՝ փոխադրված ջուր օգտագործող գյուղական շրջանների բնակչության մասնաբաժինը պետք է լինի 1%-ից պակաս:

Թիրախ 11. Բարելավել բնակարանային պայմանները

7-րդ ՀԶՆ-ի ներքո ընդգրկված է նաև բնակարանային պայմանների բարելավման թիրախը: Ընտրվել են երեք ազգային ցուցանիշներ՝ վթարային կացարաններում բնակվող քաղաքային տնային տնտեսությունների մասնաբաժինը 1.000 տնային տնտեսությունների հաշվով, ավելի լավ պայմաններով հագեցած կոյուղուն (հոսող ջրով զուգարաններ) հասանելիություն ունեցող բնակչության մասնաբաժինը և բնական գազի հասանելիությունը համայնքի համար:

Վթարային կացարաններում քաղաքաբնակ տնային տնտեսություններ: Վթարային կացարաններում բնակվող (սահմանվում են որպես ոչ սովորական կացարաններում բնակվող) տնային տնտեսությունների մասնաբաժինը կազմում է 28 տնային տնտեսություն՝ 1.000 քաղաքաբնակ տնային տնտեսությունների հաշվով (կամ ավելի ճշգրիտ՝ 511.065 քաղաքային տնային տնտեսությունների ընդհանուր թվաքանակից՝ 14.091 տնային տնտեսություն): Հայաստանի Հանրապետության 2011 թվականի մարդահամարի տվյալներով (Բնակության և բնակարանային պայմանների գլուխ, 8.1 աղյուսակ),[64] քաղաքաբնակ տնային տնտեսությունները բաժանված են երկու տեսակի՝ հիմնական (բնակելի տներ կամ տան մասեր, բնակարաններ կամ բազմաբնակարանային շենքերի մասեր և այգետնակներ) և ժամանակավոր՝ տնակներ կամ ժամանակավոր կացարաններ, հանրակացարաններ, այլ բնակության համար հարմարեցված կացարաններ: Նշված վերջին կացարանների երեք տեսակները միասին իրենցից ներկայացնում են «ոչ սովորական», ասել է թե՝ վթարային կացարանները: Ամբողջովին պարզ չէ, թե ինչն էր նախորդ առաջընթացի զեկույցներում համարվում «ոչ սովորական» կացարան: Ուստի, դժվար է համեմատություններ անցկացնել:

63 Այդուհանդերձ, կան առանձին տեղեկություններ, ըստ որոնց՝ որոշ քաղաքային համայնքներում, հատկապես՝ Արմավիրի մարզում նախընտրում են գնել բեռնատարներով բերված խմելու ջուր:

64 Տե՛ս 2011 թվականի մարդահամարի արդյունքներ, Բնակության և բնակարանային պայմաններ, 8.1 աղյուսակ, http://www.armstat.am/file/article/1.bajin_8-811-908.pdf



Գծապատկեր 32. Կացարան, ռեսուրսներ և կոմունալ ծառայություններ, 2006, 2011 և 2015 թթ.

Նշում. *Այս մասնաբաժինները վերցված են տվյալ հրապարակման երկու տարբեր գլուխներում մեջբերվող աղյուսակներից: Կացարանների ընդհանուր թիվը (որն ընդգրկում է ինչպես բազմաբնակարանային շենքեր, այնպես էլ մեկ ընտանիքի համար նախատեսված առանձնատներ) բաժանված է՝ ըստ գյուղական և քաղաքային շրջանների, և վերցված է «Բնակարանային ֆոնդ» խորագիրը կրող գլխից: 2006 և 2011 թվականների հրապարակումներում ներկայացվում է 2006 և 2010 թվականների հունվարի 1-ի դրությամբ արձանագրված կացարանների թիվը: Վերլուծական նպատակներով մենք ենթադրում ենք, որ տարեսկզբին արձանագրված թիվը նույն է, ինչ նախորդող տարեվերջին արձանագրված թիվը: 2015 թվականի հրապարակման մեջ կացարանների թվերի մասով ներկայացվում են 2014 թվականի տարեվերջին արձանագրված տվյալները: Գազամատակարարում ունեցող կացարանների թվի վերաբերյալ տվյալները կարելի է գտնել «Հայաստանի բնակավայրերի գազաֆիկացում» խորագիրը կրող գլխում: Յուրաքանչյուր տարվա համար օգտագործվում են տարեվերջի դրությամբ ունեցած տվյալները:*

Բարելավված կոյուղու հասանելիություն: ՀԶՆ ցուցանիշների տվյալների շտեմարանի և «armdevinfo.am»-ի տվյալների համաձայն՝ բարելավված կոյուղուն (հոսող ջրով զուգարաններ) հասանելիություն ունեցող բնակչության մասնաբաժինը չափավոր աճել է՝ 2000 թվականին արձանագրված 60%-ից 2013 թվականին հասնելով 70%-ի:[65] Հաշվի առնելով այն հանգամանքը, որ վերջին 13 տարիներին Հայաստանում արձանագրվել է տարեկան միջինում 1% բարելավում՝ 2015 թվականի ՀԶՆ-ների ներքո սահմանված թիրախը, ըստ որի՝ բնակչության ավելի քան 85%-ը պետք է բարելավված կոյուղու հասանելիություն ունենա, ամենայն հավանականությամբ, չի կատարվի:

Գազաֆիկացված կացարաններ: Ըստ «Հայաստանի Հանրապետության բնակարանային ֆոնդը և կոմունալ տնտեսությունը» խորագրով տարեկան հրապարակման՝ 2014 թվականի տարեվերջի դրությամբ երկրի կացարանների 77%-ը (ներառյալ՝ բազմաբնակարանային շենքերը և մեկ ընտանիքի համար նախատեսված առանձնատները) գազաֆիկացվել է:[66] Արձանագրվել է որոշակի անհավասարություն քաղաքային և գյուղական շրջանների միջև, այն է՝ գազաֆիկացվել է քաղաքային կացարանների 87%-ը, իսկ գյուղական կացարանների՝ 56%-ը: 2005 թվականի համեմատ՝ կացարանների գազաֆիկացումն աճել է ինչպես գյուղական, այնպես էլ քաղաքային շրջաններում, թեպետ քաղաքային շրջանում գրանցվել է աճի ավելի արագ տեմպ:

65 Աղբյուր՝ Հայաստանի սոցիալական պատկեր և աղքատություն, ոչ նյութական աղքատություն, ՀՀ ԱՎԾ:

66 2005 և 2010 թթ. համար Հայաստանում արձանագրվել է հետևյալ ցուցանիշը՝ «Հուսալի գազամատակարարում ունեցող 300-ից ավելի տնային տնտեսություններ ունեցող համայնքների մասնաբաժինը,%»: Այդուհանդերձ, սույն զեկույցի հեղինակներին չի հաջողվել այս ցուցանիշի վերաբերյալ գտնել հանրամատչելի տվյալների աղբյուր: Որոշում կայացվեց գազաֆիկացված կացարանների թիվը ներկայացնել որպես երկրում գազամատակարարում ունեցող համայնքների թվի արտացոլում:

Մարտահրավերներ և հեռանկարներ

Հայաստանի Հանրապետության 2014-2025 թվականների հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագրում նշվում է, որ հատկապես կարևոր է, որպեսզի «տնտեսական աճի բարձր տեմպերին միտված ՀՀ կառավարության ջանքերի հետ միասին հնարավորինս նվազեցվեն բնապահպանական տեսանկյունից առաջացող ռիսկերը» (էջ 167): Հայաստանի Հանրապետության հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագրում բերված են նախազգուշացումներ բնապահպանական ռիսկերի մասին: Դրանք են՝

- հանքարդյունաբերության ոլորտի ընդլայնումը,
- ապօրինի անտառահատումները,
- ջրային ռեսուրսների գերշահագործումը՝ պայմանավորված ստորերկրյա ջրային ռեսուրսներ օգտագործող ենթաճյուղերի արագ զարգացմամբ և կլիմայի փոփոխությամբ,
- անապատացման վտանգի աճը:

Սա Հայաստանի առջև ծառացած բնապահպանական վտանգների լավ մեկնարկային ախտորոշում է: Այնուամենայնիվ, գոյություն ունեն շրջակա միջավայրի համար այլ խնդրահարույց հարցեր, որոնք պետք է ավելացվեն բերված ցանկին: Այդ խնդիրների շարքին են պատկանում ի թիվս այլնի՝ Սևանա լճի վիճակի կառավարումը (այդ թվում՝ դրա բուսական ու կենդանական աշխարհը և ջրի որակը՝ լուծված թթվածնի պարունակությունից զատ), անտառների արդյունավետ մոնիտորինգն ու կառավարումը, կենսաբանական բազմազանության մոնիտորինգն ու կառավարումը, հատուկ պահպանվող տարածքների մոնիտորինգն ու կառավարումը, բնապահպանական կանոնների մոնիտորինգն ու կենսագործումը, ջրերի և հողերի մոնիտորինգն ու մաքրումը, հատկապես՝ հանքարդյունաբերական ոլորտի ձեռնարկություններ ունեցող համայնքներում, ինչպես նաև սխալ գյուղատնտեսական մեթոդների արդյունքում վատթարացած հողակտորներում, արդյունաբերական աղտոտվածությունը ու կոշտ թափոնների կառավարումը և միջավայրի վերաբերյալ կրթության ու իրազեկության բարձրացման հատուկ շեշտադրումը:

Հեռանկարային զարգացման ծրագիրը ներառում է նաև ավելի լայն նշանակություն ունեցող հարցեր: Ռազմավարական ծրագրում նշված 15 հիմնական առաջնահերթ ուղղություններից են՝ օրենսդրական բարեփոխումները, տնօրինման և կառավարման կարողությունների բարձրացումը (այդ թվում՝ հատուկ պահպանվող տարածքների, անտառների և ջրային ավազանների պարագայում), բնապահպանական վճարների դրույքաչափերի բարձրացումը, Սևանա լճում աշխատանքների շարունակումը, «կանաչ» նորարարական մոտեցումների խթանման իրավական մեխանիզմների ստեղծումը, ինչպես նաև կրթության և իրազեկության բարձրացումը:

8

ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՎՈՐՈՒՄ

ՆՊԱՏԱԿ 8. ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԶԵՎԱՎՈՐՈՒՄ

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԹԻՐԱԽՆԵՐ	ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ
Թիրախ 8.Ա. Շարունակել զարգացնել բաց, կանոնակարգված, կանխատեսելի, ոչ խտրական առևտրային և ֆինանսական համակարգ: **Թիրախն ընդգրկում** է ազգային և միջազգային մակարդակով պատշաճ կառավարում, զարգացում և աղքատության կրճատում ապահովելու պարտավորություն: **Թիրախ 8.Բ.** Բավարարել պակաս զարգացած երկրների հատուկ կարիքները: **Այս թիրախն** ընդգրկում է՝ պակաս զարգացած երկրների համար արտահանման սակագների և ազատ քվոտաների հասանելիություն, պարտքի ծանր բեռ ունեցող աղքատ երկրների պարտքի բեռի թեթևացման ուժեղացված ծրագրեր և պաշտոնական երկկողմանի պարտքերի ներում, առավել առատ պաշտոնական օգնության տրամադրում աղքատության կրճատման համար պատրաստակամ երկրներին: **Թիրախ 8.Գ.** Բավարարել դեպի ծով ելք չունեցող երկրների և զարգացող փոքր կղզի-պետությունների հատուկ կարիքները (զարգացող փոքր կղզի-պետությունների Կայուն զարգացման համար Գործողությունների ծրագրի և Ընդհանուր Վեհաժողովի 22-րդ հատուկ նստաշրջանի արդյունքների շրջանակներում): **Թիրախ 8.Դ.** Ազգային և միջազգային միջոցներով համապարփակ լուծել զարգացող երկրների պարտքի հիմնահարցերը՝ պարտքը կայուն դարձնելով երկարաժամկետ հեռանկարում:	Պակաս զարգացած երկրների, Աֆրիկայի երկրների, դեպի ծով ելք չունեցող երկրների և զարգացող փոքր կղզի-պետությունների մասով ստորև բերված ցուցանիշներից մի քանիսը մշտադիտարկվում են առանձին: **Պաշտոնական օգնություն զարգացման նպատակով (ՊՕԶ)** 8.1 Զուտ ՊՕԶ-ը, ընդամենը և պակաս զարգացած պետություններին, որպես տոկոս Զարգացման նպատակով օգնության կոմիտեի դոնորների համախառն ազգային եկամտից 8.2 Ընդհանուր երկկողմ, հատվածներով բաշխված ՊՕԶ-ի մասնաբաժինը հիմնական սոցիալական ծառայությունների նկատմամբ (հիմնական կրթություն, առաջնային առողջապահություն, սնունդ, անվտանգ ջուր և կոյուղի) 8.3 Պայմանների հետ չկապված երկկողմանի ՊՕԶ-ի մասնաբաժինը 8.4 Դեպի ծով ելք չունեցող զարգացող երկրների կողմից ստացված ՊՕԶ-ը՝ որպես իրենց համախառն ազգային եկամտի մասնաբաժին 8.5 Զարգացող փոքր կղզի-պետությունների կողմից ստացված ՊՕԶ-ը՝ որպես իրենց համախառն ազգային եկամտի մասնաբաժին **Շուկային հասանելիությունը** 8.6 Զարգացած երկրների ընդհանուր առանց մաքսատուրքերի ներմուծման մասնաբաժինը (արժեքային արտահայտությամբ՝ բացառությամբ զենքը) զարգացող և պակաս զարգացած երկրներից 8.7 Զարգացող երկրներից գյուղատնտեսական արտադրանքի, տեքստիլ արտադրության և հագուստի համար զարգացած երկրների կողմից սահմանված միջին գինը 8.8 Գյուղատնտեսական աջակցության գնահատականը ՏՀԶԿ երկրների համար որպես տոկոս իրենց ՀՆԱ-ի նկատմամբ 8.9 ՊՕԶ-ի մասնաբաժինը, որը տրամադրված է առևտրային ներուժ ստեղծելու համար **Պարտքի կայունությունը** 8.10 «Պարտքի ծանր բեռ ունեցող աղքատ երկրների նախաձեռնություն» շրջանակներում որոշումներ կայացրած և դրանք իրականացրած երկրների ընդհանուր քանակը (կուտակային) 8.11 Պարտքի բեռի թեթևացում «Պարտքի ծանր բեռ ունեցող աղքատ երկրների» և «Բազմակողմ պարտքի բեռի թեթևացում» նախաձեռնությունների շրջանակներում 8.12 Արտաքին պետական պարտքի սպասարկումը՝ որպես տոկոս արտահանված ապրանքների և ծառայությունների նկատմամբ
Թիրախ 8.Ե. Համագործակցելով դեղագործական ընկերությունների հետ՝ ապահովել հիմնական դեղերի մատչելիությունը զարգացող երկրներում:	8.13 Մատչելի հիմնական դեղամիջոցներից մշտապես օգտվելու հնարավորություն ունեցող բնակչության մասնաբաժինը

Թիրախ 8.Զ. Համագործակցելով մասնավոր հատվածի հետ՝ մինչև 2015 թվականը մատչելի դարձնել նորարար տեխնոլոգիաների օգուտները, մասնավորապես՝ տեղեկատվության և հաղորդակցման ոլորտներում:	8.14 Հեռախոսային գծեր 100 բնակչի հաշվով 8.15 Բջջային կապի բաժանորդներ 100 բնակչի հաշվով 8.16 Համացանցից օգտվողների թիվ 100 բնակչի հաշվով
ԱԶԳԱՅԻՆ ԹԻՐԱԽՆԵՐ	**ԱԶԳԱՅԻՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ**
Թիրախ 12. Ապահովել կառավարման, քաղաքական իրավունքների և պատասխանատվության, ինչպես նաև մարդու իրավունքների պաշտպանության այնպիսի մակարդակ, որը կնպաստի Հայաստանի կայուն զարգացմանը:	1. Մամուլի ազատության համաթիվ, բացարձակ մեծություն 2. Ձայնի իրավունք և հաշվետվողականություն, կառավարման միավորներ 3. Քաղաքական կայունություն, կառավարման միավորներ 4. Կառավարության արդյունավետություն, կառավարման միավորներ 5. Կարգավորման որակ, կառավարման միավորներ 6. Օրենքի գերակայության համաթիվ, կառավարման միավորներ 7. Կոռուպցիայի հսկողություն, կառավարման միավորներ 8. Կոռուպցիայի ընկալման համաթիվ, վարկանիշ 9. Հարկային եկամուտները ՀՆԱ-ի նկատմամբ,%
Թիրախ 13. Համագործակցելով մասնավոր հատվածի հետ՝ մինչև 2015 թվականը մատչելի դարձնել տեխնոլոգիական նորարարությունների օգուտները, մասնավորապես՝ տեղեկատվության և հաղորդակցման ոլորտներում	1. Հեռախոսային գծեր և բջջային կապի բաժանորդներ 100 բնակչի հաշվով 2. Անձնական համակարգիչներից օգտվողների թիվը 100 բնակչի հաշվով 3. Համացանցից օգտվողների թիվը 100 բնակչի հաշվով

ՀԶՆ 8. Միավորների հաշվարկ

ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ	2000	2004	2008	2013	2014	2015 թիրախ	
ԹԻՐԱԽ 12. ԱՊԱՀՈՎԵԼ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԱՅՆՊԻՍԻ ՄԱԿԱՐԴԱԿ, ՈՐԸ ԿՆՊԱՍՏԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՄԱՆԸ							
1. Մամուլի ազատության համաթիվ, բացարձակ մեծություն		64	66	61	62	<+30	Չկատարված թիրախ
2. Ձայնի իրավունք և հաշվետվողականություն, կառավարման միավորներ	-0,41	-0,57	-0,86	-0,60	-0,55	>+0,83	Չկատարված թիրախ
3. Քաղաքական կայունություն, կառավարման միավորներ	-0,80	-0,12	-0,02	+0,07	-0,21	>+0,43	Չկատարված թիրախ
4. Կառավարության արդյունավետություն, կառավարման միավորներ	-0,57	-0,14	-0,16	+0,07	-0,17	>+0,37	Չկատարված թիրախ
5. Կարգավորման որակ, կառավարման միավորներ	-0,13	+0,13	+0,31	+0,23	0,22	>+0,62	Չկատարված թիրախ
6. Օրենքի գերակայության համաթիվ, կառավարման միավորներ	-0,46	-0,45	-0,29	-0,31	-0,32	>+0,11	Չկատարված թիրախ

ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ	2000	2004	2008	2013	2014	2015 թիրախ	
7. Կոռուպցիայի հսկողություն, կառավարման միավորներ	-0,65	-0,61	-0,63	-0,47	-0,44	>+0,12	Չկատարված թիրախ
8. Կոռուպցիայի ընկալման համաթիվ, ԿԸՀ վարկանիշ*	2,5	3,1	2,9	3,6	3,7	>5	Չկատարված թիրախ
9. Հարկային եկամուտները ՀՆԱ-ի նկատմամբ,%	14,8	14,0	20,3	21,9	21,9	>22,5	Լավ առաջընթաց
ԹԻՐԱԽ 13. ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑԵԼՈՎ ՄԱՍՆԱՎՈՐ ՀԱՏՎԱԾԻ ՀԵՏ՝ ՄԻՆՉԵՎ 2015 ԹՎԱԿԱՆԸ ՄԱՏՉԵԼԻ ԴԱՐՁՆԵԼ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ՆՈՐԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕԳՈՒՏՆԵՐԸ, ՄԱՍՆԱՎՈՐԱՊԵՍ՝ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՂՈՐԴԱԿՑՄԱՆ ՈԼՈՐՏՆԵՐՈՒՄ							
1. Բջջային կապի ակտիվ բաժանորդներ 100 բնակչի հաշվով**	0,5	6,3	73,2	110,7	114,8	>80	Կատարված թիրախ
2. Անձնական համակարգիչներից օգտվողների թիվը 100 բնակչի հաշվով	0,2	3,9	10,2	49		>50	Լավ առաջընթաց
3. Համացանցից օգտվող բաժանորդների թիվը 100 բնակչի հաշվով	0,2	0,6	20,6	67,4	69,2	>40	Կատարված թիրախ

Աղբյուր՝ (1) Համաշխարհային բանկ, համաշխարհային կառավարման ցուցանիշներ[67]
(2) ՀՀ ԱՎԾ-ի տվյալների շրջանարան,[68] ՀՀ ԱՎԾ տարեկան զեկույց սոցիալական և տնտեսական իրավիճակի վերաբերյալ, (3) ՀՄՄ տվյալների շրջանարան[69], (4) «Ֆրիդոմ Հաուս» կազմակերպության «Մամուլի ազատություն» վարկանիշային համակարգ[70]
**Մինչև 2009 թվականը ՀԸՀ միավորները ներկայացված են եղել 0-ից 10 սանդղակով: 2009 թվականից ի վեր «Թրանսպարենսի ինթերնեյշնլ» կազմակերպությունը վերանայել է միավորների իր սանդղակը՝ այն 0-ից մինչև 100 դարձնելով: 2013 թվականին Հայաստանի ԿԸՀ-ն կազմել է 36 միավոր: Համատեղելիության նպատակներով և համեմատելի թիվ ստանալու նպատակով՝ այս թիվը բաժանվել է 10-ի:*
***ՀՄՄ-ի տվյալների շրջանարանում այս ցուցանիշների արժեքները տարբեր են:*

Համատեքստ

Վերջին տասնամյակում ՀՀ կառավարությունը նախաձեռնել է համալիր բարեփոխումներ Հայաստանում ժողովրդավարական ինստիտուտների ամրապնդման և հանրային կառավարման որակի ու արդյունավետության բարձրացման ուղղությամբ: Որոշ խոշոր նախաձեռնություններից են.

- էլեկտրոնային կառավարման համակարգի ստեղծումը, որը հասանելի է բոլոր կառավարական կայքէջերից՝ www.e-gov.am հասցեով: Այն ապահովում է կառավարման բոլոր հայեցակետերի թափանցիկությունը, ինչպես նաև առանցքային դեր է խաղում հանրային կառավարման բարելավման և կոռուպցիոն ռիսկերի նվազեցման առումով:
- Ինտեգրված սոցիալական ծառայությունների համակարգի ներդրմամբ 2010 թվականին մեկնարկեց բնակչությանը ծառայությունների մատուցումը «մեկ պատուհան» սկզբունքով:
- «Գնումների մասին» ՀՀ օրենքի բարեփոխումները, որոնք կոչված են ապակենտրոնացնել գնումների համակարգը, նվազեցնել գնումների գործընթացում ներգրավված մասնակիցների շահերի բախումը, բարելավել գնումների ծառայությունը գնումների գծով մասնագետների ներդրման միջոցով:

67 http://info.worldbank.org/governance/wgi/index.aspx#reports
68 http://www.armstat.am/am/?nid=180
69 http://www.itu.int/en/ITU-D/Statistics/Documents/publications/mis2014/MIS2014_without_Annex_4.pdf
70 https://freedomhouse.org/report-types/freedom-press ՀԶՆ-ների ներքո սահմանված թիրախների համար Հայաստանն օգտագործել է «Ֆրիդոմ Հաուս» կազմակերպության վարկանիշային համակարգը: Գոյություն ունի մամուլի ազատության գնահատման մեկ այլ միջազգային վարկանիշային համակարգ, որը կարելի է գտնել այստեղ՝ http://en.rsf.org/spip.php?page=classement&id_rubrique=297:

- Հանրային ծառայության համակարգի՝ «Հանրային ծառայության մասին» օրենքի բարեփոխումները, որոնք կոչված են ամրագրել քաղաքացիական ծառայողների և բարձրաստիճան պաշտոնյաների համար էթիկայի կանոնները, սեփականության և եկամուտների հայտարարագրման պահանջները, ինչպես նաև բարձրաստիճան պաշտոնատար անձանց համար Էթիկայի հանձնաժողովի ստեղծումը:
- Հարկային բարեփոխումներ, օրինակ՝ էլեկտրոնային հարկային ծառայությունների ներդնումը, ռիսկերի կառավարման և ստուգման ենթակա հարկատուների ընտրության ավտոմատացված համակարգի ներդրումը: 2014 թվականից ներդրվել է անհատականացված հաշվառման համակարգը, որը թույլ է տալիս հարկատուներին հետևել իրենց հարկերին, ինչպես նաև իրենց անձնական կենսաթոշակային հաշիվներին գոյացած կուտակումներին:
- 2010 թվականից ի վեր զգալիորեն բարելավվել է իրավաբանական անձանց գրանցման գործընթացը:
- 2005 թվականին սոցիալական ապահովության համարների ներմուծումը, իսկ 2012 թվականից դրանց կատարելագործումը և վերափոխումը հանրային նույնականացման համարների բարելավեց կապը տարբեր պետական վարչական տվյալների շտեմարանների և բնակչությանը մատուցվող ծառայությունների հսկողության միջև:
- Անձնագրային բաժիններում տեղադրված էլեկտրոնային վճարման տերմինալներ, որոնք նախատեսված են անձնագրերի հետ կապված պետական տուրքերի, վարչական տույժերի և այլ վճարումների մուծման համար:
- Հակակոռուպցիոն ռազմավարության ընդունումը 2003 թվականին, ինչպես նաև դրա հետագա վերանայումը (մի շարք հիմնավորող փաստաթղթերի հետ միասին) 2009-ին և 2014-ին,[71] թեպետ դրա արդյունավետությունը հարցականի տակ է առնվել քաղաքացիական հասարակության և լայն հանրության կողմից: Կառավարության ջանքերը խրախուսելու նպատակով՝ 2015 թվականի փետրվարին ստեղծվեց Կոռուպցիայի դեմ պայքարի խորհուրդը և Փորձագիտական հանձնախումբը, որը 2015 թվականի հուլիսին կայացած իր առաջին ժողովին հաստատեց նոր Հակակոռուպցիոն ռազմավարությունը: 2015 թվականի սեպտեմբերին հիմնվեց աշխատանքային ֆորում՝ Կառավարության, քաղաքացիական հասարակության և միջազգային կազմակերպությունների միջև երկխոսությունն ու համագործակցությունը դյուրացնելու նպատակով:

Թիրախ 12. Ապահովել կառավարման, քաղաքական իրավունքների և պատասխանատվության, ինչպես նաև մարդու իրավունքների պաշտպանության այնպիսի մակարդակ, որը կնպաստի Հայաստանի կայուն զարգացմանը

Վերջին տասնամյակում իրականացված ինստիտուցիոնալ բարեփոխումների լայն շրջանակը թույլ տվեց բարելավել Հայաստանի ցուցանիշները: Ասվածն ընդգրկում է առաջընթաց մամուլի ազատության, կառավարության արդյունավետության ու հաշվետվողականության, կարգավորման որակի ու օրենքի գերակայության, ինչպես նաև կոռուպցիայի վերահսկողության ու ընկալման գծով:

Այդուհանդերձ, այս ոլորտում արձանագրվել է դանդաղ առաջընթաց բոլոր ցուցանիշների գծով, իսկ Հայաստանը չի կարողացել կատարել իր թիրախները և, ամենայն հավանականությամբ, չի կարողանա կատարել դրանք մինչև 2015 թվականի ավարտը:

71 Ընդունվեց Հանրային կառավարման համակարգում կոռուպցիայի դեմ պայքարի հայեցակարգը (ՀՀ կառավարության նիստի թիվ 14 արձանագրային որոշում), իսկ 2014 թվականի դեկտեմբերին Կոռուպցիայի դեմ պետությունների խմբի 66-րդ պլենար նիստին ընդունվեց Հայաստանի վերաբերյալ երկրորդ համապատասխանության զեկույցը: Կոռուպցիայի դեմ պետությունների խումբը ողջունում է Հայաստանի կողմից իրականացված զգալի բարեփոխումները, որոնք ուղղված են Գնահատման երրորդ փուլի «Քրեականացում» և «Կուսակցությունների ֆինանսավորման թափանցիկություն» կետերի հետ կապված բոլոր տասնինը հանձնարարականների պատշաճ կատարմանը:

Թիրախ 13. Համագործակցելով մասնավոր հատվածի հետ՝ մինչև 2015 թվականը մատչելի դարձնել տեխնոլոգիական նորարարությունների օգուտները, մասնավորապես՝ տեղեկատվության և հաղորդակցման ոլորտներում

Տեղեկատվության և հաղորդակցման տեխնոլոգիաները լայն տարածում են գտել Հայաստանում և հասանելի են երկրի բնակչությանը: 2013 թվականին համակարգիչներից և համացանցից օգտվողների թիվը 100 բնակչի հաշվով աճեց համապատասխանաբար մոտ 50 և 67%-ով: 100 բնակչի հաշվով գրանցվել է 132 բջջային կապի բաժանորդ: Հայաստանը կատարել է համապատասխան ՀԶՆ-ի ներքո սահմանված այս թիրախը:

ՏՀՏ օգտագործում, 100 բնակչի հաշվով



Գծապատկեր 33. Աղբյուրներ՝ ՀՀ ԱՎԾ ՀԶՆ տվյալներ, ՀՄՄ տվյալների շտեմարան

Մարտահրավերներ

Տնտեսական աճի համար իրապես ազատ և արդար միջավայր ստեղծելու մարտահրավեր: Վերջին երկու տասնամյակներում Հայաստանը զգալի առաջընթաց է արձանագրվել 8-րդ ՀԶՆ-ի ներքո սահմանված թիրախների գծով իր այնպիսի ցուցանիշները բարելավելու ուղղությամբ, ինչպիսիք են՝ պատշաճ կառավարումը, ժողովրդավարական ինստիտուտների զարգացումը և խոսքի ազատությունը:

Այդուհանդերձ, այս ցուցանիշները կմնան Հայաստանի առջև ծառացած մարտահրավերներից մեկը միջնաժամկետ հեռանկարում: Մինչ օրս արձանագրած առաջընթացը չի կարելի բավարար համարել առողջ քաղաքացիական հասարակության զարգացման և արդյունավետ կերպով գործող շուկայական տնտեսության համար:

ՀԶՆ-ների իրականացման գործընթացը ցույց տվեց, որ սոցիալական, բնապահպանական և այլ խնդիրներին կայուն լուծում տալու կարևոր նախապայման է ուժեղ, արդյունավետ գործող և դիմակայուն տնտեսության առկայությունը:

ՀՀ տնտեսությունը կարող է արդյունավետ գործել և կայուն աճ ապահովել, եթե իրականում ստեղծվի բոլորի համար հավասար հնարավորություններ նախատեսող իսկապես արդարացի միջավայր:

4. ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ԱՌԱՋՆԱՀԵՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄ

Համաշխարհային ԿԶՆ-ներ

2015 թվականի սեպտեմբերի 25-ից 27-ը Նյու Յորքում կայացած ՄԱԿ-ի Կայուն զարգացման գագաթնաժողովի նիստին ընդունված՝ պետության և Կառավարության ղեկավարների, ինչպես նաև բարձրաստիճան ներկայացուցիչների հռչակագրում ընդգրկված ԿԶՆ-ներն են՝[72]

1. Ամենուրեք վերացնել աղքատությունը՝ իր բոլոր ձևերով ու դրսևորումներով.
2. Վերացնել սովը, հասնել պարենային ապահովության ու բարելավված սնուցման, խթանել գյուղատնտեսության կայուն զարգացումը.
3. Ապահովել առողջ կյանք և խթանել բարեկեցություն բոլորի համար՝ անկախ տարիքից.
4. Ապահովել ներառական ու որակյալ կրթություն բոլորի համար և խթանել ողջ կյանքի ընթացքում ուսման հնարավորություններ.
5. Հասնել գենդերային հավասարության և զորացնել բոլոր կանանց ու աղջիկներին.
6. Ապահովել բոլորի համար ջրի ու սանիտարական պայմանների հասանելիություն.
7. Ապահովել բոլորի համար մատչելի, հուսալի, կայուն և ժամանակակից էներգիայի հասանելիություն.
8. Խթանել համապարփակ ու կայուն տնտեսական աճ, զբաղվածություն ու արժանապատիվ աշխատանք բոլորի համար.
9. Ստեղծել դիմակայուն ենթակառուցվածքներ, աջակցել կայուն արդյունաբերության զարգացմանը և խթանել նորարարությունը.
10. Կրճատել անհավասարությունը երկրների ներսում և դրանց միջև.
11. Քաղաքները դարձնել ներառական, դիմակայուն, անվտանգ և կայուն.
12. Ապահովել սպառման և արտադրության կայուն մոդելներ.
13. Ձեռնարկել անհապաղ գործողություններ՝ պայքարելու կլիմայի փոփոխության և դրա ազդեցությունների դեմ (հաշվի առնելով ՄԱԿՓՇԿ ֆորումին ձեռք բերված համաձայնությունները).
14. Ապահովել օվկիանոսների, ծովերի ու ջրային պաշարների պահպանությունը և կայուն օգտագործումը.
15. Ապահովել անտառների կայուն կառավարումը, պայքարել անապատացման դեմ, դադարեցնել և շրջադարձել հողերի վատթարացումը, կասեցնել կենսաբազմազանության կորուստը.
16. Խթանել արդար, խաղաղ և ներառական հասարակությունների կառուցումը, ապահովել արդարադատության հասանելիությունը բոլորի համար և կառուցել արդյունավետ, հաշվետու և ներառական հաստատություններ բոլոր մակարդակներում.
17. Հզորացնել իրագործման միջոցները և ակտիվացնել գլոբալ գործընկերությունը՝ հանուն կայուն զարգացման:

Ինչպես նշված է ԿԶՆ-ներին վերաբերյալ Եզրափակիչ արդյունքների փաստաթղթում, բոլոր երկրները «միասին աշխատելու են այս օրակարգն իրենց երկրներում, ինչպես նաև տարածաշրջանային և համաշխարհային մակարդակներով իրագործելու ուղղությամբ՝ հաշվի առնելով ազգային տարբեր իրողությունները, կարողությունները և զարգացման մակարդակը, ինչպես նաև հարգելով ազգային քաղա-

72 «Վերափոխելով աշխարհը. 2030թ. օրակարգ կայուն զարգացման համար», հռչակագիր երկրների և կառավարությունների ղեկավարների կողմից, որն ընդունվել է Նյու Յորքում ՄԱԿ-ի գլխավոր գրասենյակում, 2015թ. սեպտեմբերի 25-27-ին:

քականություններն ու առաջնահերթությունները: Մենք հարգելու ենք շարունակական, ներառական և կայուն տնտեսական աճի ազգային քաղաքականությունը, մասնավորապես՝ զարգացող պետությունների մասով, միաժամանակ հետևելով համապատասխան միջազգային կանոններին և պարտավորություններին»:

ԿԶՆ-ների ազգայնացման գործընթացը Հայաստանում

Համաշխարհային զարգացման օրակարգի ձևավորման ճանապարհին Հայաստանն առաջին 50 պետություններից էր, որոնք խորհրդակցություններ անցկացրին «Հետ-2015» զարգացման օրակարգի շուրջ: Համագործակցելով ՀՀ կառավարության հետ՝ ՄԱԿ-ի հայաստանյան թիմը ձևավորեց «Հետ-2015» հարցերով զբաղվող հանձնախումբ, որի համանախագահներ նշանակվեցին ՀՀ տարածքային կառավարման առաջին փոխնախարարը և ՄԱԲՀ-ի ներկայացուցչի տեղակալը, ինչպես նաև նախաձեռնեց մի շարք հանրային ժողովներ, որոնց շրջանակներում հավաքվեցին հասարակության տարբեր հատվածներ ներկայացնող մարդիկ՝ առաջիկա տասնհինգ տարիների համար ազգային զարգացման առաջնահերթությունները քննարկելու նպատակով:

Նշված հանրային ժողովները խթանեցին երկխոսությունը մասնակիցների միջև՝ ապահովելով, որ ոչ մի տեսանկյուն կամ կարծիք չմնա առանց ուշադրության: Կազմակերպված համայնքային խորհրդակցություններին մասնակցեցին ավելի քան 3.000 քաղաքացիներ, իսկ ապագա զարգացման օրակարգի վերաբերյալ փոխանակվեցին ավելի քան 2.000 գաղափարներ և առաջարկություններ: Ազգային զարգացման առաջնահերթություններին նվիրված համազգային քննարկումների արդյունքներն արտացոլվեցին համաշխարհային զարգացման օրակարգի մշակման աշխատանքներում:[73]

Նման մասնակցային գործընթացի միջոցով ի հայտ բերված մարտահրավերներից շատերը համապատասխանում են ՀՀ կառավարության 2014-2025 թվականներին հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագրին, որն ընդունվել է 2014 թվականի մարտի 27-ին:

Կայուն զարգացման ազգային խորհուրդը, համագործակցելով միջազգային և ազգային կազմակերպությունների հետ, պատրաստել է «Ռիո+20» Ազգային գնահատման զեկույցը (2012 թվական) և «Ռիո+20» Ռազմավարական ծրագիրը (2015 թվական): Այս վերջին փաստաթուղթը ներկայումս քննարկվում է ՀՀ կառավարության կողմից: «Ռիո+20» Ռազմավարական ծրագրում առաջարկվում են հայեցակարգեր և գործողությունների ծրագրեր կայուն զարգացման համար էական նշանակություն ունեցող 11 հիմնական ուղղություններով, այդ թվում՝ էներգաարդյունավետության և վերականգնվող էներգիայի աղբյուրներ, հանքարդյունաբերություն, «կանաչ» տնտեսություն, «կանաչ» քաղաքներ, կոշտ կենցաղային թափոնների կառավարում և կրթություն:

Կարևոր է նշել, որ սահմանված դժվարությունները, զարգացման հեռանկարները և ոլորտները, ինչպես նաև երկրի առջև ծառացած մարտահրավերները, որոնք բարձրաձայնվել և համաձայնեցվել են հանրային ժողովների ընթացքում, շատ առումներով համապատասխանում են այն առաջնահերթություններին, որոնք ընդգրկված են ՀՀ կառավարության 2014-2025 թվականների հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագրում:

Առաջնահերթությունների սահմանման մոտեցումները և սկզբունքները

Սույն բաժնում ներկայացված են Հայաստանում ԿԶՆ-ների առաջնահերթությունների սահմանման հիմնական մոտեցումներն ու սկզբունքները, որոնց հիման վրա սույն զեկույցում հատկորոշվել են ԿԶՆ-ների առաջնահերթ ուղղությունները:

1. Անդրադառնալ հիմնախնդիրների բուն պատճառներին

Հրատապ սոցիալական, բնապահպանական և այլ հիմնախնդիրներին անդրադառնալիս խիստ կարևոր է ոչ միայն հաղթահարել դրանց հետևանքները, այլև վերացնել դրանց բուն պատճառները: Նման մոտեցման պարագայում շեշտը դրվում է խնդիրների կանխարգելման և իրականացված բարեփոխումների արդյունքների կայունության ապահովման վրա:

73 «Տեղայնացնելով «Հետ-2015»-ի օրակարգը - Հայաստան», ՄԱԶԾ, ՄԶՄԿ և ՀՀ տարածքային կառավարման նախարարություն, 2014թ.

Օրինակ՝ Հայաստանում ՀԶՆ-ների իրականացման գործընթացի շրջանակներում ֆինանսավորման առկայությունն էական նշանակություն է ունեցել աղքատության հաղթահարման, ինչպես նաև մոր և մանկան առողջության հետ կապված խնդիրների լուծման համար: Այդուհանդերձ, այնպիսի մտահոգիչ խնդիրների լուծումները, ինչպիսիք են՝ երեխաների թերաճը և թերսնումը կամ երեխաների պատվաստումների ժամանակացույցի խախտումը, ոչ միայն կախված են ֆինանսավորման չափից, այլև մեծապես պայմանավորված են ծնողների և լայն հանրության կրթության ու գիտելիքների մակարդակով: Նույնը կարելի է ասել գենդերային հիմնախնդիրների մասին, որոնց լուծումը մեծապես պայմանավորված է կրթության և իրազեկվածության մակարդակով, ինչպես նաև բնակչության շրջանում ընդունված պատկերացումներով: Այսպիսով, խնդիրներին հետևողական և կայուն լուծումներ տալու համար խիստ կարևոր է բարելավել գիտելիքների և կրթության մակարդակը բնակչության շրջանում, ինչպես նաև զարգացնել մարդկային կապիտալը:

2. Բացահայտել և հասցեագրել առանցքային խոչընդոտները

Երկրի առջև դրված սոցիալական և տնտեսական զարգացման նպատակներն իրականացնելու կարողությունը սահմանափակվում է առանցքային խոչընդոտներով: Երկրի կարողությունների բարձրացման և երկրի առջև դրված նպատակների առաջխաղացման համար խիստ կարևոր է ի հայտ բերել առանցքային խոչընդոտները և հաղթահարել դրանք: Ելնելով ՀԶՆ-ների գծով արձանագրված արդյունքներից՝ կարելի է ասել, որ Հայաստանի առջև կանգնած առանցքային խոչընդոտներից են.

- Տնտեսական և սոցիալական ծրագրերի իրականացման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների առկայությունը: Ինչպես արդեն նշել ենք, սոցիալական բնույթի բոլոր, այդ թվում՝ աղքատության կրճատման, կրթության, առողջապահության, գենդերային հավասարության ոլորտներում ծրագրերի իրականացման համար բավարար ֆինանսավորման ապահովումն առանցքային գործոն է եղել ծրագրերի արդյունավետ կենսագործման և ձեռք բերված արդյունքների պահպանման համար: Այս իրողությունը եղել է և մշտապես մարտահրավեր կլինի ցանկացած երկրի համար:
- Կառավարության արդյունավետությունը՝ տնտեսական և սոցիալական քաղաքականությունների և ծրագրերի մշակման ու իրականացման, հարկերի հավաքագրման ու տնօրինման, իրատեսական թիրախների որոշման, առաջնահերթությունների արդյունավետ սահմանման և միջոցների տեղաբաշխման մասով:
- Տնտեսական ու սոցիալական գաղափարների և նախաձեռնությունների կենսագործման համար անհրաժեշտ մարդկային կապիտալի կարողությունները, ինչպես նաև գիտելիքներն ու հմտությունները բնակչության շրջանում:



Ինչպես երևում է վերոնշյալ գծապատկերից, միջոցների գոյացման համար անհրաժեշտ է հզոր տնտեսություն: Տնտեսության արդյունավետ աշխատանքի և աճի համար պահանջվում է՝ գործարար և սոցիալական առողջ միջավայր, բիզնեսի ձևավորման և աճի ճիշտ խթաններ, ինչպես նաև նորարար և բարձր որակավորում ունեցող մարդկային կապիտալ: Իսկ լավ կառավարումն անհրաժեշտ է առողջ գործարար և սոցիալական միջավայր ապահովելու համար:

3. Դասեր քաղել ՀԶՆ-ների իրականացման գործընթացից, ինչպես նաև ապահովել ՀԶՆ-ների հետևողականությունն ու շարունակականությունը

Որոշ ՀԶՆ-ներ դեռևս մնացել են անկատար: Հետևողականության և շարունակականության ապահովման համար կարևոր է չկորցնել կապը ՀԶՆ-ների հետ:

Բացի այդ, ՀԶՆ-ների ներքո արձանագրվող ցուցանիշների միջոցով չհաջողվեց լիովին արտացոլել բոլոր սոցիալական և բնապահպանական ռիսկերը, նաև իմաստալից կերպով արտացոլել տնտեսական աճի, սոցիալական ապահովության, զարգացման և շրջակա միջավայրի կայուն պահպանման փոխազդեցությունը: Կան մարտահրավերներ, որոնց հարկ է անդրադարձ կատարել 2015-2030 թվականների ԿԶՆ-ների ընդունման և տեղական պայմաններին դրանց համապատասխանեցման շրջանակներում:

Արդյունավետ և միաժամանակ իրատեսական ցուցանիշների սահմանումն էական նշանակություն ունի ՀԶՆ-ների իրականացման համար: Որոշ դեպքերում Հայաստանի ՀԶՆ-ները չեն իրականացվել՝ չնայած այն հանգամանքին, որ տվյալ ոլորտում, ընդհանուր առմամբ, արձանագրվել են լավ ցուցանիշներ: Ասվածը հատկապես վերաբերում է կրթության և շրջակա միջավայրի պաշտպանությանն առնչվող ցուցանիշներին:

4. Տնտեսական, սոցիալական և բնապահպանական նվաճումների կայուն պահպանումը

Հայաստանում տնտեսական զարգացումն ու պայքարն աղքատության դեմ, ինչպես նաև կրթության, առողջապահության և այլ սոցիալական ոլորտներում իրականացվող ծրագրերը մեծապես տուժել են արտաքին ցնցումներից: Կառավարության առջև ծառացած միջնաժամկետ մարտահրավերն է թեթևացնել արտաքին ցնցումների՝ համաշխարհային տնտեսական ճգնաժամի և Ռուսաստանում տնտեսական անկման տնտեսական և սոցիալական հետևանքները՝ միաժամանակ շարունակելով քաղաքական և ինստիտուցիոնալ բարեփոխումները, որոնք անհրաժեշտ են վերականգնման և երկարաժամկետ զարգացման համար: Այս իմաստով խիստ կարևոր է բարձրացնել տնտեսության դիմակայունությունն արտաքին ցնցումների նկատմամբ և մշակել այնպիսի մարդկային կապիտալ, որն ընդունակ կլինի ստեղծել զարգացման նոր հնարավորություններ:

5. Քաղաքացիական հասարակության հետ երկխոսության միջոցով ի հայտ բերված մարտահրավերների ու առաջնահերթությունների փոխազդեցություն

Մասնակցային գործընթացն անհրաժեշտ է, որպեսզի առաջնահերթությունների սահմանման և թիրախների նշանակման գործընթացում արտացոլվեն շահառուների կարծիքներն ու շահերը: Կարևոր է, որ ներկայիս գործընթացը շարունակվի: Մինչ այժմ հանրային ժողովների միջոցով սահմանվել են հետևյալ առաջնահերթ ոլորտները՝

1. աճ և զբաղվածություն,
2. անհավասարության հաղթահարում,
3. պարենային անվտանգություն,
4. շրջակա միջավայրի պաշտպանություն հանուն կայուն զարգացման,
5. պատշաճ կառավարում,
6. առողջապահություն:

6. Փոխազդեցությունը ռազմավարական ծրագրում ամրագրված կառավարության առաջնահերթությունների հետ

Հայաստանի Հանրապետության 2014-2025 թվականների հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագրում ամրագրված են չորս ազգային առաջնահերթություններ են՝

- զբաղվածության աճ,
- մարդկային կապիտալի զարգացում,
- սոցիալական պաշտպանության համակարգի բարելավում,
- հանրային վարչարարության և կառավարման ինստիտուցիոնալ արդիականացում:

Շրջակա միջավայրի կայուն պահպանումն ուղղակիորեն չի մեջբերվում որպես առաջնահերթություն, սակայն այս խնդիրն առնչություն ունի բոլոր ոլորտների հետ և կարող է դառնալ նշված ազգային առաջնահերթությունների անբաժանելի մասը: Օրինակ՝ զբաղվածության աճ կարելի է ապահովել «կանաչ» քաղաքականությունների ընդունման միջոցով:

Նախնական առաջարկություններ առաջնահերթությունների գծով

Ելնելով հայաստանյան իրականությունից, ինչպես նաև հաշվի առնելով շահառուների հետ անցկացված խորհրդակցությունները՝ սահմանվել են հետևյալ առաջնահերթությունները, որոնք համապատասխանեցվել են 17 ԿԶՆ-ներին: Դրանք սահմանվել են վերը քննարկված մոտեցումների ու սկզբունքների հիման վրա և խմբավորված են վերը շարադրված տրամաբանության շրջանակներում:

1. Աճող տնտեսության ապահովում

ՀԶՆ-ների իրականացման գործընթացը ցույց է տվել, որ սոցիալական, բնապահպանական և այլ խնդիրներին կայուն լուծում տալու կարևոր նախապայման է հանդիսանում ուժեղ, արդյունավետ գործող և դիմակայուն տնտեսության առկայությունը:

Տնտեսական աճի ապահովման կարևոր գործոն է Կառավարության՝ գործարար և ներդրումային հավասար հնարավորություններ ընձեռող իսկապես արդար և բարեխիղճ միջավայր ստեղծելու կարողությունը: Բարեխիղճ մրցակցության, ինչպես նաև նպաստավոր գործարար և ներդրումային միջավայրի ապահովումն առաջնահերթ է տնտեսական գործունեության և արտադրողականության աճի խթանման համար:

Նշված առաջնահերթության կապը սահմանված 17 ԿԶՆ-ների հետ հետևյալն է.

- Այն ուղղակիորեն կապված է 8-րդ ԿԶՆ-ի հետ, այն է՝ «Խթանել համապարփակ ու կայուն տնտեսական աճ, զբաղվածություն ու արժանապատիվ աշխատանք բոլորի համար», ինչպես նաև 9-րդ ԿԶՆ-ի հետ, այն է՝ «Ստեղծել դիմակայուն ենթակառուցվածքներ, աջակցել կայուն արդյունաբերության զարգացմանը և խթանել նորարարությունը»:
- Այն անուղղակիորեն կապված է 10-րդ ԿԶՆ-ի հետ, այն է՝ «Կրճատել անհավասարությունը երկրների ներսում և դրանց միջև», հատկապես բոլորի համար սոցիալական, տնտեսական և քաղաքական ներառման հավասար հնարավորություններ ապահովելու առումով:
- Այս առաջնահերթությունը նպաստելու է աշխատատեղերի ստեղծմանը՝ օգնելով բնակչությանը եկամուտ վաստակել և դրանով իսկ պայքարել աղքատության դեմ (1-ին ԿԶՆ և 2-րդ ԿԶՆ), ինչպես նաև նպաստելով միջոցների գոյացմանը բոլոր այլ ԿԶՆ-ների իրականացման համար: Նշված առաջնահերթությունը կարևոր է լինելու աշխատանքի պատշաճ վարձատրություն ապահովելու իմաստով և նպաստելու է աշխատող աղքատների երևույթի վերացմանը:

2. Մարդկային կապիտալի զարգացում

Կրթության ոլորտն անդրադառնում է մնացած բոլոր ոլորտների վրա և դրական բազմապատկիչ ազդեցություն է գործում զարգացման բոլոր ոլորտներում արձանագրվող առաջընթացի վրա:

Նշված առաջնահերթության կապը սահմանված 17 ԿԶՆ-ների հետ հետևյալն է.

- այն ուղղակիորեն կապված է 4-րդ ԿԶՆ-ի հետ, այն է՝ «Ապահովել ներառական ու որակյալ կրթություն բոլորի համար և խթանել ողջ կյանքի ընթացքում ուսման հնարավորություններ»:
- Այս հարցը տարածվում է բոլոր ոլորտների վրա և անուղղակիորեն նպաստում է այլ ԿԶՆ-ների իրականացմանը, այդ թվում՝ առողջապահության և կրթության, քաղաքաշինության և խաղաղ կյանքի, կայուն զարգացման և բնապահպանության ոլորտներում:

Կրթական համակարգը չպետք է մեկուսացվի իրական կյանքից, ինչպես նաև տնտեսության և հասարակության իրական մարտահրավերներից: Հարկավոր է, որ այն դինամիկ կերպով և ժամանակին արտացոլի երկրի սոցիալական, տնտեսական և քաղաքական կարիքները:

Կրթության և գործարար օղակների միջև պատշաճ կապերը պետք է հստակ կարգավորվեն և դառնան պարտադիր՝ նպաստելով երիտասարդների զբաղվածությանը: Հարկ է հատուկ շեշտադրել մասնագիտական ուսուցման և աշխատանքային շուկայի կարիքների միջև կապ հաստատելու անհրաժեշտությունը՝ ապահովելով ավելի մեծ ճկունություն երկրում պահանջվող մասնագետների պատրաստման հարցում:

3. Կառավարման բարելավում (կառավարման համակարգի ինստիտուցիոնալ արդիականացում)

Լավ կառավարումը բոլոր ոլորտների վրա տարածվող գործոն է, որն անհրաժեշտ է տնտեսական ու սոցիալական քաղաքականությունների և ծրագրերի մշակման ու իրականացման, հարկերի հավաքագրման ու տնօրինման, իրատեսական թիրախների նշանակման, առաջնահերթությունների արդյունավետ սահմանման, ինչպես նաև սոցիալական և տնտեսական ծրագրերի գծով միջոցների տեղաբաշխման համար:

Այս առաջնահերթությունն ուղղակիորեն կապված է 8-րդ ԿԶՆ-ի հետ, այն է՝ «Խթանել համապարփակ ու կայուն տնտեսական աճ, զբաղվածություն ու արժանապատիվ աշխատանք բոլորի համար»

Մասնավորապես՝ ուշադրության արժանի ոլորտներից են՝

- երկրում իսկապես բաց գործարար և ներդրումային միջավայր ստեղծելու կարողությունը, որը կնպաստի բիզնեսի ձևավորմանն ու աճին: Խիստ կարևոր է, որ Կառավարությունն արդյունավետ կերպով խթանի զարգացման ուղղվածություն ունեցող այն քաղաքականությունները, որոնք նպաստում են արգասավոր գործունեությանը, պատշաճ աշխատատեղերի ստեղծմանը, ձեռներեցությանը, ստեղծագործությանն ու նորարարությանը, ինչպես նաև խրախուսում են միկրո, փոքր և միջին ձեռնարկությունների ձևավորումն ու աճը, այդ թվում՝ դրանց համար ֆինանսական ծառայությունների հասանելիության միջոցով.
- կոռուպցիայի նվազեցում.
- կառավարման և կարգավորման արդյունավետություն.
- տեղեկատվության և հաղորդակցման տեխնոլոգիաների օգտագործման հետագա կատարելագործում՝ ՀՀ կառավարության ծրագրերի և ծախսերի մատչելիությունը, արագությունը, թափանցիկությունը և տնօրինումը բարելավելու նպատակով: Լայն հանրության և լրատվամիջոցների համար առկա ծառայությունների, դրանցից օգտվելու չափորոշիչների, ինչպես նաև ծրագրերի արդյունքների մասին տեղեկատվության հասանելիությունն այն հիմնական նախապայմաններից է, որն անհրաժեշտ է ՀՀ կառավարության գերատեսչությունների աշխատանքի բարելավման համար.
- քաղծառայողների կողմից հաճախորդներին մատուցվող ծառայությունների բարելավումը, շահառուների նկատմամբ վերաբերմունքի փոփոխությունը, ինչպես նաև որոշում կայացնողների և շահառուների միջև ուղղակի շփումների նվազեցում նախատեսող դրույթները, որոնք ապացուցել են կոռուպցիայի դեմ պայքարում իրենց արդյունավետությունը.
- ծրագրերի արդյունավետ մշակում և բյուջետավորում. հարկավոր է մշակել քանակական և որակական արդյունավետ ցուցանիշներ՝ Կառավարության միջամտությունների արդյունավետությունն ու նպատակահարմարությունը պարբերաբար վերահսկելու, ինչպես նաև պետության կողմից ֆինանսավորվող ծրագրերի կարևորությունն ըստ ստացված արդյունքների հիմնավորելու նպատակով.
- կարիքների վրա հիմնված թիրախային աջակցություն տրամադրելու կարողությունների կատարելագործում, ինչպես նաև անցում պասիվ սոցիալական աջակցության ծրագրերից աշխատանքային շուկային մասնակցության խթանման:

4. Գենդերային հավասարություն

Գենդերային հավասարությունը պետք է պահպանվի հիմնական առաջնահերթությունների շարքում: Հայաստանի տնտեսության ոլորտում, գործարար աշխարհում, ինչպես նաև քաղաքական կյանքում կանայք ունեն որոշումների կայացման հետ կապված պաշտոններում ներգրավված լինելու սահմանափակ հնարավորություններ: Բացի այդ, կանայք դժվարությունների են բախվում լավ վարձատվող աշխատատեղեր գտնելու հարցում:

Այս առաջնահերթությունն ուղղակիորեն կապված է 5-րդ ԿԶՆ-ի հետ, այն է՝ «Հասնել գենդերային հավասարության և զորացնել բոլոր կանանց ու աղջիկներին»: «Գենդերային հավասարության խթանում և կանանց լիազորությունների ընդլայնում» 3-րդ ՀԶՆ-ի ներքո սահմանված թիրախների ու նպատակների առաջնահերթությունը պահպանվելու է, և դրանք հետագայում ընդլայնվելու են ու լրացվելու են հավելյալ թիրախներով՝ հասարակության տնտեսական, գործարար, ինչպես նաև քաղաքացիական և քաղաքական կյանքում կանանց համար հավասար հնարավորությունների ապահովման նկատառումով:

Ուշադրություն պահանջող հիմնական ոլորտներից են՝

- կանանց և տղամարդկանց համար հավասար աշխատանքային հնարավորությունների ապահովումը, այդ թվում՝ նրանց ներկայությունը որոշումների կայացման հետ կապված պաշտոններում, ինչպես նաև լավ վարձատրվող աշխատատեղերի հասանելիությունը նրանց համար.
- աշակերտների, ուսանողների և լայն հանրության շրջանում իրազեկվածությունը գենդերային և գենդերային հավասարության գաղափարների վերաբերյալ.
- կանանց մասնակցությունը քաղաքական որոշումների կայացման գործընթացում, այդ թվում՝ խորհրդարանում, կենտրոնական և տարածաշրջանային կառավարման մարմիններում, ինչպես նաև տեղական ինքնակառավարման մարմիններում.
- հանրային և մասնավոր ոլորտներում կանանց և աղջիկների դեմ ուղղված բռնության նվազեցում, այդ թվում՝ թրաֆիքինգ, սեռական և այլ բնույթի շահագործման տեսակներ.
- սեռական և վերարտադրողական առողջության համընդհանուր հասանելիության, ինչպես նաև վերարտադրողական իրավունքների իրացման ապահովում.
- վնասարար սովորույթների, օրինակ՝ երեխաների, վաղ կամ բռնի ամուսնությունների վերացում:

5. Առողջապահություն

Առողջ բնակչությունը խիստ կարևոր է հասարակության և տնտեսության կայուն աճ ապահովելու համար: Այս ոլորտն արտացոլված է 3-րդ ԿԶՆ-ում, այն է՝ «Ապահովել առողջ կյանք և խթանել բարեկեցություն բոլորի համար՝ անկախ տարիքից»: «Գենդերային հավասարություն» ոլորտի օրինակով՝ 4-րդ, 5-րդ և 6-րդ ՀԶՆ-ների ներքո սահմանված թիրախներն ու ցուցանիշները պահպանվելու են որպես առաջնահերթություններ և հետագայում ընդլայնվելու և լրացվելու են հավելյալ թիրախներով՝ որակյալ առողջապահության առկայությունն ու բոլորի համար հասանելիությունն ապահովելու նպատակով:

Բոլորի համար որակյալ առողջապահության ապահովման, այն է՝ առողջապահության համակարգում համընդհանուր ընդգրկվածության հասնելու համար կարևոր է անդրադառնալ մի շարք փոխկապակցված և միմյանց լրացնող հայեցակետերի՝ (ա) ապահովել պատշաճ հանրային ֆինանսավորում առողջապահության համակարգի զարգացման համար, (բ) ստեղծել որակյալ և մատչելի առողջապահական համակարգի զարգացմանը նպաստող միջավայր, (գ) լրացուցիչ կերպով մշակել առողջության ապահովագրման համակարգ, որը կոչված կլինի արդյունավետ կերպով ծածկել ֆինանսական ռիսկերը:

- Բարելավել մայրական առողջությունը և նպաստել մայրական մահացության նվազեցմանը,
- Վերջ դնել ՁԻԱՀ-ի, մալարիայի և այլ հիվանդությունների համաճարակին,
- Բարելավել երեխաների առողջությունը,
- Ապահովել սեռական և վերարտադրողական առողջության համընդհանուր հասանելիություն,
- Ապահովել առողջության, ներառյալ՝ ֆինանսական ռիսկերից պաշտպանություն, ինչպես նաև որակյալ առողջապահական ծառայությունների հասանելիություն և անվտանգ, որակյալ և մատչելի առաջին անհրաժեշտության դեղորայքի և պատվաստանյութերի հասանելիություն,
- Զարգացնել ֆինանսավորման աղբյուրները և առողջապահական համակարգի մեխանիզմները,
- Ապահովել առողջապահական համակարգի զարգացումը, որը կարող է տալ արդյունավետ խթաններ ինչպես առողջապահական ծառայություններ մատուցողներին, այնպես էլ բնակչությանը:

6. Կայուն զարգացում (շրջակա միջավայրի ավելի լավ պաշտպանություն)

Կայուն զարգացում ապահովելու համար խիստ կարևոր է հստակ ընկալել այն, որ տնտեսական աճը և առողջ շրջակա միջավայրի պահպանումն իրարից տարբեր և անկախ նպատակներ չեն: Հարկավոր է ոչ միայն համաձայնեցված ջանքերով հատկորոշել տնտեսական և բնապահպանական քաղաքականությունների միջև փոխուժգնացնող (սիներգետիկ) և ընդհանուր կողմերը, այլև որպես առաջնահերթություն մշակել մոնիտորինգի և համապատասխանության հսկողության լուրջ հաստատություններ:

Հիմնվելով ՀԶՆ-ների ներկայիս վերլուծության վրա, Հայաստանի զարգացման ռազմավարական ծրագրի և քաղաքականության փաստաթղթերի ուսումնասիրության[74], ինչպես նաև բազմաթիվ շահառուների

74 ՀՀ հեռանկարային զարգացման ծրագիր, 2014-2025 թթ.

մասնակցությամբ երկրում անցկացված մի շարք քննարկումների արդյունքների վրա[75]՝ առանձնացվել են 17 ՀԶՆ-ների տեղայնացման մի քանի ուղղություններ և մոտեցումներ.

- թեև միշտ տեղ կա օրենսդրության և տեխնիկական նորմերի բարելավման համար, առաջիկա 15 տարիներին Հայաստանի առջև ծառացած մարտահրավերն իր կառավարման համակարգի և ինստիտուցիոնալ կարողությունների ամրապնդումն է:
- Հարկ է հատուկ շեշտ դնել տնտեսության այնպիսի ճյուղերի վրա, ինչպիսիք են հանքարդյունաբերությունը, ձկնաբուծությունը և անտառաբուծությունը՝ իրականացնելով դրանց մոնիտորինգը և պատշաճ կառավարելով դրանց օգտագործումն ու ազդեցությունը բնական պաշարների վրա:
- Բացի այդ, գիտակցվում է «կանաչ» աճի և «կանաչ» տնտեսության սկզբունքները՝ Հայաստանի տնտեսական և զբաղվածության աճի քաղաքականություններում ընդգրկելու անհրաժեշտությունը: «Կանաչ» բնագավառներում առաջարկվող աշխատատեղերը գիտելիքահեն են և բարձր վարձատրվող:
- Հետևելով հաջողված տնտեսությունների բազմաթիվ օրինակներին՝ հարկ է ուշադրություն դարձնել, որ տնտեսական աճը տարանջատվի բնական պաշարների շահագործումից: Այսինքն՝ տնտեսական աճը չհիմնվի բնական պաշարների շահագործման վրա: ՀՆԱ-ի մեկ միավորի հաշվով՝ էներգիայի, ջրի և հողի օգտագործումը պետք է նվազի: Հայաստանը կարող է դաս քաղել աշխարհի տարբեր մասերում արձանագրված հաջող փորձից:
- Շատերը պահանջում են նաև պատշաճ վճարների սահմանում՝ բնական պաշարների օգտագործման և դրա արդյունքում պատճառված վնասի դիմաց: Հայաստանում առաջընթաց է արձանագրվել քաղաքական քննարկման մեջ էկոհամակարգի գնահատման և արժևորման մտածելակերպի ընդգրկման ուղղությամբ: Հարկավոր է համաձայնեցված ջանքեր գործադրել այս իրողությունը համապատասխան վճարների և ֆինանսական մեխանիզմների վերածելու համար:
- Հատուկ պահպանվող տարածքների թվի և ընդհանուր մակերեսի աճի ուղղությամբ արձանագրված հաջողությանը պետք է հաջորդեն պահպանվող տարածքների և դրանց կենսաբանական բազմազանության տնօրինմանն ուղղված ջանքերը:
- Հարկավոր է հետ շրջել անտառահատումների, անապատացման և ջրային ռեսուրսների գերշահագործման միտումները: Շեշտը պետք է դրվի վերականգնման վրա:
- Սևանա լիճը պետք է պահպանվի որպես համաձայնեցված քաղաքականությունների առարկա և մնա ծրագրերի ուշադրության կենտրոնում: Անտառները, աղակալած հողերը և ստորերկրյա ջրային պաշարները պետք է նույնպես մնան պետական մարմինների ուշադրության կենտրոնում:
- Հարկավոր է փոխկապակցել և զարգացնել կոշտ թափոնների կառավարումը, վերականգնող տնտեսության, կայուն արտադրության և սպառման մոտեցումները:
- Հարկ է ընդլայնել քաղաքացիների, քաղծառայողների և գործարար շրջանակների կրթումն ու իրազեկությունը շրջակա միջավայրի պահպանման և բնական միջավայրի հետ մարդկային գործունեության կապի վերաբերյալ:

7. Տվյալներ

Սահմանված թիրախների գծով արձանագրած առաջընթացի չափագրման առաջնային նախապայմանների շարքում կարևոր տեղ են զբաղեցնում որակյալ, հասանելի, յուրաժամ և հուսալի մանրամասն տվյալները: Ցանկալի կլիներ, որ ԿԶՆ-ների թիրախների համար ցուցանիշներ սահմանելուց առաջ ՀՀ ազգային վիճակագրական ծառայությունն ընդուներ պարզ մեթոդաբանություն, իսկ անհրաժեշտ տվյալների հավաքագրման համար պատասխանատու բաժինը՝ ժամանակի ընթացքում օգտագործեր նույն համադրելի մեթոդաբանությունը: Բացի այդ, նշված մեթոդաբանությունը պետք է շաղկապել նույն ցուցանիշների չափման միջազգային մոտեցումների հետ: Պահանջվում են որոշակի գործողություններ, որպեսզի Հայաստանի Հանրապետության հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագրում և միջազգային ԿԶՆ-ների ներքո սահմանված թիրախների շրջանակներում առաջընթացի, նվաճումների և մարտահրավերների չափման համար անհրաժեշտ տվյալները լինեն պարզ ու հասկանալի, ինչպես նաև ունենան հուսալի աղբյուրներ և գնահատման մեթոդաբանություն:

75 «Հետ-2015» զարգացման օրակարգ, Հայաստանի Հանրապետության ազգային խորհրդակցություններ «Ապագան, որ մենք ուզում ենք» (2013թ.) և «Հետ-Ռիո+20» ռազմավարական փաստաթուղթ (2015թ.)